Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5080

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ

Հ. ԻԲՍԷՆ

ՀՐԱՇԱԼԻՈՒՄԵԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐԸ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՓԻԼԻՊՅՈՍ

ՊԱՅ

Ի. ԱՐԱՔԵԼԵԱՆԻ

839·82
Ի-15

839.82
Ի-15

03 AUG 2005
23 SEP 2009
1 83
Ի-15Ֆ.

ՀԵՆՐԻԿ ԻԲՍԷՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐԸ

Դրամա չորս գործողութեամբ

Գերմ. թարգմ. Հ. ԲԱԲԱՅԵԱՆ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՆԵՐ

2460/8

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
VIII
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

ԲԻԲԼԻՈԹԵԿԱ

ԹԻՖԼԻՍ
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Մադաբեան փողոց, № 15
1904 (38)

-2 6 APR 2013
5080

Дозволено Цензурою, 18 Августа 1904 г., г. Тифлисъ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
Մասնաճյուղ
Մասնաճյուղ

4202-78

ՀԵՆՐԻԿ ԻԲՍԷՆ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

—

Բերնիկ՝ քաղաքապետ։
Բետտի՝ նրա կինը։
Օլաֆ՝ նրանց որդին, 13 տարեկան։
Օրիորդ Բերնիկ՝ քաղաքապետի քոյրը։
Յովհաննէս Թիոննեսէն՝ տիկին Բերնիկի կրտսեր եղբայրը։
Օրիորդ Հեսսէլ՝ նրա մեծ խորթ քոյրը։
Հիլմար Թիոննեսէն՝ տիկին Բերնիկի հօրեղբօր որդին։
Ռոլանդ՝ քարոզչի օգնական։
Ռումմէլ՝ վաճառական։
Տիկին Ռումմէլ։
Օրիորդ Ռումմէլ։
Վիգելանդ } վաճառականներ։
Ալտշտէդ }
Դինա-Դորֆ՝ քաղաքապետ Բերնիկի տանը ապրող մի մատաղահաս օրիորդ։
Քրաստ՝ քաղաքապետի քարտուղարը։
Աուլէր՝ նաւագործ։
Լինդէն՝ դօքտօրի կինը։
Տիկին Հոլդ՝ փոստի տնօրէնի կինը։
Օրիորդ Հոլդ։
Քաղաքացիներ, օտար ծովազնացներ եւ այլն։

Գործողութիւնը կատարվում է Նորվեգիայի մի փոքրիկ ծովեզրեայ քաղաքում՝ քաղաքապետ Բերնիկի տանը։

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

—

Քաղաքապետի տան ձմեռային այգու մեծ սալոնը։ Նախաբեմում ձախ դուռն, որը տանում է քաղաքապետի սենեակը։ Նոյն գծի վրայ դարձեալ մի դուռ։ Աջ կողմում մէջ տեղը գլխաւոր եւ մեծ դուռը։ Հանդիսականների դիմացի պատը գրէթէ ամբողջապէս հայելու ապակի է. այս պատի վրայ գտնուող դուռը տանում է դէպի պարտէզի սանդուխքը, որի գլուխը ծածկուած է տանիքով։ Սանդուխքից երեւում է վանդակապատ պարտէզը, ուր նմանապէս մի փոքրիկ դուռ կայ։ Վանդակապետի ետեւը ընկած է մի փողոց, որի միւս կողմում շինուած են փոքրիկ, բաց գոյնով ներկած տներ։ Մի տաք օր է։ Փողոցով երբեմն անցնում են մարդիկ, որոնք կանգ են առնում եւ միմեանց հետ խօսում։ Փողոցի սնկիւնում մանրավաճառի մի խանութ կայ, որտեղից անցորդները քան են գնում եւ հեռանում։ Սալոնի սեղանի շուրջը բոլորում է կանանց մի ընկերութիւն։ Սեղանի առջեւը՝ մէջտեղում նստած է տիկին Բերնիկը։ Նրանից ձախ, Հոլդն իւր աղջկայ հետ, յետոյ տիկին եւ օրիորդ Ռումմէլը։ Տիկին Բերնիկի աջ կողմում նստած են տիկին Լինդէն, օրիորդ Բերնիկը եւ Դինա-Դորֆը։ Բոլոր տիկինները ձեռագործով են զբաղուած։ Սեղանի վրայ ընկած են սպիտակեղէնների, կտաւի, նաեւ այլ հագուստների կտորներ։ Յետեւի կողմում, մի փոքրիկ սեղանի վրայ դրուած են մի բաժակ շնաբարաջուր եւ ծաղկաման-ներ. այս սեղանի մօտ նստած է քարոզչի օգնական Ռոլանդը, որը մի ոսկէզօծ կաղմով գիրք է կարդում. հիւրերը նրա կարդացածից միայն առանձին խօսքեր են լսում։ Դուրսը, պարտիզում վազվզում է Օլաֆ Բերնիկն, որն իւր աղեղից նետով նշան է խփում։ Ռոլանդի կարդալու

ժամանակ, աջ դռնից դալիս է նաւագործ Աուլէրը։ Ընթերցանութիւնը մի բոպէ խանդարւում է։ Տիկին Բերնիկը Աուլէրին նշան տալով ակնարկում է ձախ դուռն։ Աուլէրը հանդարտ դնում է դէպի քաղաքապետի սենեակը եւ կամաց բաղխում է դուռը։ Քարտուղար Քրապը գըլխարկն եւ մի քանի թղթեր ձեռին քաղաքապետի սենեակից դուրս է դալիս։

Քրապ. Ա՜հ դուք էք։

Աուլէր. Պարոն քաղաքապետը կամենում էր ինձ տեսնել։

Քրապ. Այո, բայց այժմ նա չէ կարող ձեզ ընդունել, նա ինձ պատուիրեց...

Աուլէր. Ձի՞զ։ Ես կը նախապատուէի...

Քրապ. ... Ինձ պատուիրեց ձեզ ասելու, որ բանւորների համար շաբաթ օրերը նշանակուած դասախօսութիւնները պէտք է ընդհատուին։

Աուլէր. Մի՞թէ։ Ես ենթադրում էի, թէ կարող եմ ազատ ժամերս նոյնպէս գործադրել...

Քրապ. Դուք ձեր ազատ ժամերով չպիտի մարդկանց ազատութիւնը խանգարէք։ Անցեալ շաբաթ օրը դուք դասախօսել էք մեքենաների վնասակարութեան մասին և պարսաւել էք նաւաշինարանում տիրող նոր կարգերը, որոնք ձեր հայեցողութեամբ բանւորներին վնաս են հասցնում։ Ինչո՞ւ էք այդպէս անում։

Աուլէր. Հասարակութեան շահերը պաշտպանելու համար։

Քրապ. Եւ այդ նկատելի է։ Քաղաքապետը համոզուած է, որ դրանից հասարակութեան հիմունքներն են աւերւում։

Աուլէր. Իմ հասարակութիւնը և քաղաքապետի ակնարկած հասարակութիւնը բաւականին տարբեր գաղափարներ են։ Իբրև «բանւորների դաշնակցութեան» ներկայացուցիչ, ես...

Քրապ. Նախ և առաջ դուք քաղաքապետ Բերնիկի նաւաշինարանի ներկայացուցիչն էք։ Եւ ձեր առաջին պարտականութիւնն է նպաստել Բերնիկի գործարանի շահերին, որովհետև մենք նրա շնորհիւ ենք ապրում։ Դէ՜հ, այժմ կարծեմ հասկանում էք, թէ քաղաքապետը ի՞նչ ունէր ձեզ հաղորդելու։

Աուլէր. Քաղաքապետը այդ բանը այդ ձևով չէր ասիլ, պարոն քարտուղար։ Ես հասկանում եմ, թէ ո՞վ է այդ բարոյի հեղինակը. այն անիծուած ամերիկացին է. մարդիկ ուզում են, որ մենք էլ նրանց պէս աշխատենք և...

Քրապ. Այո, այո, այո. ես մանրամասնութիւնների մասին չեմ կարող խօսել։ Բաւական է, որ դուք քաղաքապետ Բերնիկի կարծիքը գիտէք։ Նեղութիւն կրէք գործարան վերադառնալ, որովհետև դուք այնտեղ անշուշտ հարկաւոր էք, ես էլ իսկոյն գալիս եմ։ Ներեցէք, տիկիններ։ (Ողջունում է կանանց եւ պարտիզով դնում է փողոց։ Աուլէրը հեռանում է աջ դռնով։ Բորլանդը, որը այդ մեղմ խօսակցութեան ժամանակ իւր ընթերցանութիւնը շարունակում էր, շուտով վերջացնում եւ աղմուկով ծածկում է գիրքը։)

Բորլանդ. Արդ, յարգելի տիկիններ, արդէն պատմութիւնը վերջացած է։

Տիկ. Ռումմել. Ա՜խ, ինչպիսի կրթիչ պատմութիւն էր։

Տ. Հոլդ. Եւ այնպէս բարոյական։

Տ. Բերնիկ. Այդպիսի մի գիրք իրօք ստիպում է շատ մտածել։

Բորլ. Այո, այո։ Այս գրուածքը մի ուրախալի հակապատկեր է այն բոլոր գրուածների, ինչ որ մեզ դժբախտաբար շատ են տալիս ամեն օր օրաթերթերը և հանդէսները։ Ի՞նչ է իսկապէս ծածկուած բարձրագոյն հասարակութեան ոսկեզօծ և կեղծ արտաքինի տակ, որով նա պարծենում է։ Դատարկութիւն և ծուլութիւն։ Այդ հասարակութեան ոտքերի տակ բարոյական հող չկայ. մի խօսքով ներկայ բարձրը հասարակութիւնը նման է զարդարուած շիրիմների։

Տ. Հոլդ. Դառը ճշմարտութիւն։

Տ. Ռում. Հենց նայենք այժմ այստեղ եկած ամերիկացի ծովագնացներին։

Բորլ. Ե՛ս չեմ ուզում մարդկութեան այդպիսի դիրքի մասին բոլորովին խօսել։ Հէնց բարձր շրջանները,—ինչ են նրանք ներկայացնում։ Ամեն տեղ կասկած, մտքերի յուզմունք, սրտերի չարութիւն և հայեացքների տատանումն։ Միթէ այդ շրջաններում կա՞յ անխախտ ընտանեկան առաքինութիւն։ Աւերման յանդուգն ոգին ձգտում է խորտակել անգամ ամենավսեմ ճշմարտութիւնները։

Դինա Դորֆ. (առանց նրանց նայելու) Բայց միթէ նրանց մէջ վեհ և գեղեցիկ երևոյթներ չե՞ն արտայայտւում։

Բորլ. Վեհ և գեղեցիկ երևոյթնե՞ր... Ես չեմ հասկանում... (Զարմացած)։ Բայց Աստուած իմ, Դինա...

Տ. Ռում. (միաժամանակ) Բայց, Դինա, ինչպէ՞ս ես համարձակւում...

Բորլ. Հաղիւ թէ մեզ բարիք լինէր, եթէ այդ վեհ և գեղեցիկ բաները մեր մէջ ևս արձագանք գտնէին։ Ո՛չ, մենք Աստուծուց պէտք է գոհ լինինք, որ մեզ մօտ այդպիսի բաներ չկան։ Բայց դժբախտաբար այստեղ էլ մոլախոտը ցորենների մէջ բազմանում է, թէև մենք ճիգ ենք թափում նրանց արմատախիլ անելու։ Մեր պարտականութիւնն է, տիկիններ, հասարակութեան մաքրութիւնը պահպանել և նրանից հեռացնել վտանգաւոր տարրերը։

Տ. Հոդ. Դժբաղդաբար այդպիսի տարրեր մեզ մօտ էլ շատ կան։

Տ. Ռում. Այո՛, անցեալ տարի քիչ էր մնացել, որ մենք այստեղ երկաթուղի ունենայինք։

Տ. Բեր. Այդ բանը Բերնիկը խանգարեց։

Բորլ. Ո՛չ թէ նա, այլ Նախախնամութիւնը, տիկին Բերնիկ։ Հաւատացէք, որ այդ դէպքում ձեր ամուսինը միայն տիեզերքը ղեկավարողի ձեռքին մի գործիք էր։

Տ. Բեր. Չնայած այդ բանին, լրագիրները նրա մասին շատ աննպաստ յօդուածներ գրեցին։ Սակայն մենք մոռանում ենք ձեզանից շնորհակալ լինելու։ Որչափ դուք բարի էք, որ մեզ համար այդքան ժամանակ էք զոհում։

Բորլ. Խնդրեմ, դուք գիտէք, որ այժմ արձակուրդ է...

Տ. Բեր. Բայց այնուամենայնիւ դա զոհաբերութիւն է, պարոն քարոզիչ։

Բորլ. (իւր ամբոր մոտեցնում է) Խնդրեմ այդ բանի մասին էլ չը խօսէք, տիկին Բերնիկ։ Միթէ դուք ընդհանուրի համար չէ՞ք զոհուիլ և այն էլ սիրով ու ինքնայօժար։ Բարոյապէս ապականուած կանայք, որոնց ուղղելու համար ենք մենք աշխատում, նման են պատերազմի դաշտում վիրաւորուած զինուորներին. իսկ դուք, տիկիններ, դուք սարկաւագուհիներ, ողորմած քոյրեր էք, դուք պէտք է այդ թշուառների համար սպեղանի պատրաստէք և ընքշութեամբ նրանց վէրքը փաթաթէք, խնամէք և բուժէք։

Տ. Բեր. Ամեն ինչ այդպէս լուսաւոր գոյներով տեսնել՝ Աստուածային մեծ պարգև է։

Բորլ. Այդ տեսակէտից շատ բան է մեզ շնորհուած, ընծային պարգև է, իսկ միւսներն էլ հնարաւոր է ձեռք բերել։ Բայց առաւելապէս անհրաժեշտ է խորը թափանցել կեանքի մէջ... Այդ առթիւ դուք ի՞նչ էք ասում, օրիորդ Բերնիկ, արդեօք դուք չէ՞ք զգում, որ այն ժամանակից ի վեր, երբ դուք ձեզ դպրոցին նուիրեցիք, աւելի հաստատ հողի վրայ էք կանգնած։

Օրդ. Բեր. Չգիտեմ ինչ պատասխանեմ։ Երբեմն դպրոց գնալիս ցանկանում եմ այստեղից հեռանալ և փոթորկալից ծովի վրայ լինել...

Բորլ. Ա՜, սիրելի օրիորդ, դրանք փորձութիւններ են։ Այդ անհանգիստ, յուզող հիւրերին անհրաժեշտ է հալածել... Հարկաւ, դուք փոթորկալից ծով ասելով, բառացի չէ՞ք հասկանում, այլ այն ալեկոծուող, աղմկալի հասարակութիւնը, որի անդամներից շատերը խորտակւում են։ Միթէ այն հեռու երկիրներում եռացող կեանքը յիրաւի ձեզ հրապուրո՞ւմ է։ Դէթ փողոց նայեցէք, ուր արեգակի կիզիչ ճառագայթների տակ մարդիկ քրտնած թափառում են և իրենց փոքրիկ հոգսերով տանջւում։ Ո՛չ, մեր վիճակը աւելի նախան-

ձելի է, երբ մենք, հով սենեակում նստած, մէջքներս դարձրել ենք դէպի գայթակղութիւնները։

Օրդ. Բեր. Այո, դուք իրաւացի էք։

Բորլ. Եւ մանաւանդ մի այնպիսի լաւ ու հաճելի տան մէջ, ուր տիրում է միայն խաղաղութիւն, համերաշխութիւն, ուր ընտանեկան կեանքը գեղեցիկ է և գրեթէ իդէալական։ (Դառնում է տիկին Բերնիկին)։ Ի՞նչին էք ականջ դնում, տիկին Բերնիկ։

Տ. Բեր. (դառնում է դէպի ծախ դուռը) Նրանք շատ բարձր ձայնով են խօսում։

Բորլ. Անշուշտ մի կարևոր գործ է։

Տ. Բեր. Չգիտեմ։ Բայց ինչպէս լսում եմ, ամուսնուս մօտ մարդ է եկել։ (Հիլմար Թիոննեսէնը սիգարը բերնում մտնում է աջ դռնից եւ կանանց նկատելով, կանգնում է)։

Հիլմար. Օհ՜, ներեցէք։ (Կամենում է յետ քաշուիլ)։

Տ. Բեր. Ո՛չ, մօտեցէ՛ք, Հիլմար, դու չես խանգարում։ Գուցէ մի որ և է բան էիր ուզում։

Հիլմ. Ոչ... ես ուզում էի միայն նայել։ Ողջոյն, տիկիններ։ (Բերնիկին) Ա՛րդ, դրանից ի՞նչ պէտք է դուրս գայ։

Տ. Բեր. Ինչի՞ց։

Հիլմ. Չէ՞ որ Բերնիկը խորհրդի է հրաւիրել։

Տ. Բեր. Իրո՞ք։ Ինչո՞ւ։

Հիլմ. Երկաթուղու մասին եղած խարդախութիւնը նորից երևան է եկել։

Տ. Ռում. Ա՜խ, միթէ կարելի՞ է։

Տ. Բեր. Խեղճ Բիխարդ... մի՞թէ նա նորից պիտի տհաճութիւններ լսէ...

Բորլ. Բայց այդ ի՞նչ է նշանակում, պարոն Թիոննեսէն։ Չէ՞ որ քաղաքապետ Բերնիկն անցեալ տարի շատ պարզ կերպով հասկացրեց, որ ինքը երկաթուղի չէ ուզում։

Հիլմ. Այո, սակայն Քրասն իսկոյն ինձ հաղորդեց, որ երկաթուղու հարցը նորից է ծագել և թէ այժմ խորհրդակցում են մեր քաղաքի երեք դրամատէրերի հետ։

Տ. Ռում. Ինձ թուաց, որ ես ամուսնուս ձայնը լսեցի։

Հիլմ. Ի հարկէ պարոն Ռումէլն էլ է այնտեղ... նոյնպէս վաճառական Ալտշտեդն և Ռայնիք Վիգելանդը... կամ ռամկական ոճով «Սուրբ Ռայնիքէն»։

Բորլ. Հը՜մ...

Հիլմ. Ներողութիւն, պարոն քարոզիչ։

Տ. Բեր. Մինչդեռ մեզ մօտ ամեն ինչ հանգի՞ստ և խաղաղ էր...։

Հիլմ. Իսկ ինչ ինձ է վերաբերում, ես ընաւ չեմ հակառակիլ, եթէ նրանք այդ երկաթուղու գծի պատճառով իրարու միսն ուտեն։ Գոնէ մասնաւոր զուարճութիւն կը լինէր։

Բորլ. Ընդհակառակն մարդ պէտք է խոյս տայ այդպիսի զուարճութիւններից։

Հիլմ. Նայած թէ ինչ մարդ է։ Մարդկային շատ բնաւորութիւններ ժամանակ առ ժամանակ յուզող կռիւների կարիք են զգում. դժբախտաբար մեր գաւառական քաղաքում այդ տեսակ երևոյթներ տեղի չեն ունենում, և ամեն մարդ չէ կարող... (Թերթելով քարոզչի գիրքը)։ Գլուխ Թ., «Կինը որպէս հասարակութեան սպասաւոր»։ Այս ի՞նչ ցանցառութիւն է։

Տ. Բեր. Ասու

՞ած իմ, Հիլմար խնդրեմ այդպէս չխօսես։ Անկասկած դու այդ գիրքը չես կարդացել։

Հիլմ. Ո՛չ, Տէրը ինձ ազատէ։

Տ. Բեր. Կարծեցի դու լաւ չես տրամադրուած։

Հիլմ. Այո, մասամբ։

Տ. Բեր. Գուցէ այս գիշեր անհանգի՞ստ ես քնել։

Հիլմ. Այո, չափազանց։ Հիւանդութեանս պատճառով ես երեկ երեկոյեան փոքրիկ զբօսանք կատարեցի, յետոյ նստեցի հասարակաց ժողովարանում և դէպի հիւսիսային բևեռը կատարուած մի ճանապարհորդութեան նկարագրութիւնը կարդացի։ Մի տեսակ նեարդերն ուժեղանում են, երբ հետևում ես այն կռուին, որ մարդս մղում է բնութեան տարրերի հետ։

Տ. Ռում. Բայց ինչպէս երևում է այդ նկարագրութիւ-

նը ձեզ վրայ լաւ տպաւորութիւն չէ թողել, պարոն Թիոն-
նեսէն։

Հիլմ. Ձեր ենթադրութիւնը ճշմարիտ է, տիկին Ռուս-
մէլ։ Ամբողջ գիշերը կիսաքուն ես թաւալում էի, և երա-
զումս ինձ մի կատաղի ծովացուլ հալածում էր։

Օլաֆ. (պարտիզի սանդուխքով դալիս է)։ Ինչպէ՞ս, ինչպէ՞ս,
քեռի, քի՞զ էր ծովացուլը հալածում։

Հիլմ. Երազումս, յիմարի գլուխ։ Իսկ դու դեռ շարու-
նակում ես այդ ծիծաղելի աղեղո՞ւն խաղալ։ Ինչո՞ւ իսկական
զէնք չես գործածում։

Օլաֆ. Ես սիրով կը ցանկայի, բայց...

Հիլմ. Իսկական զէնքը էլի միաք ունի, գոնէ մարդուս
նեարդները լարւում են, երբ այդպիսի զէնք ես արձակում։

Օլաֆ. Ես այն ժամանակ արջերի վրայ կարող էի ար-
ձակել, քեռի։ բայց հայրիկը թոյլ չէ տալիս։

Տ. Բեր. Հիլմար, խնդրեմ նրան այդպիսի գաղափարներ
չքարոզես։

Հիլմ. Ա՜յ քեզ սերունդ։ Միշտ խօսում են վարժու-
թիւնների և ճարպիկութեան մասին... այն ինչ, Աստուած
իմ, բոլորը խաղ ու կատակ է։ Ո՞ւր է այժմ այն բնածին
քաջութիւնը, որ վեհութեամբ և անելկիւղ վտանգի աչքե-
րին է նայում—տխմար, ինչ ես ինձ նշան դրել, կարո՞ղ ես
արձակել։

Օլաֆ. Մէջը նետ չկայ, քեռի։

Հիլմ. Դու այդ չես կարող իմանալ, դուցէ և կայ։ Հե-
ռացրու, ասում եմ քեզ... Գրո՞ղը տանի քեզ, ինչո՞ւ հօրդ
նաւերից մէկով Ամերիկա չես գնացել։ Այնտեղ դու գոնէ
կարող էիր տեսնել գոմէշների որսը կամ հնդիկների կռիւը։

Տ. Բեր. Բայց, Հիլմար...

Օլաֆ. Այո՛, ես այդ սիրով կը ցանկանայի, քեռի։ Ես
կարող էի այնտեղ քեռի Յովհաննէսին և ժօրաքոյր Լոնային
փնտռել։

Հիլմ. Հը՜մ...

Տ. Բեր. Օլաֆ, բաւական է, հիմա գնա պարտէզ։

Օլաֆ. Իսկ փողո՞ց, նո՞յնպէս կարելի է գնալ, մայրիկ։

Տ. Բեր. Այո՛, բայց այնտեղ երկար չմնաս։ (Օլաֆը պար-
տիզի պարսպի փոքրիկ դռնով փողոց է դուրս գալիս)։

Բոլ. Պարոն Թիոննեսէն, մանկան գլուխը այդպիսի
ցնորքներ մի՛ մտցնէք։

Հիլմ. Հարկա՛ւ, որդին միշտ տանը պէտք է մնայ և շա-
տերի նման ապագայում ծածկամիտ դուրս գայ։

Բոլ. Բայց ինչո՞ւ դուք էլ չէք ճանապարհորդում։

Հիլմ. Ե՞ս, հանդերձ իմ հիւանդութեամբ։ Ի հարկէ այս
քաղաքում սրան ոչ ոք առանձին նշանակութիւն չէ տալիս։
Բայց այնուամենայնիւ իւրաքանչիւր մարդ որոշ պարտա-
կանութիւններ ունի կատարելու դէպի այն հասարակութիւ-
նը, որի մէջ նա ապրում է։ Այստեղ գոնէ պէտք է լինի մէ-
կը, որը կարողանայ մտաւոր զարգացողութեան և գաղափա-
րի դրօշակը բարձր պահել... ուֆ, ինչպէ՞ս էլի գոռում է։

Տիկիններ. Ո՞վ է գոռում։

Հիլմ. Ա՜խ, ես չգիտեմ։ Այնտեղ աղմուկ կայ և այդ իմ
ջղերն է գրգռում։

Տ. Ռում. Անկասկած ամուսինս կը լինի, պարոն Թիոն-
նեսէն։ Նա այն աստիճան ընտելացել է այդպիսի բազմա-
մարդ ժողովներում խօսել...

Բոլ. Ասենք միւսներն էլ այնքան մեղմ ձայնով չեն
խօսում։

Հիլմ. Շատ բնական է. երբ հարցը գրպանի պաշտպա-
նութեանն է վերաբերում, այն ժամանակ... Այստեղ ամենքը
նիւթական, մանր հաշիւներով են զբաղուած։ Հը՜մ։

Տ. Բեր. Գոնէ այդ աւելի նախապատուելի է, քան ա-
ռաջուանը, երբ մարդիկ միայն զուարճանում էին և կորուստ-
ներ ունենում։

Տ. Լինգեն. Մի՞թէ առաջ այդպէս վատ էր։

Տ. Ռում. Ես ձեզ կարող եմ ապահովացնել, որ ճշմա-
րիտ այդպէս էր, տիկին։ Դուք բաղդաւոր էք, որ այն ժա-
մանակ այստեղ չէիք ապրում։

Տ. Հոլդ. Այո, շատ բան այժմ փոխուած է։ Երբ մտաբերում եմ դեռահասութեան օրերս...

Տ. Ռում. Բաւական է միայն յիշէք, թէ ինչ էր 14 կամ 18 տարի առաջ։ Ողորմած Տէր, այն ինչ կեանք էր։ Այն ժամանակ մենք այստեղ ունէինք պարի և երաժշտական ժողովարաններ...

Տ. Բեր. Իսկ դրամատիքական ակումբը, որն ես շատ լաւ եմ յիշում։

Տ. Ռում. Այո, այդ ակմբում ձեր գրուածքը ներկայացրուեց, պարոն Թիոննեսէն։

Հիլմ. (գնում է դէպի քեմի խորքը) Ա՜խ, ինչ...

Բոբ. Թիոննեսէնի գրուածքը։

Տ. Ռում. Դուք դեռ այստեղ չէիք եկել, պարոն քարոզիչ... Այդ գրուածքը միայն մի անգամ ներկայացրին։

Տ. Լինգ. Այդ այն գրուածքը չէ՞, տիկին Ռումմէլ, որի մասին դուք ինձ պատմեցիք, թէ սիրուհու դերը կատարել էք։

Տ. Ռում. (ծածուկ նայում է քարոզչին) Ե՞ս. ճշմարիտ չեմ մտաբերում, բայց լաւ յիշում եմ, թէ այն ժամանակ ընտանիքներում ինչպէսի աղմկալի և ուրախ կեանք էր եռում։

Տ. Հոլդ. Աստուած իմ, այն ժամանակ մի քանի տներում նոյն իսկ շաբաթական երկու հանդիսաւոր երեկոյթներ էին տրւում։

Տ. Լինգ. Այն ժամանակ այստեղ դերասանական խումբ էլ կար...

Տ. Ռում. Այո, և վատթարագոյնը հէնց այդ էր...

Տ. Հոլդ. (անհանգիստ) Հը՜մ, հը՜մ...

Տ. Ռում. Դերասանները։ Ես չեմ մտաբերում։

Տ. Լինգ. Այո և նրանք կարծեցէք շատ յիմար բաներ արած պէտք է լինին։ Բայց ինչ էր պատահել։

Տ. Ռում. Իսկապէս ոչինչ, տիկին։

Տ. Հոլդ.
Տ. Բեր. } Սիրելի Դինա, տուր ինձ այն կտաւի կը-
տորը։ Դինա, հոգեակս, գնա խոհանոց և
Թէտէին ասա սուրճ բերի։

Օր. Բեր. Ես գալիս եմ քեզ հետ, Դինա։ (Դինա եւ օր. Բերնիկը ձախ դռնով դուրս են գնում)։

Տ. Բեր. (վեր է կենում) Տիկիններ, ներեցէք, կարծեմ սուրճը դրսում կը խմենք։ (Տիկին Բերնիկը գնում է պարտէզ եւ սեղան պատրաստում. քարոզիչը դրան մօտ կանգնած խօսում է տիկին Բերնիկի հետ։ Հիլմարը նստած ծխում է)։

Տ. Ռում. (ցածրաձայն) Աստուած իմ, բայց դուք ինչպէս վախեցրիք, տիկին։

Տ. Լինգ. Ե՞ս։

Տ. Հոլդ. Այո... Բայց հէնց դուք սկսեցիք, տիկին Ռումմէլ։

Տ. Ռում. Ե՞ս։ Ո՛չ, ինչ էք ասում, տիկին Հոլդ։ Ես բառ անգամ չեմ արտասանել։

Տ. Լինգ. Բայց հարցը իսկապէս ինչո՞ւմն է։

Տ. Ռում. Ինչպէ՞ս կարողացաք սկսել... մտածեցէք... Միթէ չնկատեցի՞ք, որ Դինան այստեղ էր։

Տ. Լինգ. Դինա՞ն։ Բայց, Աստուած իմ, միթէ՞ նա...

Տ. Հոլդ. Եւ մանաւանդ այս տանը։ Միթէ չէ՞ք իմանում, որ տիկին Բերնիկի եղբայրն էր...

Տ. Լինգ. Ինչպէ՞ս... Ես ոչինչ չեմ իմանում, որովհետև քիչ ժամանակ է, որ այստեղ եմ...

Տ. Ռում. Միթէ չէ՞ք լսել, որ... Հը՜մ. (Իւր աղջկան)։ Հիլդա՛, դու կարող ես պարտէզ գնալ։

Տ. Հոլդ. Դու նոյնպէս Նէտտա։ Միայն Դինայի հետ ընկերաբար վարուիր... (Օրիորդ Ռումմէլն եւ Նէտտա Հոլդը պարտէզ են գնում)։

Տ. Լինգ. Սակայն, ինչ է պատահել տիկին Բերնիկի եղբօր հետ։

Տ. Ռում. Միթէ չգիտէ՞ք, որ նա է խայտառակութեան տխրահռչակ հերոսը։

Տ. Լինգ. Հիլմար Թիոննեսէնը խայտառակութեան պատճառն էր...

Տ. Ռում. Աստուած իմ, ոչ, տիկին Լինգէն, Հիլմարը

տիկին Բերնիկի հօրեղբօր որդին է, իսկ ես խօսում եմ նրա հարազատ եղբօր մասին...

Տ. Հոլդ։ Անառակ Թիոննեսէնի՞ մասին...

Տ. Ռում. Նրա անունը Յովհաննէս էր։ Նա Ամերիկա գաղթեց։

Տ. Հոլդ. Նա ստիպուած էր փախչել։

Տ. Լինգ. Ուրեմն նրա հե՞տ պատահեց խայտառակութիւնը...

Տ. Ռում. Այո՛ նա էր. ինչպէ՞ս ասեմ ձեզ... Նա Դինայի մօր հետ որոշ յարաբերութիւն ունէր։ Ո՞հ, ես այդ լաւ յիշում եմ, կարծես թէ երեկ է պատահել... Յովհաննէս Թիոննեսէնը այն ժամանակ ծառայում էր պառաւ տիկին Բերնիկի գրասենեակում. Ռիխարդ Բերնիկը Փարիզից նոր էր վերադարձել և դեռ չէր նշանուել...

Տ. Լինգ. Այո՛, բայց այդ խայտառակութիւնը...

Տ. Ռում. Տեսէք, հէնց այդ ձմեռը Միլլէրի դերասանական խումբը այստեղ էր...

Տ. Հոլդ. . . . Եւ այդ խմբի մէջ էր նոյնպէս դերասան Դորֆն իւր կնոջ հետ։ Բոլոր երիտասարդները գրեթէ իրանց խելքը կորցրել էին նրա համար։

Տ. Ռում. Այո՛, բայց Աստուած գիտէ, թէ ինչպէս կարող էին նրա գեղեցկութիւնը հաւանել։ Մի երեկոյ դերասան Դորֆը շատ ուշ տուն է գալիս...

Տ. Հոլդ. . . . Եւ բոլորովին անսպասելի...

Տ. Ռում. . . . Եւ հանդիպում է . . . Ո՛չ, անհնարին է պատմել։

Տ. Հոլդ. Ո՛չ տիկին, Ռումմել, նա ոչ ոքին չպատահեց, որովհետև դուռը ներսից փակ էր։

Տ. Ռում. Այո՛, ասեմ, դուռը փակած էր, և երևակայեցէք, մէկը պատուհանից թռչում է։

Տ. Հոլդ. Վերին յարկի պատուհանից։

Տ. Լինգ. Եւ դա տիկին Բերնիկի եղբա՞յրն էր։

Տ. Ռում. Այո՛, տիկին Բերնիկի եղբայրը։

Տ. Լինգ. Եւ նա Ամերիկա փախաւ։

Տ. Հոլդ. Նա ստիպուած էր Ամերիկա գնալու։

Տ. Ռում. Որովհետև, ի վերջոյ ուրիշ աւելի վատ բան պարզուեց. երևակայեցէք, նա դրամարկղն էր կողոպտել։

Տ. Հոլդ. Բայց, տիկին Ռումմել, այդ դեռ ապացուցուած չէ. գուցէ դրանք միայն բամբասանքներ են։

Տ. Ռում. Ի՞նչ էք ասում... միթէ՞ ամբողջ քաղաքին այդ յայտնի չէ, և միթէ այդ չէ՞ր պատճառը, որ պառաւ տիկին Բերնիկը համարեա թէ մնանկացաւ։ Ինձ հէնց Ռումմելն է պատմել։ Բայց Աստուած բերանս փակի, եթէ ես բամբասեմ։

Տ. Հոլդ. Բայց, յամենայն դէպս, տիկ. Դորֆը փող չատացաւ, որովհետև նա...

Տ. Լինգ. Այո՛, բայց ի՞նչպէս էր յետոյ Դինայի ծնողների դրութիւնը։

Տ. Ռում. Այնուհետև Դորֆը բոլորովին թողեց իւր կնոջն ու երեխային և գնաց իւր ճանապարհով։ Բայց կինը այնպէս յանդուգն էր, որ մի տարի ևս այստեղ մնաց։ Ի հարկէ նա այլևս չէր համարձակւում բեմի վրայ երևալ, և մի կտոր հաց էր վաստակում կարով ու լուացարարուհեամբ...

Տ. Հոլդ. Նա փորձեց պարի դասեր տալ։

Տ. Ռում. Եւ ի հարկէ չաջողուեց։ Ո՞ր ծնողները կարող էին վստահանալ այդպիսի մի կնոջ իրենց որդոց յանձնելու։ Բայց նա երկար չապրեց, մեր գեղեցկուհին անսովոր էր աշխատելու, շուտով կրծքացաւ ստացաւ և մեռաւ։

Տ. Լինգ. Եւ իրօք, ի՞նչ զզուելի խայտառակութիւն է։

Տ. Ռում. Այո՛, ուրեմն կարող էք երևակայել, թէ Բերնիկների համար ի՞նչ սարսափելի հարուած էր։ Մի խաւար բիծ նրանց երջանկութեան արեգակի վրայ, ինչպէս մի անգամ ամուսինս էր ասում։ Ուստի երբէք այդ անձի մասին այս տանը չյիշէք, տիկին Լինգէն։

Տ. Հոլդ. Ի սէր Աստուծոյ, խորթ քրոջ մասին էլ չխօսէք։

Տ. Լինգ. Միթէ տիկին Բերնիկը խորթ քո՞յր ունի։

ԱՌՈՒՄՊԵՏԱՐԱՆ ... Գրոս. Բիբլիոթեկ

Տ. Ռուս. Ունէր... Բարեբաղդաբար անցեալում, որովհետև այժմ այդ ազգակցական կապերը քակուած են։ Երևակայեցէք նա կարճ մազեր էր պահում և անձրևային եղանակին տղամարդկանց կօշիկներ հագնում։

Տ. Հոլդ. Իսկ երբ նրա խորթ եղբայրը, այն մոլորեալ հոգին Ամերիկա փախաւ, և ի հարկէ ամբողջ քաղաքը վերդովուած էր այդ անցքից, ինչ էք կարծում, ինչ արաւ նա. նա էլ նրա ետևից գնաց։

Տ. Ռուս. Այո, բայց իւր մեկնելուց առաջ արած խոստառակութիւնը, տիկին Հոլդ։

Տ. Հոլդ. Սուս, դրա մասին մի խօսէք։

Տ. Լինգ. Ատուած իմ, մի՞թէ մի այլ միջնադէպք ևս պատահեց։

Տ. Ռուս. Այո, տիկին, ահա լսեցէք։ Ռիխարդ Բերնիկը նոր նշանուած էր Բետի Թիոննեսէնի հետ, և երբ այդ զոյգը գալիս էր յայտնելու, թէ իրանք նշանուած են...

Տ. Հոլդ. Դուք պէտք է իմանաք, որ Թիոննեսէնները որբեր էին...

Տ. Ռուս. Նոյն վայրկեանին Լոնա Հեսսէլը տեղից բարձրանալով, մի այնպիսի բարձրաձայնիւն ապտակ է տալիս գեղեցկատեսիլ Ռիխարդ Բերնիկին...

Տ. Լինգ. Մի՞թէ... չլսուած...

Տ. Հոլդ. Այո, այդպէս էր։

Տ. Ռուս. Յետոյ նա կապեց պարկերը և Ամերիկա գընաց։

Տ. Լինգ. Մի գուցէ Լօնան էլ Ռիխարդի վրայ աչք է ունեցել։

Տ. Ռուս. Իսկ և իսկ. նա երևակայում էր, որ Ռիխարդը Փարիզից վերադառնալուց յետոյ իրեն առաջարկութիւն կանէ։

Տ. Հոլդ. Տեսէք, ինչ երևակայութիւն է։ Բերնիկն, այդ փայլուն և վայելուչ երիտասարդը, բոլոր կանանց սիրելին...

Տ. Ռուս. Եւ ժանաւանդ այնպէս համեստ ու բարոյական։

Տ. Լինգ. Բայց ի՞նչ եղաւ Ամերիկայում օրիորդ Հեսսէլը։

Տ. Ռուս. Այդ արդէն անյայտութեան քողով է ծածկուած, ինչպէս նկատեց մի անգամ ամուսինս, և հազիւ թէ երբ և իցէ բացուի։

Տ. Լինգ. Ինչպէ՞ս։

Տ. Ռուս. Նա միանգամայն խզեց բոլոր կապերը ընտանիքի հետ, թէև ամբողջ քաղաքը գիտէր, որ նա վարձով երգելիս է եղել զանազան պանդոկներում։

Տ. Հոլդ. Եւ դասախօսութիւններ կարդացել...

Տ. Ռուս. Եւ մի անիմաստ գիրք է յօրինել։

Տ. Լինգ. Մի՞թէ։

Տ. Ռուս. Այո, Լոնա Հեսսէլն ևս մի բիծ է Բերնիկների ընտանեկան երջանկութեան վրայ... Սակայն այժմ, տիկին Լինգէն, դուք ամեն ինչ գիտէք։ Վկայ է Ատուած, որ ես միայն ձեզ պատմեցի, որպէս զի դուք զգուշանաք։

Տ. Լինգ. Օ՜հ, անհոգ եղէք, ես կը զգուշանամ... Բայց խեղճ Դինա-Դորֆ. ինչպէ՞ս խղճում եմ նրան։

Տ. Ռուս. Նրա համար այդ կատարեալ երջանկութիւն է։ Երևակայացէք, ինչ կը լինէր նրա դրութիւնը, եթէ իւր ծնողների մօտ մնար։ Ի հարկէ մենք նրան հովանաւորեցինք և խրատեցինք հնարաւոր եղածին չափ։ Յետոյ, օրիորդ Բերնիկը նրան տեղաւորեց այս տանը։

Տ. Հոլդ. Բայց նրա հետ հաշտ ապրելը դժուար էր, մանաւանդ այն վատ օրինակներից յետոյ։ Հարկաւ մի այդպիսի աղջիկ մեր որդիների նման չէր կարող լինել...

Տ. Ռուս. Սուս... ահա նա գալիս է։ (Բարձրաձայն)։ Այո, Դինան ազնիւ օրիորդ է... Ա՜հ, դո՞ւ ես, Դինա։

Տ. Հոլդ. Ա՜հ, սիրելի Դինա, ինչ անուշահոտ սո՞ւրճ է։ Ճաշից առաջ այդպիսի մի բաժակ սո՞ւրճ...

Տ. Բեր. (պարտիզի սանդուխքից)։ Խնդրեմ, տիկիններ։ (Օր. Բերնիկն եւ Դինան աղախնի հետ քերում են սուրճի բաժակները։ Կանայք դուրսն են նստում եւ աշխատում են սիրալիր խօսակցել Դինայի հետ։ Մի քիչ յետոյ Դինան դալիս է սալօն եւ փնտռում է իւր ձեռագործը)։

Տ. Բեր. (սեղանի մօտից) Դինա, միթէ դու չէ՞ս կամենում...

Դինա. Ո՛չ, շնորհակալ եմ։ (Դինան նստում եւ սկսում է աշխատել։ Տիկին Բերնիկը քարոզչի հետ մի առժամանակ խօսում է, որից յետոյ Բորլանդը գալիս է սալօն)։

Բորլ. (մի բան որոնելով սեղանի վրայ, մեղմ ձայնով ասում է) Դինա։

Դինա. Ի՞նչ է։

Բորլ. Ինչո՞ւ չէք գնում նրանց մօտ։

Դինա Երբ ես սուրճ բերի, նկատեցի, որ այն օտար կանայք իմ մասին են խօսում։

Բորլ. Բայց միթէ դուք չնկատեցիք, թէ ի՞նչպէս նրանք սիրով են վարուում ձեզ հետ։

Դինա. Ահա հէնց այդ ինձ հաճելի չէ։

Բորլ. Դինա, դուք յամառ աղջիկ էք։

Դինա. Այո։

Բորլ. Բայց ինչո՞ւ։

Դինա. Այդպէս եմ ի բնէ ծնուած։

Բորլ. Բայց միթէ չէ՞ք կարող փորձել փոխուելու։

Դինա. Ո՛չ։

Բորլ. Պատճառը։

Դինա. (նայելով նրան) Չէ՞ որ ես պատկանում եմ բարոյապէս ապականուածներին։

Բորլ. Ի՞նչ էք ասում, Դինա։

Դինա. Մայրս նոյնպէս պատկանում էր բարոյապէս ապականուածներին։

Բորլ. Ո՞վ կարող էր այդ մասին ձեզ պատմել։

Դինա. Ոչ ոք. ինձ հետ չեն խօսում։ Ինչո՞ւ։ Նրանք ինձ հետ այն աստիճան զգոյշ են վարուում, իբր թէ ես կը փշրուեմ... Օ՜հ, որչափ ես ատում եմ այդպիսի բարեսրտութիւնը։

Բորլ. Սիրելի Դինա, ես կատարելապէս հասկանում եմ, որ դուք այստեղ ճնշուած էք, բայց...

Դինա. Օ՜հ, եթէ այստեղից հեռանալը հնարաւոր լինէր։ Ես իմ աշխատանքով կարող էի ապրել, միայն թէ ինձ

շրջապատող անձինք այդպէս չլինէին...

Բորլ. Այդպէ՞ս...

Դինա. Այդպէս վայելուչ և բարոյական։

Բորլ. Բայց Դինա, ի՞նչ էք ուզում ասել։

Դինա. Ո՜հ, դուք արդէն հասկանում էք։ Ամեն օր օրիորդ Ռումմելը և Նեստա Հոլդը գալիս են այստեղ, որպէսզի ես նրանցից օրինակ վերցնեմ։ Ես չեմ կարող և չեմ էլ ցանկանում նրանց նմանուել։ Ո՜հ, եթէ ես կարողանայի այստեղից հեռանալ, այն ժամանակ ես լաւ աղջիկ կը լինէի։

Բորլ. Դուք արդէն գովւած աղջիկ էք, սիրելի Դինա։

Դինա. Ի՞նչպէս է պէտք ինձ այստեղ գովասանքը։

Բորլ. Ուրեմն կամենում էք հեռանալ... Միթէ լուրջ կերպով մտածում էք։

Դինա. Եթէ դուք այստեղ չլինէիք, ես մի օր չէի մնալ։

Բորլ. Ասացէք Դինա, ինչո՞ւ ձեզ հաճելի է ինձ հետ լինել։

Դինա. Որովհետև դուք ինձ գեղեցիկ բաներ էք սովորեցնում։

Բորլ. Միթէ ինչ որ ձեզ սովորեցնում եմ, գեղեցիկ է։

Դինա. Այո։ Կամ իսկապէս... ոչ թէ դուք սովորեցնում էք, այլ երբ ես լսում եմ ձեզ, ինձ թւում է, իբր թէ ես գեղեցիկ մտքերով եմ ոգեւորուած...

Բորլ. Ի՞նչ էք հասկանում իսկապէս «գ ե ղ ե ց ի կ» մտքեր ասելով։

Դինա. Ես այդ մասին դեռ չեմ մտածել։

Բորլ. Ուրեմն այժմ մտածեցէք, թէ ի՞նչ է «գ ե ղ ե ց ի կ» բառի իմաստը։

Դինա. «Գ ե ղ ե ց ի կ»... մի վեհագոյն կամ այնպիսի բան... որ մեզանից շատ հեռու է։

Բորլ. Հ՜ըմ... Սիրելի Դինա, ինձ առանձնապէս հետաքրքրում է ձեր վիճակը։

Դինա. Եթէ ես Հիլդան կամ Նեստան լինէի, դուք այդ աստիճան չէիք հետաքրքրուի ինձանով։

Բորլ. Ա՜խ, Դինա, ինչո՞ւ չէք մտածում հազար ու մի

տեսակ հանգամանքների մասին... Երբ մարդ կոչուած է բարոյական նեցուկ լինելու այն հասարակութեան, որի մէջ նա ապրում է, պարտաւոր է չափազանց զգոյշ լինել... Եթէ միայն ես համոզուէի, որ մարդիկ իմ գործողութիւններին սխալ մեկնութիւններ չեն տալ... Բայց ինձ համար միևնոյն է։ Ձեզ պէտք է և հարկաւոր է օգնել... Դինա, եթէ հանգամանքները ներեն ինձ ասել, ահա իմ ձեռքը. կամենում էք ընդունել և կինս դառնալ։ Խոստանում էք կինս լինելու, Դինա, այո՞։

Դինա. Այո։

Բորլ. Շնորհակալ եմ, շնորհակալ։ Որովհետև ես նոյնպէս... Օ՜հ Դինա, որչա՜փ դուք թանկ էք ինձ համար... Ս

, մէկը գալիս է... Դինա, եթէ ինձ սիրում էք, գնացէք նրանց մօտ։ (Դինան գնում է այն սեղանի մօտ, որտեղ սուրճ են խմում. այդ բոպէին Բերնիկի ուղեկցութեամբ քաղաքապետի սենեակից գալիս են Ռումմելը, Ալոշտեղն եւ Վիգելանդը. քաղաքապետը ունի թղթերի մի կապոց)։

Բեր. Ուրեմն գործը վճռուած է...

Վիգելանդ. Այո, Աստուծոյ օգնութեամբ...

Ռում. Վճռուած է, Բերնիկ։

Բեր. Եւ ոչ ոք յետ չի նահանջիլ, ինչ խոչընդոտ էլ որ հանդիպելու լինի։

Ռում. Մենք կամ կը յաղթենք, կամ կը խորտակուենք։

Հիլմ. (պարտիզից ներս է մտնում)։ Ներեցէք, խորտակուողը արդեօք երկաթուղու ծրագի՞րն է։

Բեր. Ընդհակառակը երկաթուղին պիտի յաղթէ։

Ռում. Այն էլ շոգիով, պարոն Թիոննեսէն։

Հիլմ. (մօտենում է) Մի՞թէ։

Բորլ. Ինչպէ՞ս, երկաթուղի՞ն։

Տ. Բեր. (պարտիզի դռան մօտ) Ինչի՞ մասին է խօսքը, սիրելի Ռիքարդ։

Բեր. Ա՜խ, սիրելի Բեատի, քեզ համար հետաքրքրական չէ։ (Երեք պարոններին)։ Բայց այժմ մենք պէտք է ցուցակները կազմենք և որքան շուտ, այնքան լաւ։ Ամենից առաջ մենք չորսս կը ստորագրենք։ Հասարակութեան մէջ մեր ունեցած դիրքը բարոյապէս պարտաւորացնում է մեզ ուրիշներից աւելի եռանդուն լինելու։

Ալտս. Անշուշտ, պարոն քաղաքապետ։

Ռում. Մենք գործին ուղղութիւն կը տանք։

Բեր. Ես գործի յաջողութեան համար չեմ վախենում։ Մեզնից իւրաքանչիւրը պարտաւոր է իւր ծանօթների շրջանում սրտանց գործել և հէնց որ մեզ յաջողուեց հասարակութեան բոլոր խաւերի մասնակցութիւնը շարժել, այն ժամանակ, ի հարկէ, քաղաքային վարչութիւնն էլ կը մասնակցի։

Տ. Բեր. Բայց Ռիքարդ խնդրեմ պատմիր մեզ վերջապէս գործի էութիւնը։

Բեր. Ա՜խ, սիրելի Բեատի, դա կանանց գործ չէ։

Հիլմ։ Ուրեմն դու մտադիր ես երկաթուղու շինութիւնը յանձն առնել...

Բեր. Անշուշտ։

Բորլ. Բայց չէ՞ որ, պարոն քաղաքապետ, անցեալ տարի...

Բեր. Անցեալ տարի բոլորովին ուրիշ բան էր... Այն ժամանակ առաջարկում էին գիծը ծովի եզերքով տանելու...

Վիգել. Որը կատարելապէս ապարդիւն կը լինէր, որովհետև մենք արդէն շոգենաւեր ունինք...

Ալտս. Եւ որը մեզանից ահագին ծախքեր կը պահանջէր։

Ռում. Այո, և բացի դրանից տեղական շահերին կը վնասէր։

Բեր. Մանաւանդ որ նա հասարակութեան մեծամասնութեանը օգտակար չէր լինիլ։ Ահա թէ ինչո՞ւ ես ընդդիմանում էի. ուստի և այժմ մենք ընտրեցինք ներքին գիծը։

Հիլմ. Բայց այդ գիծը մեր շրջակայ քաղաքների մօտով չէ անցնում։

Բորլ. Ո՛չ, սիրելիս, քաղաքի մօտով պէտք է անցնի, որովհետև երկաթուղու գլխաւոր գծի հետ մի երկրորդական գիծ էլ ենք միացնում։

Հիլմ. Ուրեմն այդ բոլորովին նոր ծրագիր է։

Ռուս. Եւ փառաւոր ծրագիր է, այնպէս չէ՞։

Բոլ. Պարոններ, մի՞թէ դուք այդ ձեռնարկութիւնից մեծ հետևանքներ էք սպասում։

Բեր. Այո։ Անկասկած մեր հասարակութեան բարօրութեան համար դա մի խթան կը լինի։ Երևակայեցէք միայն այն՝ որ անտառային մեծ տարածութիւններ մատչելի կը դառնան մեզ համար, հանքագործութիւնը կը զարգանայ և ապագայում արդիւնաբերութիւնը կը ծաղկի։

Բոլ. Եւ դուք երկիւղ չէ՞ք կրում, որ մենք արտաքին ապականուած աշխարհի հետ յաճախ յարաբերութիւն պէտք է ունենանք։

Բեր. Ո՛չ, բոլորովին անհոգ եղէք, պարոն քարոզիչ։ Փառք Աստուծոյ, գործունեայ փոքրիկ քաղաքը առողջ և բարոյական հողի վրայ է կանգնած։ Մենք բոլորս դրան նպաստել ենք և կը շարունակենք նոյնպէս ապագայում, իւրաքանչիւրն, ի հարկէ, իւր շրջանում։ Դուք, պարոն քարոզիչ, ուսումնարանում և ընտանիքում կը շարունակէք ձեր բեղմնաւոր գործունէութիւնը։ Մենք գործնական մարդիկս, հասարակութեան նեցուկներ կը դառնանք, տարածելով բարեկեցութիւնը բոլոր հեռաւոր շրջաններում, իսկ մեր կանայք, մօտեցէք, խնդրեմ, տիկնայք և օրիորդներ, մեր կանայքը և օրիորդները կը գործեն բարեգործական ասպարէզի վրայ և կը շարունակեն իրենց չափով օգնել, ինչպէս իմ սիրելի Բեատին և Մարթան ինձ և Օլգին են օգնում։ (Շուրջն է նայում)։ Բայց ո՞ւր է այսօր Օլգին։

Տ. Բեր. Ա՜խ, այս արձակուրդներին անհնարին է նրան տանը պահել։

Բեր. Անշուշտ, նա կրկին ջրի մօտ է։ Ահա կը տեսնես, որ այդ բանը չարիքով կը վերջանայ։

Քրապ. (ներս է գալիս աջ կողմից նամակներն ու լրագիրները ձեռքում) Ահա արտասահմանի փոստը, պարոն քաղաքապետ և նոյնպէս Նիւ-Եօրքից մի հեռագիր...

Բեր. (վերցնում է) Ա՜հ, այս հեռագիրը «Վիթ»-ի տիրոջից է։

Ռուս. Փոստն եկե՞լ է։ Ուրեմն ցտեսութիւն։

Վիզել. Ես նոյնպէս։

Ալտշ. Ցտեսութիւն, պարոն քաղաքապետ։

Բեր. Ցտեսութիւն, ցտեսութիւն, պարոններ։ Մի մոռանաք, որ այսօր երեկոյեան ժամը 5-ին ժողով ունենք։

Երեք պարոնները. Այո, հասկանալի է։ (Աջ կողմից դուրս են գնում)։

Բեր. (հեռագիրը կարդալուց յետոյ) Ո՛չ, այս իսկ և իսկ սենսացիոնալ է, բոլորովին վրդովեցուցիչ...

Տ. Բեր. Աստուած իմ, Ռիչարդ, ի՞նչ է։

Բեր. Ահա, լսեցէք, պարոն Քրապ, կարդացէք։

Քրապ. (կարդում է) «Որքան կարելի, քիչ նորոգութիւններ արէք, անմիջապէս ճանապարհեցէք «Վիթը», եղանակը բարեյաջող է։ Հակառակ դէպքում շոգենաւի ապրանքը նաւը կը տանի»։

Բեր. Նաւը ապրանքը կը տանի՞. այդ պարոնները քաջ գիտեն, որ նաւն իւր ծանրութեամբ կարող է մի քարի պէս խորտակուիլ։

Բոլ. Այս էլ ձեր կրթուած բարձր հասարակութիւնը։

Բեր. Իրաւացի էք խօսում, երբ գործը շահին է վերաբերում, նոյն իսկ մարդկային կեանքը նշանակութիւն չունի։ (Քրապին)։ Կարո՞ղ է «Վիթը» չորս կամ հինգ օրից յետոյ ծովը մտնել։

Քրապ. Այո, եթէ միայն պ. Վիգելանդը կը համաձայնէ, որ մենք «Արմաւենու» նորոգութիւնը մի առ ժամանակ դադարեցնենք։

Բեր. Հը՜մ, նա չի համաձայնիլ։ Խնդրեմ նամակները կարդաք... (Նկատելով Օլգին)։ Փառք Աստուծոյ, նա անվնաս և կենդանի է։ (Օլգին կարթը ձեռին պարտիզի դռնից վազելով ներս է մտնում)։

Օլգի. (պարտիզում) Քեռի, ես այնտեղ էի և շոգենաւը տեսայ։

Բեր. Դու կրկին նաւահանգստումն էիր։

Օլաֆ. Ո՛չ, ես նաւակումն էի։ Բայց երևակայիր, քեռի, շոգենաւով մի խումբ հեծնորդներ եկան, շատ ձիերով և վայրենի կենդանիներով այլ և բազմաթիւուղևորներ...

Տ. Ռում. Աստուած իմ, մի՞թէ։ Ուրեմն մենք կրկէս պէտք է ունենանք։

Բոլ. Մե՞նք, ո՛չ, չեմ կարծում։

Օլաֆ. (օրիորդ Բերնիկի փէշից քաշելով) Տես, տես, ահա նրանք գալիս են։

Տ. Հոլդ. Այո, իսկապէս նրանք են։

Տ. Լինգ. Ո՛հ, ինչ ատելի մարդիկ են։ (Մի խումբ ճանապարհորդներ եւ բաւական քաղաքացիներ փողոցով գալիս են)։

Տ. Ռում. Այո, դրանք կատարեալ ձեռնածուներ են։ Տիկին Հոլդ, նայեցէք այն տիկնոջը, մոխրագոյն հագուստով։

Տ. Հոլդ. Անկասկած, նա կառավարչի կինն է։

Տ. Ռում. Ահա և ինքը կառավարիչը... որը միրուք ունի։ Ա՜խ, նա աւազակի է նմանում։ Ի սէր Աստուծոյ Հիլդա, մի նայիր նրանց։

Տ. Հոլդ. Նեստա, դու ևս։

Օլաֆ. Մայրիկ, ահա՞ կառավարիչը մեզ ողջունում է։

Բեր. Ի՜նչ։

Տ. Ռում. Այո, Աստուած իմ, ահա տիկինը նոյնպէս ողջունում է։

Բեր. Ոչ, այդ արդէն յանդգնութիւն է։

Օր. Բեր. (ակամայ աղաղակում է) Ա՜խ...

Տ. Բեր. Ի՞նչ է, Մարթա։

Օր. Բեր. Օ՜հ, ոչինչ, ոչինչ։ Ինձ միայն թուաց...

Օլաֆ. (ուրախ գոռում է) Տես, տես, ահա, գալիս են և միւսները ձիաներով և անասուններով։ Ահա և ամերիկացիք։ Բայց ահա և «Վիթ»-ի բոլոր նաւաստիները։ (Լսում է «Եանկի Դուլ» ամերիկական երգի եղանակը սրնգի եւ թմբուկի դաշնակցութեամբ)։

Հիլմ. (ականջները փակում է) Օ՜հ, ճհ, ճհ։

Բոլ. Իմ կարծիքով, տիկիններ, աւելի լաւ կը լինէր

մի քիչ առանձնանալ, այդ բանը մեզ համար չէ։ Անցնենք էլի մեր աշխատանքին։

Տ. Բեր. Լաւ չի՞ լինիլ, եթէ պատուհանների փեղկերը ծածկենք։

Բոլ. Այո, ես էլ հէնց այդ էի ցանկանում։ (Տիկինները նստում են սեղանի շուրջը. Բոլանդը փակում է պարտիզի դուռը եւ իջեցնում է վարագոյրները։ Սալոնում կիսամութ է տիրում)։

Օլաֆ. (պատուհանից նայում է) Մայրիկ, կառավարչի կինը աղբիւրի մօտ երեսն է լուանում։

Տ. Բեր. Ինչպէ՞ս,, հրապարակում։

Տ. Ռում. Եւ այն էլ օրը ցերեկով։

Հիլմ. Եթէ ես ճանապարհորդէի մի անապատում և յանկարծ մի աղբիւրի հանդիպէի, ես չէի ամաչիլ... ուֆ, ինչ զզուելի սրինգ է։

Բոլ. Իսկապէս ոստիկանութեան պարտքն է ուշադրութիւն դարձնել։

Բեր. Զարժէ։ Օտարականների հետ չպէտք է այդքան խիստ վարուիլ։ Այդ մարդկանց իսկապէս պակասում է այն բնածին զգացմունքն, որը մեզ որոշ սահմաններում է պահում։ Թող նրանք ինչ ուզում են անեն, մեր գործը չէ։ Բարեբաղդաբար այդ ստորին տարրը, որ չէ հնազանդում ոչ օրինապահութեան և ոչ էլ բարոյականութեան, մեր հասարակութեան չէ պատկանում։ Այս ի՞նչ է նշանակում։ (Մի օտարական կին ներս է մտնում աջ դռնից)։

Կանայք. (սարսափած, բայց մեղմ ձայնով) Դա կրկէսի կառավարչի կինն է։

Տ. Բեր. Աստուած իմ, այս ի՞նչ է նշանակում։

Օր. Բեր. (տեղից յանկարծ վեր թռչելով) Ա՜խ...

Օsur կին. Բարև՛ սիրելի Բեատի, բարև՛ Մարթա, բարև՛...

Տ. Բեր. (աղաղակում է) Լոնա...

Բեր. (դէպի յետ երերուելով) Միթէ հնարաւո՞ր է...

Տ. Հոլդ. Երկնային Աստուած իմ...

Տ. Ռում. Միթէ այս հնարաւոր է...

Հիլմ. Օ՜հ, ոհ։

Տ. Բեր. Լոնա... Մի՞թէ ճշմարիտ դու ես։

Օր. Հեսսել. Շէք հաւատում, այո՛ ես եմ. համարձակ կարող ինձ գրկել։

Հիլմ. Օ՜հ, ոհ։

Տ. Բեր. Եւ ալժմ այստե՞ղ ես եկել...

Բեր. ... Եւ մտադիր ես մասնակցե՞լ...

Օր. Հես. Մասնակցե՞լ։ Ինչպե՞ս թէ մասնակցել։

Բեր. Ես ուզում եմ ասել... թէ դու էլ ե՞ս ուզում կըրկէսում խաղալ։

Օր. Հես. Հա՜, հա՜, հա՜։ Խելքդ կորցրե՞լ ես, Բերնիկ, կարծում ես, թէ ե՞ս էլ եմ այդ ձիարշաւողների խմբին պատկանում։ Ո՛չ, թէև ես ուրիշ շատ. ասպարէզներում եմ գործել և շատ տեղ էլ անյաջող...

Տ. Ռում. Հը՜մ...

Օր. Հես. Բայց ես դեռ ձիերի վրայ վարժութիւններ չեմ արել։

Բեր. Ուրեմն ոչ։

Տ. Բեր. Փառք Աստուծոյ։

Օր. Հես. Ո՛չ, մենք ճանապարհորդել ենք՝ ինչպէս օրինաւոր մարդիկ։

Տ. Բեր. Մե՞նք, ասում ես։

Բեր. (մի քայլ մօտենալով) Ովքե՞ր, մենք։

Օր. Հես. Ի հարկէ ես և երեխան։

Կանայք. (բոլորը միասին) Երեխա՞յ։

Հիլմ. Ի՞նչ։

Որլ. Ես պէտք է ասեմ...

Տ. Բեր. Բայց Լոնա, ո՞ր երեխան։

Օր. Հես. Ի հարկէ Ջոնը, ես բացի Ջոնից ուրիշ երեխայ չունիմ, կամ ինչպէս դուք նրան Յովհաննէս էիք կոչում։

Տ. Բեր. Յովհաննէս։

Տ. Ռում. Անառակ եղբայրն է։

Բեր. (երկիւղով) Ուրեմն Յովհաննէսը նոյնպէ՞ս եկել է։

Օր. Հես. Այո՛, այո՛, առանց նրան ես չեմ ճանապարհորդել։ Բայց ձեր բոլորի դէմքերը շփոթմունք են արտայայտում։ Ի՞նչ էք այս խաւարի մէջ նստել և սպիտակեղէնները կարում։ Մի գուցէ այս ընտանիքում մահ է պատահել։

Որլ. Օրիորդս, դուք այժմ «բարոյապէս ապականուածների» խնամատար ընկերութեան մէջ էք գտնուում...

Օր. Հես. (կիսածայն) Ի՞նչ էք ասում։ Ուրեմն այս յարգելի և վայելուչ տիկինները...

Տ. Ռում. Ո՛չ, այս արդէն չափազանց է...

Օր. Հես. Այո՛, հասկանում եմ, հասկանում։ Բայց Աստուա՛ծ իմ, սա տիկին Ռումմէլն է։ Ահա և տիկին Հոլդը։ Այո՛ կարող եմ ասել, որ մենք երեքս վերջին տեսակցութիւնից յետոյ աւելի չենք ջահելացել... Բայց լսեցէ՛ք, սիրելիներս. թողէք մի օր բարոյապէս փչացածներին. դրանից նրանք կորուստ չեն ունենալ։ Մի այնպիսի ուրախ բոպէ, ինչպէս այժմ է...

Որլ. Հայրենիք վերադառնալը ոչ միշտ ուրախութիւն է պատճառում...

Օր. Հես. Իրո՞ք։ Ուրեմն ինչպե՞ս էք հասկանում ձեր Աստուածաշունչը, պարոն պաստո՛ր։

Որլ. Ես պաստոր չեմ։

Օր. Հես. Բայց երբ և իցէ անշուշտ կը դառնաք։ Բայց, ֆու, ֆու... Օ՜հ, այս բարոյական կտաւեղէնը շատ վատ հոտ ունի... կարծես դիակի պատան լինի. ես ընտելացել եմ դաշտավայրերի թարմ օդին...

Բեր. (ձակատը շփում է) Այո՛, այստեղ օդը մի քիչ ապականուած է։

Օր. Հես. Սպասի՛ր, սպասի՛ր, մենք խսկոյն գերեզմանից դուրս կելնենք։ (պատուհանի վարագոյրները բարձրացնում է) Այստեղ պիտի լոյս լինի, երբ տղաս գայ։ Ահա տեսէք թէ նա ինչպէ՞ս մաքուր և լուացուած պէտք է գայ...

Հիլմ. Օ՜հ, ոհ...

Օր. Հես. (Բանալով դուռը եւ պատուհանները) Ես կամենում

եմ ասել, թէ երբ նա հիւրանոցում կը լուացուի, որովհետև շոգենաւի վրայ նա կատարեալ ածխավաճառ էր։

Հիլմ. Օ՜հ, ճհ։ (Յոյց է տալիս Հիլմարին եւ հարցնում է միւսներից)։ Հիլմարը գարձեալ շարունակ թափառում է ամէն բանի համար ճհ, ճհ է ասում։

Հիլմ. Ես չեմ թափառում, այլ ես հիւանդ եմ...

Բարլ. Տիկիններ, ես չեմ կարծում, որ...

Օր. Հես. (Օլաֆին նկատելով) Բեատի, սա քո՞ն է... Տուր ձեռդ, փոքրիկս։ Գուցէ դու վախենում ես։

Բարլ. Տիկիններ, կարծեմ տրամադրութիւն չունիք այսօր աւելի աշխատելու, բայց վաղը անշուշտ կը ժողովուինք։ (Վերցնում է գիրքը)։

Օր. Հես. (Երբ կանայք ուզում են հեռանալ) Ուրեմն պիտի ժողովուինք, ես էլ այստեղ կը լինեմ։

Բարլ. Դուք։ Ներեցէք օրիորդ, բայց ի՞նչ գործ ունիք մեր ընկերութեան մէջ։

Օր. Հես. Ձեր ընկերութիւնը թարմացնելու եմ, պարոն պաստոր։

ՎԱՐԱԳՈՅՐ

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Քաղաքապետ Բերնիկի տան պարտիզի սալօնը։

(Տիկին Բերնիկը սեղանի մօտ նստած կար է անում։ Մի քիչ յետոյ աջ կողմից ներս է մտնում քաղաքապետ Բերնիկը, գաւազանը ձեռին, գլխարկը գլխին եւ ձեռնոցները հագած)։

Տ. Բեր. Դու արդէն վերադառնում ես, Ռիքարդ։

Բեր. Այո, մի քանի պարոններ պիտի գան։

Տ. Բեր. (հառաչելով) Ախ... երևի Յովհաննէսը նորից կը գայ։

Բեր. Ի հարկէ։ (Գլխարկը սեղանի վրայ է դնում)։ Իսկ տիկինները ո՞ւր են այսօր։

Տ. Բեր. Տիկին Ռուժէն և Հիլդան յայտնել են, որ զբաղուած են։

Բեր. Ուրեմն։ Հրաժարուեցին։

Տ. Բեր. Այո, նրանք տանը չափազանց գործ ունին։

Բեր. Հասկանալի է... Ուրեմն միւսնե՞րն էլ չեն գալու։

Տ. Բեր. Ոչ ... Նրանց էլ մի բան խանգարել է։

Բեր. Այդ կարելի էր նախապէս գուշակել։ Իսկ ո՞ւր է Օլաֆը։

Տ. Բեր. Ես նրան թոյլ տուեցի Դինայի հետ քիչ զբօսնելու։

Բեր. Հը՛մ... Դինա... այն թեթեամիտ աղջիկը... Երէկ նա չափից դուրս զբաղուած էր Յովհաննէսի հետ...

Տ. Բեր. (կարը ծնկան վրայ դնելով) Ռիքարդ, չգիտե՞ս թէ նրանք ինչո՞ւ են վերադարձել։

Բեր. Հը՜մ... Նա այնտեղ ագարակ ունի և գործը բաւական անյաջող է։

Տ. Բեր. Բայց Լոնան ի՞նչ նպատակով է եկել, մանաւանդ այն ծանր անպատուութիւնից յետոյ, որ հասցրեց քեզ։

Բեր. Ա՛հ, մի յիշեցրու ինձ տխուր անցեալը...

Տ. Բեր. Արդեօ՞ք չենք կարող նրան բանտարկել տալ այն դրամի համար, որ մօրիցդ գողացել էին։

Բեր. Ահա յիմարութի՛ւն։ Ո՞վ կարողէ ապացուցանել, որ մօրիցս դրամ են գողացել։

Տ. Բեր. Աստուա՛ծ իմ, դժբախտաբար այդ յայտնի է ամբողջ քաղաքին և վերջապէս դու ինքդ էլ ես պատմել։

Բեր. Ես բառ անգամ չեմ ասել։ Ի՞նչ կարող է գիտենալ քաղաքը։ Այդ սոսկ բամբասանքներ են։

Տ. Բեր. Ո՛հ Ռիքարդ, որչափ դու մեծահոգի ես։

Բեր. Աղաչեմ մի՛ վրդովիր ինձ այդ յիշողութիւններով։ Դու չես զգում, թէ որ աստիճանի ինձ տանջում ես յիշեցնելով անցեալը։ (Սկսում է քայլել եւ ձեռնափայտը մի կողմն է ձգում,։ Եւ ինչո՞ւ նրանք հենց հիմա են վերադարձել, երբ ինձ անհրաժեշտ է հասարակութեան և մամուլի անպայման համակրութիւնը գրաւել։ Կրկին պիտի երևան գան մոռացութեան մատնուած պատմութիւնները... (Ձեռնոցները սեղանի վրայ է ձգում)։ Եւ ես չունիմ մի մտերիմ անձն, որ կարողանար ինձ պաշտպանել և ինձ նեցուկ դառնար...

Տ. Բեր. Մի՛թէ՞ ոչ ոք, Ռիքարդ։ (Արտասուում է)։

Բեր. Ահա, արտասուիր, լաց եղիր, որպէսզի քաղաքում խօսալու նիւթ լինի... Թող երեխայական վարմունքդ, գնա պարտէզը, յանկարծ կարող են ներս գալ և փառաւոր բան կը լինէր, որ քաղաքապետի կնոջը արտասուալի աչքերով տեսնեն... Ահա կարծեմ մէկը նախասենեակումն է։ (Դուռը բաղխում են)։ Ներս համեցէք։ (Տիկին Բերնիկը կարը ձեռին դուրս է գնում սանդուխով։ Աջ կողմից ներս է մտնում Աուլէրը)։

Աուլէր. Ողջոյն ձեզ, պարոն քաքաքապետ։

Բեր. Ողջոյն, երևի դուք արդէն զուշակած էք, թէ ինչո՞ւ եմ ես ձեզ պատուիրել այստեղ գալու։

Աուլ. Ձեր քարտուղարն ինձ ասաց, որ դուք դժգոհ էք...

Բեր. Ես ընդհանրապէս դժգոհ եմ նաւագործարանի բոլոր կարգերից։ Գործում էք դանդաղ։ «Արմաւենին» վաղուց պէտք է պատրաստ լինէր։ Վիգելանդը նեղում է ինձ միշտ իր ստիպողութեամբ. նա մի անհանգիստ ընկերակից է։

Աուլ. «Արմաւենին» վաղը չէ՝ միւս օր ծովում կը լինի։

Բեր. Վերջապէ՞ս։ Բայց ամերիկացին, «Վիթ»ն, որ ահա հինգշաբաթ է այստեղ ընկած և...

Աուլ. Նաւի յատակը բոլորովին փտած է, քանի նորոգում ենք, այն քան աւելի վատանում է։

Բեր Հիմնաւոր պատճառ չէ։ Քրապը ինձի գործի էութիւնը արդէն բացատրել է։ Դուք չէք կարողանում իմ ձեռքերած նոր մեքենաներով աշխատել, կամ աւելի ճիշդն ասած՝ դուք խուսափում էք նոր մեքենաներից։

Աուլ. Պարոն քաղաքապետ, շուտով վաթսուն տարիս կը լրանայ, և ես մանկութիւնից ընտելացել եմ հին ձևով աշխատել։

Բեր. Հիմա այդ համապատասխան չէ։ Մի կարծէք, որ ես նիւթական շահերով եմ տոգորուած, բարեբախտաբար այդպէս անելու կարիք չունիմ։ Բայց ես միշտ աշքի առաջ ունիմ այն հասարակութիւնը, ուր ես ապրում եմ և այն գործը, որի պարագլուխն եմ։ Իմ պարտականութիւնս է հասարակութեան առաջադիմութեան մասին հոգալ. հակառակ դէպքում ամեն ինչ անշարժութեան մէջ է մնալու։

Աուլ. Պարոն քաղաքապե՞տ, չէ որ ես էլ նոյնպէս առաջադիմութիւն եմ ցանկանում...

Բեր. Այո՛, բայց դուք առաջադիմութեան կուսակիցն էք միայն, բանուորական սահմանափակ դասակարգի համար։ Ես ճշգրիտ գաղափար ունիմ ձեր գործունէութեան մասին. դուք

ճառեր էք արտասանում, դրդռում և յուզում էք ժողովրդին, բայց երբ գործը մի շօշափելի առաջադիմութեան է վերաբերում, ինչպէս և մեր նոր մեքենաները, այն ժամանակ դուք սաստիկ երկիւղ էք կրում և գործից փախուստ էք տալիս։

Առլ. Այո, ես վախենում եմ, պարոն քաղաքապետ։ Ես վախենում եմ, որովհետև մեքենաները բանուորներին զրկում են օրական հացից։ Պարոն քաղաքապետ, դուք շատ յաճախ էք խօսում հասարակութեան վերաբերեալ պարտաւորութիւնների մասին, բայց ինձ թւում է, որ այդ հասարակութիւնն էլ իւր պարտականութիւններն ունի։ Ինչպէ՞ս կարող են կրթութիւնն և ոսկին այդ նոր գիւտերը մոցնել, մինչդեռ հասարակութիւնը մի այնպիսի սերունդ չէ կրթել, որ դրանց կարողանար գործածել։

Բեր. Առլէր, դուք չափից դուրս էք զբաղւում ընթերցանութեամբ և դատում. այդ վնասակար է, ըստ որում այդ դժգոհեցնում է ձեզ, ձեր դրութիւնից։

Առլ. Ո՛չ, պ. քաղաքապետ այդ չէ։ այլ ես սառնասիրտ չեմ կարող տեսնել, թէ ինչպէս այս մեքենաների շնորհիւ մեր ընտիր գործաւորները իրարու ետևից անգործութեան են դատապարտւում ու հացից զրկւում։

Բեր. Հը՞մ. իսկ երբ տպագրութիւնը հնարուեց, բազմաթիւ գրագիրներ անհաց մնացին։

Առլ. Ուրախ կը լինէ՞ք, եթէ դուք այն ժամանակ մի գրագիր եղած լինէիք, պարոն քաղաքապետ.

Բեր. Ես ձեր ետևից ուղարկեցի ոչ թէ նրա համար, որ ինձ հետ վիճէք, այլ պատուիրելու, որ «Վիթը» վաղը չէ միւս օրը պատրաստ լինի մեկնելու։

Առլ. Բայց, պ. քաղաքապետ...

Բեր. Լսո՞ւմ էք, վաղը չէ միւս օրը։ Մեր նաւի հետ պատրաստ պէտք է լինի, և ոչ մի ժամ ուշ։ Ես հիմք ունիմ շտապելու։ Դուք կարդացած էք առաւօտեան լրագիրը...։ Ապա ուրեմն կիմանաք, որ ամերիկացիները նորից անկարգութիւններ են արել։ Այդ անամօթ խմբակը քաղաքը տակնուվրայ է արել։ Գիշեր չէ անցնում, որ պանդոկներում և փողոցներում կռիւներ չպատահին, էլ չեմ խօսում նրանց պղծութիւնների մասին։

Առլ. Այո, դրանք ապականուած մարդիկ են։

Բեր. Եւ այդ բոլորի համար ո՞վ է պատասխանատուն, ես։ Այո, ինձ մեղադրում են։ Լրագրական աշխատակիցները շարունակ կշտամբում են, որ մեր բոլոր բանուորներին «Արմատեանու» վրայ ենք կենտրոնացրել։ Եւ ես, որ համաքաղաքացիներիս համար օրինակ պէտք լինիմ, ստիպուած եմ մեղադրանքներ լսել և համբերել։

Առլ. Օ՜հ, քաղաքապետ, ձեր անունը այնչափ յարգելի է, որ ընդունակ է դիմադրելու։

Բեր. Բայց ոչ, այժմ, հենց հիմայ ես պէտք եմ զգում համաքաղաքացիներիս կատարեալ վստահութեան և համակրութեան։ Ինչպէս դուք նս լսած կը լինէք, ես ձեռնամուխ եմ լինում մի մեծ գործի, և եթէ չարամիտ մարդկանց կը յաջողուի հասարակութեան դէպի ինձ տածած վստահութիւնը խախտել, այդ դէպքում ինձ մեծամեծ խոչընդոտներ են սպառնում։ Ուստի, անպայման ցանկանում եմ լրագրական զլպարտիչ յոդուածներից խոյս տալ և որոշումս անփոփոխ եմ համարում։ Բայց եթէ «Վիթ»։ը վաղը չէ միւս օրը պատրաստ չլինի, այն ժամանակ ես ձեզ կարձակեմ։

Առլ. (սարսափած) Ի՞նձ։ (ծիծաղելով։) Դուք կատակ էք անում, պարոն քաղաքապետ։

Բեր. Դուք ինձ չէ՞ք հաւատում։

Առլ. Մի՞թէ ճշմարիտ ժառանգում էք ինձ արձակել։ Մի ժարդու, որի հայրը և պապը իրենց ամբողջ կեանքում նաւագործարանում են բանել, նմանապէս և ես։

Բեր. Ես ստիպուած եմ այդպէս անելու։

Առլ. Դուք, պ. քաղաքապետ, անհնարին բան էք պահանջում։

Բեր. Հաստատակամութիւնն անհնարին բան չէ ճանաչում։ Այո կամ ոչ։ Պատասխանեցէք ինձ, ապա թէ ոչ պաշտօնանկ էք իսկոյն։

Աուլ. (մի քայլ մօտենում է Բերնիկին) Պարոն քաղաքապետ, արդեօք դուք լուրջ մտածել էք, թէ ինչ կը նշանակէ մի ծերունի բանուորի արձակել։ Գուցէ դուք ենթադրում էք, թէ նա կարող է մի ուրիշ աշխատանք գտնել։ Բայց եթէ դուք կարողանայիք արձակած բանուորի ընակարանը գիտել այն երեկոյ, երբ նա տուն է վերադառնում և իւր գործիքները բերում,..

Բեր. Դուք կարծում էք, թէ ես ձեզ հանգիստ սրտով եմ արձակում։ Մի՞թէ ես ձեզ համար մի բարի և մարդասէր տէր չեմ եղել։

Աուլ. Աւելի վատ, պ. քաղաքապետ։ Հենց այդ բանը ի նկատի ունենալով, իմ ընտանիքը ձեզ չի մեղադրի։ Այլ պիտի մտածեն և ասեն անկասկած. «այս մարդը արժանի էր այդ պատժին»։ Հասկանում էք, գիտէք որ ես այդ չեմ կարող տանել։ Որչափ էլ ես մի չնչին մարդ լինիմ, բայց և այնպէս սովորած եմ ընտանիքիս պատը լինել, իմ ընտանիքս նոյնպէս մի փոքրիկ համայնք է։ Եւ այդ համեստ շրջանի նեցուկը ու պաշտպանը ես էի, որովհետև կինս և զաւակներս ինձ վրա վստահ էին... իսկ այժմ այդ բոլորը պէտք է աւերուի։

Բեր. Այո, երբ ուրիշ ելք չկայ. փոքրը մեծի շնորհիւ պիտի ընկճուի, պէտք է զոհուի յանուն մեծամասնութեան։ Ես ձեզ ուրիշ պատասխան չեմ կարող տալ, և համայն աշխարհում կարգն այդպէս է։ Բայց դուք, Աուլէր, չափազանց յամառ մարդ էք և ինձ հակառակում էք ոչ թէ նրա համար, որ այլապէս չէք կարող վարուիլ, այլ որովհետև չէք ուզում մեքենաները ձեռքի աշխատանքից զերադասել։

Աուլ. Իսկ դուք ինձ կամենում էք արձակել, որպէսզի ապացուցած լինէք մամուլին, որ դուք հասարակութեան շահերի նախանձախնդիր էք։

Բեր. Ենթադրենք, թէ այդպէս է։ Գիտէք գործի էութիւնը. քանի որ՞ ես յանուն հասարակաց բարօրութեան ձեռնամուխ եմ լինում մի մեծ գործի, ինձ անհրաժեշտ է կամ մամուլի համակրութիւնը գրաւել, կամ թէ նրա խիստ յարձակումներին ենթարկուել։ Ուրեմն դատեցէք, կարո՞ղ եմ այլապէս վարուել։ Կրկնում եմ, ձեր ընտանիքը պահպանելու համար պէտք է հարիւրաւոր ընտանիքներ զոհուին, ընտանիքներ, որոնք ապագայում երբէք չեն ապահովուիլ, եթէ ձեռնարկութիւնս գլուխ չկայ... Ուստի երկու պայմաններից մէկը ձեր ընտրութեանն եմ թողնում։

Աուլ. Եթէ այդպէս է, ես այլ ես ասելիք չունիմ։

Բեր. Հը՛մ... Շատ ցաւում եմ, սիրելիս Աուլէր, որ մենք պիտի բաժանուինք։

Աուլեր. Մենք չենք բաժանուիլ, պ. քաղաքապետ։

Բեր. Ինչպէ՞ս։

Աուլեր. Ինձ նման մի հասարակ մարդ նոյնպէս կարող է այս աշխարհում իւր գոյութեան համար կռուել։

Բեր. Այո, այո... Ուրեմն դուք ինձ խոստանում էք...

Աուլեր. «Վիթ»-ը վաղը չէ միւս օրը պատրաստ կը լինի։ (Ողջունում է եւ աջ կողմով հեռանում)։

Բեր. Վերջապէս կարողացայ նրա յամառութիւնը փշրել։ Դա բարեյաջող նշան է։ (Հիլմարը սիգարան բերնին պարտիզի դռնով մտնում է)։

Հիլմ. (սանդուղի վրայ) Բարև Բետտի, բարև Բերնիկ։

Տ. Բեր. Բարև՛։

Հիլմ. Ես ինչպէս տեսնում եմ, դու լաց ես եղել։ Ուրեմն դու գիտես բոլորը։

Տ. Բեր. Ի՞նչ։

Հիլմ. Մի խայտառակ անցք։ Ա՜խ...

Բեր. Ի՞նչի մասին ես խօսում։

Հիլմ. (ներս է գալիս)։ Այն որ երկու ամերիկացիներն էլ Դիմնայի հետ գրօսնում են։

Տ. Բեր. (հետեւում է նրան)։ Բայց ճշմարիտ ես ասում Հիլմար։

Հիլմ. Դժբաղդաբար այդ... իրողութիւն է։ Մինչև անգամ Լոնան յանդգնեցաւ բարձր ձայնով ինձ կանչել, բայց ի հարկէ ես ձևացրի, որ չեմ լսում։

Բեր. Եւ ի հարկէ այդ աննկատելի չմնաց։

Հիլմ. Հարկաւ։ Մարդիկ կանգնում և նրանց էին դիտում։ Այդ լուրը կայծակի արագութեամբ ամբողջ քաղաքում տարածուեց։ Շատ տներում մարդիկ կանգնած իրենց լուսամուտի մօտ սպասում էին այդ խմբակին... Ա՜խ... Բետտի, ներիր ինձ որ հառաչում եմ շարունակ, բայց նման դէպքերը ինձ ջղային են դարձնում... Եթէ այդ դեռ երկար շարունակուի, ես ստիպուած պիտի լինիմ հեռանալ և մի երկար ճանապարհորդութիւն անել։

Տ. Բեր. Բայց դու բացատրէիր նրանց վարմունքը, համոզէիր...

Հիլմ. Փողոցում, բոլորի ներկայութեամբ։ Ոչ, ես շատ շնորհակալ եմ... Ես չգիտեմ, թէ ինչպէս է այդ պարոնը համարձակուել այստեղ երևալու... տեսնենք գուցէ մամուլը նրան սանձահարէ։ Ներիր, Բետտի, բայց...

Բեր. Մամուլն, ասում ես։ Գուցէ արդէն ակնարկել են։

Հիլմ. Այո, այդպիսի ձայներ են գալիս։ Երէկ երեկոյեան ձեզանից հեռանալով, մտայ ժողովարանը ջղերս հանգստացնելու դիտաւորութեամբ։ Այն լռութիւնից, որ իսկոյն տիրեց իմ երևալուս պէս, ես եզրակացրի, որ խօսակցութիւնը ամերիկացիների մասին է։ Դրանից յետոյ, ներս է մտնում այն անամօթ խմբագիր Համմերը և բարձրաձայն շնորհաւորում է, որ հարուստ ազգականս հայրենիք է վերադարձել։

Բեր. Հարուստ։

Հիլմ. Այո, նա այդպէս ասաց։ Ես էլ ի հարկէ դէպի նրան մի արհամարհական հայացք ուղղելով հասկացրի, որ Յովհաննէս Թիոննեսէնի հարստութեան մասին տեղեկութիւն չունեմ։ «Իրօք», նկատեց նա, զարմանալի է, Ամերիկայում մարդիկ, սկզբնական մասնաւոր գումար ունենալով, հարստանում են, իսկ ձեր բարեկամը դատարկ ձեռքերով չէ գնացել այնտեղ»։

Բեր. Հը՜մ... խնդրեմ...

Տ. Բեր. (վշտացած) Տեսնում ես, Ռիքարդ...

Հիլմ. Այնուամենայնիւ ամբողջ գիշերը չկարողացայ քընել և շարունակ պարոնի մասին էի մտածում. իսկ նա այժմ անփոյթ զբօսնում է փողոցներում։ Ինչու այդպիսի թանգագին ազգականը չմեռաւ։ Անհաւատալի է, թէ ինչ աստիճանի ոմանք երկարակեաց են։

Տ. Բեր, Ա՜խ. Հիլմար, ինչ՞ը ես խօսում։

Հիլմ. Առանձին ոչինչ։ Բայց այդ իրողութիւն է, որ նա ազատուել էր երկաթուղիների խորտակումներից, Կալիֆորնիայի արջերից և հնդիկների յարձակումներից։ Ա՜խ, ահա և նրանք։

Բեր։ (դէպի փողոց նայելով) Օլաֆն էլ նրանց հետ է։

Հիլմ. Այո։ Չէ՞ որ ամենքին պիտի յիշեցնեն, թէ նրանք քաղաքիս առաջին ընտանիքին են պատկանում... Տես, արդէն ահա բոլոր դատարկաշրջիկները դեղավաճառանոցից դուրս են գալիս նրանց նայելու և դիտողութիւններ անելու, Հաւատացնում եմ, այդ սաստիկ ազդում է ջղերիս վրայ։ Համեցէք, այդպիսի պարագաներում ինչպէս կարելի է իդէալի դրօշակը բարձր պահել...

Բեր։ Նրանք ուղղակի այստեղ են գալիս։ Լսիր Բետտի, ես ցանկանում եմ, որ դու նրանց հետ սիրալիր վարուես։

Տ. Բեր. Միթէ այդպէ՞ս ես ցանկանում, Ռիքարդ։

Բեր. Այո։ Դու նոյնպէս, Հիլմար։ Յոյս ունիմ, որ նրանք այստեղ երկար չեն մնալ, և երբ մենք միասին լինինք... պէտք է ակնարկներից փախուստ տալ և ոչ մի կերպ չվիրաւորել։

Տ. Բեր. Օ՜հ, Ռիքարդ, ի՜նչ մեծահոգի մարդ ես։

Բեր. Դէհ լաւ, լաւ։

Տ. Բեր. Ոչ, թոյլ տուր շնորհակալ լինելու. ներիր, որ ես մի քիչ առաջ վրդովուեցայ. դու կատարեալ իրաւունք ունէիր...

Բեր. Դէհ լաւ, լաւ, ասում եմ քեզ։

Հիլմ. Ա՜խ, ա... (Յովհաննէս, Թիոննեսէնն։ Դինան, յետոյ Լոնա Կեսսելը եւ Օլաֆը պարտիզով գալիս են)։

Օր. Հես Բարև, սիրելիներս, բարև։

Յովհ. Ռիքարդ, մենք դիտում էինք ծանօթ վայրերը։

Բեր. Այո՛ ես իմացայ։ Քաղաքում բաւականին փոփոխութիւններ են եղել, այնպէս չէ՞։

Օր. Հես. Իւրաքանչիւր քայլափոխում նշմարւում են քաղաքապետ Բերնիկի մեծ և գեղեցիկ գործերը... Մենք հասարակաց այն այգում էինք, որը դու ես նուիրել քաղաքին...

Բեր. Եւ, այնտե՞ղ։

Օր. Հես. Մուտքի վրայ արձանագրուած է «Քաղաքապետ Բերնիկի ընծան»։ Այո՛, ճշմարիտ, որ դու քաղաքիս առաջին մարդն ես...

Յովհ. Դու փառաւոր նաւեր էլ ունիս։ Ես պատահեցի «Արմաւենու» ծովապետին, որը դպրոցական դասընկերս է եղել։

Օր. Հես. Դու նմանապէս մի նոր ուսումնարան էլ ես շինել։

Յովհ. Ինչպէս իմացայ, քաղաքն ես պարտական է քեզ իւր ջրմուղով և գաղային լուսաւորութեամբ։

Բեր. Անշուշտ, պէտք է նպաստել այն հասարակութեան բարօրութեան, որի մէջ ապրում ես։

Օր. Հես Այդ շատ հաճելի է. բայց ժանաւանդ ուրախալի է լսել, երբ մարդիկ քեզ գնահատում են։ Ես կարծեմ սընապարծ չեմ, բայց չը կարողացայ ինձ զսպել, որ ամենքին, որոնց հետ մենք խօսում էինք, չասեմ, թէ մենք ես այդ ընտանիքին ենք պատկանում։

Հիլմ. Օ՞հ։

Օր Հես. Դու դարձեալ ՕՀ ե՞ս ասում։

Հիլմ. Ո՛չ, ես ա՛խ ասացի։

Օր. Հես. Բայց դուք այսօր այստեղ մենա՞կ էք։

Տ. Բեր. Այո՛ մենք մենակ ենք։

Օր. Հես. Ի մէջի այլոց, շուկայում պատահեցինք այդ «բարոյականներին». նրանք չափազանց զբաղուած ձևացրին իրենց, թէ և ժամանակ էլ չունէինք միմեանց հետ կանոնաւոր խօսելու։ Երէկ այստեղ էին «առաջադիմութեան» երեք դրօշակակիրները, նմանապէս և պաստորը։

Հիլմ. Քարոզչի օգնականը։

Օր. Հես. Ես պաստոր եմ ասում։ Բայց ասեցէք, ի՞նչ էք մտածում իմ աշխատութիւնների հետևանքի մասին։ Չէ՞ որ նա փառաւոր տպայ է դարձել։ Ո՞վ կարող է ճանաչել 15 տարի առաջ փախած չարաճճին։

Հիլմ. Ա՜հ...

Յովհ. Ա՜խ Լոնա, շատ մի պարծենար։

Օր. Հես. Միթէ ես քեզանով չը պէտք է հպարտանամ։ Տէր Աստուած։ Այդ մենակ գործն է, որ կեանքիս մէջ կատարած եմ։

Հիլմ. Լաւ... Օհ...

Լոնա. Այո՛ Յովհաննէս, երբ մտաբերում եմ այն ժամանակը, երբ մենք դատարկ ձեռքով այնտեղ սկսեցինք...

Հիմ. Դատարկ։ Խոստովանում եմ...

Օր. Հես. Ի՞նչ պիտի ասես։

Բեր. Հ՜ըմ։

Հիլմ. Այո՛, համարձակ կարելի է ասել... Օ՜հ, (պարտիզի սանդուղքով դուրս է գնում)։

Օր. Հես. Ինչ է պատահել նրան։

Բեր. Ա՜խ, թող նրան, նա միքիչ ջղային է։ Արդեօք չե՞ս կամենում պարտէզ գնալ. դու դեռ այնտեղ չես եղել, իսկ ես այժմ ազատ եմ։

Օր. Հես. Ամենայն սիրով։ Կարող էք ինձ հաւատալ, որ ես շատ անգամ երևակայութեամբ ձեզ մօտ պարտիզումն եմ եղել։

Տ. Բեր. Օ՜, դու մեծ փոփոխութիւններ կը տեսնես այնտեղ (Քաղաքապետը, կինը եւ օրիորդ Հեսսէլը գնում են պարտէզ եւ սկսում զբօսնել)։

Օլաֆ. (պարտիզի դռան մօտ)։ Հօրեղբայր Հիլմար, գիտե՞ս թէ ինչ հարցրեց ինձնից քեռի Յովհաննէսը. արդեօք չե՞մ կամենում նրա հետ Ամերիկա գնալ։

Հիլմ. Դու, յիմարի գլուխ, դու դեռ մօրդ փեշից բռնած ես ման գալիս...

Օլաֆ. Բայց ես այլևս այդ չեմ ցանկանում։ Ահա, երբ ես կը մեծանամ...

Հիլմ. Դատարկ բառեր, յիմար, դու ամենևին հակում չունես դէպի վեհագոյն սխրագործութիւնները։ (Երկուսն էլ պարտէզ են գնում)։

Յովհ. (Դինային, որը գլխարկը վերցրել եւ աջ կողմի դռան մօտ կանգնած իր հագուստի փոշին է թափ տալիս)։ Զբօսանքը ձեզ զուարթացրեց։

Դինա. Ո՜հ ես հիացած եմ... Ես դեռ այդպիսի գեղեցիկ զբօսանք չեմ կատարել։

Յովհ. Մի՞թէ դուք առաւօտները սակա՞ւ էք զբօսնում։

Դինա. Ոչ, բայց միշտ Օլաֆի հետ։

Յովհ. Այդպէս։ Դուցէ ցանկանո՞ւմ էք պարտէզ գնալ։

Դինա. Ոչ, նախապատւում եմ այստեղ մնալ։

Յովհ. Ես նոյնպէս... Ուրեմն մենք իւրաքանչիւր առաւօտ միասին կը զբօսնենք...

Դինա. Ո՛չ, թիոննեսէն, աւելի լաւ է այդպէս չանենք։

Յով. Ինչո՞ւ։ Չէ՞ որ դուք խոստացաք։

Դինա. Այո՛... բայց... ես դրա մասին մտածեցի...Դուք չպէտք է ինձ հետ զբօսնէք։

Յով. Բայց ինչո՞ւ համար։

Դինա. Որովհետև... Դուք այստեղ օտար էք և չէք հասկանում դորձի էութիւնը, սակայն ես կը բացատրեմ ձեզ...

Յովհ. Խնդրեմ։

Դինա. Բայց աւելի լաւ կը լինի այդ մասին լռենք։

Յովհ. Ի՞նչ էլ որ լինի, դուք կարող էք ինձ հետ առանց ամաչելու խօսել։

Դինա. Ուրեմն, ես ձեզ պիտի ասեմ... թէ ես միւս օրիորդներին նման չեմ... Ես բոլորովին ուրիշ... Ուստի և պարզ է թէ ինչու ինձ հետ չպիտի զբօսնէք։

Յովհ. Բայց ես ձեզ բոլորովին չեմ հասկանում... մի՞թէ դուք մի վատ բան էք արել։

Դինա. Ե՞ս, ոչ, բայց խնդրեմ էլ չխօսենք դրա մասին։ Դուք այդ բանը անկասկած ուրիշներից կը լսէք։

Յովհ. Հ՞ըմ։

Դինա. Բայց ես կը ցանկայի հարցնել...

Յովհ. Ինչի՞ մասին։

Դինա. Ասում են, որ Ամերիկայում դիւրին է կանոնաւոր ապրելը։

Յովհ. Այնքան էլ հեշտ չէ սկզբում, պէտք է շատ աշխատել։

Դինա. Հենց ես էլ այդ եմ ցանկանում։

Յովհ. Դո՞ւք։

Դինա. Այո, ես ընդունակ եմ աշխատելու. ես առողջ և ուժեղ եմ և Մարթան ինձ շատ բաներ է սովորեցրել։

Յովհ. Ուրեմն ի՞նչ ունիք մտածելու, գնանք միասին։

Դինա։ Բայց դուք կատակ էք անում. Օլաֆին էլ դուք նոյնը ասացիք։ Նախ ինձ ցանկալի էր իմանալ, թէ մարդիկ այնտեղ շա՞տ... շա՞տ բարոյական են։

Յովհ. Բարոյակա՞ն։

Դինա. Այո՛, ես կը ցանկանայի իմանալ, թէ արդեօք մարդիկ այնտեղ նոյնպէս համեստ և լաւ են կրթուած, որպէս մեզ մօտ։

Յովհ. Այնուամենայնիւ այնտեղ մարդիկ այնչափ էլ վատ չեն, ինչպէս այստեղ են կարծում նրանց մասին։ Այդ առթիւ երկիւղ մի կրէք

Դինա. Դուք ինձ չէք հասկանում, ընդհակառակն ես կը ցանկանայի, որ այնտեղ մարդիկ այդչափ համեստ և բարոյական չլինէին,

Յովհ. Իրո՞ք։ Հետևապէս դուք ի՞նչպէս կը ցանկանայիք։

Դինա. Ես կը ցանկանայի, որ նրանք բնական լինէին...

Յովհ. Դուցէ նրանք հենց այդպիսի մարդիկ են։

Դինա. Ուրեմն Ամերիկան կատարելապէս համապատասխան է իմ ձգտումներին։

Յովհ. Հարկաւ, ուրեմն գնանք միատեղ։

Դինա. Ո՛չ, ես պէտք է առանձին գնամ այնտեղ. ես այնտեղ կարող եմ նպատակիս հասնել և անկախ լինել։

Բեր. (Երկու տիկինների հետ կանգնած է պարտիզի սանդուխի առաջ) Սիրելի Բեատի, սպասիր, սպասիր, ես կը բերեմ. դու կարող ես մրսել։ (Մտնում է սալոն եւ իւր կնոջ շալը փնտռում)։

Տ. Բեր. (պարտիզից) Յովհաննէս, դու էլ արի, մենք ժամադիր ենք դէպի քարայրը գնալ։

Բեր. Ո՛չ, Յովհաննէսը պէտք է այստեղ մնայ. Դինա, վերցրու տիկնոջ շալը և նրան ուղեկցիր։ Սիրելի Բեատի, Յովհաննէսը ինձ մօտ կը մնայ։ Ես նրանից Ամերիկայի մասին շատ բաներ ունիմ հարցնելու։

Տ. Բեր. Լաւ, լաւ։ Բայց յետոյ արի, դու գիտես մեր տեղը։ (Տ. Բերնիկը, օրդ. Հեսսելը եւ Դինան ձախ կողմով պարտիզով գնում են)։

Բեր. (միաժամանակ գնացողներին նայելուց յետոյ փակում է ձախ կողմի երկրորդ դուռն եւ գալիս է Յովհաննէսի երկու ձեռքերից բռնում ու սեղմում) Վերջապէս մենք միայնակ ենք, Յովհաննէս։ Թոյլ տուր ինձ այժմ յայտնել խորին շնորհակալութիւնս։

Յովհ. Ինչո՞ւ համար։

Բեր. Տուն, հայրենիք, ընտանեկան երջանկութիւն, հասարակութեան մէջ իմ քաղաքացիական դիրքը—այս բոլորի համար ես միայն քեզ եմ պարտական։

Յովհ. Շատ ուրախ եմ, սիրելի Ռիքարդ։ Ուրեմն այն յիմար պատմութիւնն իւր լաւ հետևանքն ունեցաւ...

Բեր. (կրկին սեղմում է նրա ձեռները) Շնորհակալ եմ, սրտանց շնորհակալ։ Հազար մարդկանցից և ոչ մէկը կանէր այն բոլորը, ինչ որ դու ինձ համար արիր.

Յովհ. Այդպէս էլ պէտք է լինէր։ Չէ՞ որ մենք այն ժամանակ երկուքս էլ երիտասարդ և թեթևամիտ էինք. մեզանից մէկը յանցանքը իւր վրայ պիտի վերցնէր...

Բեր. Բայց մեղաւորը պէտք է պատասխանատուն լինէր, այնպէս չէ՞։

Յովհ. Սպասիր։ Այն ժամանակ դրա համար անմեղը պէտք է պատասխանէր։ Ես որբ, միայնակ և ազատ էի. բայց քո պառաւ մայրդ դեռ կենդանի էր և դու ծածուկ նշանուել էիր Բեատիի հետ, որը քեզ այնքան սիրում էր. ինչ կանէր նա, եթէ իմանար...

Բեր. Ի հարկէ, ի հարկէ. բայց...

Յովհ. Միթէ և Բեատին չէր պատճառը, որ դու կտրեցիր յարաբերութիւնը տիկին Դորֆի հետ։ Տրամադրուած լինելով միանգամայն վերջ տալ այդ բարեկամութեան, դու գնացիր նրա մօտ այն նշանաւոր երեկոն...

Բեր. Այո, այն դժբախտ երեկոյեան, երբ այն հարբած գազանը տուն վերադարձաւ... ճշմարիտ է, Յովհաննէս, ես այդ արեցի միայն Բեատիի համար, բայց այնուամենայնիւ մեծ վեհանձնութիւն է տխուր հռչակ ստանալ և թողնել հայրենիքը...

Յովհ. Ի՞նչ հաշիւներ ես անում, սիրելի Ռիքարդ. մենք այդպէս վճռեցինք. որովհետև դու բարեկամս էիր և պէտք է ազատուէիր։ Այդ ընկերութեան համար ես վերին աստիճանի հպարտ էի։ Ես իբրև դրասենեակի մի ծառայ ճնշուած էի աշխատանքից, երբ դու արտասահմանում ճանապարհորդելուց յետոյ վերադարձար իբրև կատարեալ կրթուած և վայելուչ մարդ, որը ապրել է թէ Լոնդոնում և թէ Փարիզում։ Յետոյ դու ինձ մտերիմ ընկերդ դարձրիր, թէև ես քեզանից չորս տարով ջահել էի. անկասկած դու այդպէս արիր, որովհետև Բեատիի վրայ սիրահարուած էիր. այդ բանը ինձ համար այժմ պարզ է։ Բայց այն ժամանակ ինչպէս ես դրանով հպարտանում էի, և ո՞վ չէր հպարտանալ։ Ո՞վ ինքնայօժար քեզ համար չէր զոհուիլ, մանաւանդ որ գործի հետևանքը միայն մասնաւոր բամբասանք էր, որը պիտի տևէր շաբաթներ, իսկ դրանից յետոյ պէտք է մի նոր աշխարհ փախչէիր։

Բեր. Հ՜ըմ... Սիրելի Յովհաննէս, ես քեզ ճիշտ խոստովանում եմ, որ այդ պատմութիւնը մինչև այժմ էլ չէ մոռացուել։

Յովհ. Իրօ՞ք։ Է՜հ, ինձ ինչ փոյթ՝ երբ ես նորից իմ կալուածքս եմ վերադառնալու...

Բեր. Ուրեմն դու մեկնելու ես։

Յովհ. Հասկանալի է։

Բեր. Բայց յուսով եմ, որ շուտ չես գնալ։

Յովհ. Որքան կարելի է շուտ. ես միայն Լոնայի խնդրով եմ այստեղ եկել։

Բեր. Մի՞թէ, ինչո՞ւ։

Յովհ. Ահա թէ ինչու։ Գիտես, որ Լոնան ջահել չէ և մի քանի ժամանակից ի վեր հայրենիքի կարօտով տանջւում էր, թէև չէր խոստովանում։ (Ծպտալով)։Նա ինչպէ՞ս կարող էր ինձ նման մի թեթևամիտ երիտասարդին միայնակ թողնել, մի մարդու, որը արդէն 19 տարեկանից սկսած...

Բեր. Յեռոյ։

Յովհ. Այո, Ռիքարդ, ես այժմ քեզ մի բան պէտք է խոստովանեմ, որի համար շատ եմ ամաչում։

Բեր. Մի՞թէ դու նրան պատմի՞լ ես իսկական ճշմարտութիւնը։

Յովհ. Այո, այդ թէև պախարակելի է, բայց ուրիշ կերպ ես չէի կարող վարուել։ Դու անկարող ես երևակայել, թէ Լոնան ինձ հետ ինչպէս էր։ Նա ինձ համար իբրև հարազատ մի մայր է եղել։ Առաջին տարիները, երբ մենք այնտեղ թշուառ կացութեան մէջ էինք, նա չափից դուրս աշխատեց։ Իսկ երբ ես երկար ժամանակ տկար էի և ոչինչ չէի վաստակում, նա սկսեց սրճանոցներում երգել, և ես այդ չէի կարող արգելել—երգիծարանական դասախօսութիւններ կարդալ և ի վերջոյ մի գիրք յօրինեց, որը հէնց ինքը ծաղրեց, և այդ բոլորը նա անում էր միայն ինձ պահպանելու համար։ Մի՞թէ ես սառնասիրտ պիտի մնայի նկատելով, թէ ինչպէս հայրենիքի կարօտը նրան լափում է, մի այնպիսի անձնաւորութեան, որ ինձ համար աշխատել և չարչարուել էր։ Այն ժամանակ ես նրան ասացի. «Գնա, Լոնա, ինձ համար մի՛ հոգար, ես այնպէս թեթևամիտ չեմ, ինչպէս դու ես կարծում»։ Եւ յետոյ ես նրան ամէն բան պատմեցի։

Բեր. Եւ ի՞նչպէս ընդունեց նա այդ։

Յովհ. Նա պատասխանեց, և կատարելապէս իրաւացի, թէ քանի որ ես ինձ մեղաւոր չեմ զգում, հեռապէս կարող եմ նրա հետ այստեղ գալ... Բայց անհոգ եղիր, Լոնան ոչինչ

չի պատմիլ... Ահա քեզ ձեռքս։ Էլ չխօսենք հին պատմութեան մասին. բարերաղդաբար այդ միակ յանցանքն է, որ մեր խղճի վրայ ծանրացած է... Հիմա ես կամենում եմ օգուտ քաղել այս սակաւաթիւ օրերից, որ ձեր շրջանում պիտի անցնեմ։ Չես կարող երևակայել, թէ մենք այսօր առաւօտեան Դինայի հետ ի՞նչպէս լաւ զրօսանք արինք։ Ո՞վ կարող էր կարծել, որ այս փոքրիկ աղջիկը, որը երբեմն բեմի վրայ հրեշտակներ էր ներկայացնում.... բայց ասա՛ խնդրեմ, ի՞նչ եղաւ նրա ծնողների վերջը...

Բեր. Ա՜խ, սիրելիս, ես արդէն այդ բանի մասին քո գնալուց յետոյ գրել եմ, և դրանից աւելի չեմ կարող ասել։ Դու անշուշտ երկու նամակս էլ ստացել ես։

Յովհ. Այո, այո, երկու նամակդ էլ մինչև այժմ ունիմ։ Իսկ այն գարշելի արբեցողը ուրեմն թողեց կնոջը։

Բեր. Եւ իւր զեղխութիւնից սպանուեց։

Յովհ. Կինն էլ նոյնպէս շուտով մեռաւ, չէ՞։ Բայց դու այդ կնոջ համար աշխատեցիր, որքան կարողացար, այնպէս չէ՞։

Բեր. Այդ կինը հպարտ էր և ոչինչ չկամեցաւ ընդունել ինձանից։

Յովհ. Այնուամենայնիւ գովելի է, որ Դինային դու հովանաւորել ես։

Բեր. Ի հարկէ... Բայց իսկապէս այդ Մարթան ա՞րեց։

Յովհ. Մարթա՞ն։ Իրո՞ք, ճշմարի՞տ է. ի միջի այլոց՝ ո՞ւրտեղ է նա այսօր։

Բեր. Նա կամ իւր դասերով է զբաղուած կամ հիւանդներով։

Յովհ. Ուրեմն Մարթա՞ն է նրա համար հոգացել...

Բեր. Այո, նա արդէն վաղուց սէր ունէր դէպի կրթական գործը, ուստի և պաշտօն ստանձնեց ժողովրդական դպրոցում, թէև այդ նրա կողմից մի մեծ յիմարութիւն էր։

Յովհ. Այո, նա երէկ չափազանց յոգնած էր երևում. հազիւ թէ նրա առողջութիւնը ներէ նրան այդչափ գործելու։

Բեր. Նրա առողջութիւնը բաւականին լաւ է, սակայն այդ ինձ հաճելի չէ, կարող են կարծել, որ ես իբրև նրա եղբայրը, նրա ապրուստի մասին չեմ հոգում։

Յովհ. Ապրուստ։ Ես կարծում եմ, որ նա ապահովուած է։

Բեր. Նա կատարելապէս զուրկ է միջոցներից։ Դու անշուշտ յիշում ես, թէ ինչ ծանր վիճակի մէջ էր մայրս, երբ դու այստեղից հեռացար։ Մի առ ժամանակ մայրս իմ օգնութեամբ առևտուրը շարունակեց, բայց ի հարկէ անհնարին էր երկար շարունակել, ուստի ես մտայ ընկերութեան մէջ, բայց գործերը թոյլ էին ընթանում և ես ստիպուած էի ամբողջ ընկերութիւնը իմ ղեկավարութեան ներքոյ առնել, և երբ հաշուէկշիռ կազմեցինք, երևաց՝ որ մօրս բան չէ մնում։ Մայրս շուտով մեռաւ։ Մարթան էլ դատարկ ձեռքով մնաց։

Յովհ. Խեղճ Մարթա։

Բեր. Խեղճ։ Ինչո՞ւ։ Դու կարծում ես, թէ ես նրան առանց օգնութեան թողի։ Օ՜հ, ոչ . . . կարող եմ ինձ համար ասել, որ ես օրինակելի եղբայր եմ եղել... Նա ի հարկէ մեզ մօտ է ապրում և մեզ հետ ուտում, իսկ նրա ստացած ռոճիկը բաւ է վայելուչ հագնուելու համար։ Թէև նա կարող էր նախանձելի դիրք ունենալ, որովհետև նրան լաւ առաջարկութիւններ արին, որ միանգամայն զարմանալի է, մանաւանդ որ միջոցներից զուրկ է, ջահել էլ չէ և աննշան...

Յովհ. Աննշան։

Բեր. Ես դրա համար նրան չեմ յանդիմանում։ Եւ մինչև անգամ չէի ցանկանայ, որ նա փոխուէր։ (Քրապը ներս է գալիս աջ կողմից մի քանի թղթեր ձեռին)։

Քրապ. (ցածր ձայնով ցոյց տալով թղթերը) Առևտրական պայմանագրերը բոլորը պատրաստ են։

Բեր. Հիանալի է, հիանալի, խնդրեմ մի առ ժամանակ ինձ ներեա։ (Սեղմում է նրա ձեռքը)։ Շնորհակալ եմ, Յովհաննէս, շնորհակալ եմ։ Համոզուած եղիր, որ ես քեզ համար ամեն բան կանեմ, կարծեմ հասկանում ես ինձ։ Քրապ, դնանք։ (Քրապին տանում է իւր սենեակը)։

Յովհ. (միքանի վայրկեան դիտում է նրան) Հը՜մ... (կամենում է պարտէզ դնալ։ Այդ րոպէին աջ կողմից գալիս է Մարթա Բերնիկը մի զամբիւղ ձեռին)։ Ա՜հ, Մարթան։

Օր. Բեր. Դո՞ւ ես, Յովհաննէս։

Յովհ. Շտապում ես։ Երէկ դու ինձանից շարունակ խոյս էիր տալիս, ես չկարողացայ քեզ հետ խօսել, իսկ այսօր...

Օր. Բեր. Այո՛, բայց...

Յովհ. Առաջ մենք իրրև խաղընկերներ միշտ միասին էինք։

Օր. Բեր. Ա՜խ, Աստուած իմ. սրանից 18 տարի առաջ էր ոչ աւելի, ոչ պակաս։ Գուցէ քո կարծիքով ես շատ եմ փոխուել։ Թերևս մեր իրար կրկին տեսութեան համար այնքան էլ ուրախ չես, Մարթա։

Օր. Բեր. Ես դրան մեծ անհամբերութեամբ էի սպասում, Յովհաննէս։

Յովհ. Սպասում էիր, որ ես գամ։

Օր. Բեր. Այո՛։

Յովհ. Եւ ինչո՞ւ էիր կարծում, թէ անպատճառ պիտի վերադառնամ։

Օր. Բեր. Որպէսզի մեղքդ քաւես։

Յովհ. Ե՞ս։

Օր. Բեր. Մի՞թէ դու մոռացել ես, որ քո շնորհիւ մեռաւ մի կին ազքատութեան մատնուած և անարգուած։ Մոռացել ես, որ քո մեղքի շնորհիւ մի երեխայի ամենագեղեցիկ տարիները խաւարեցան։

Յովհ. Եւ այդ քեզանի՞ց պիտի լսեմ։ Մարթա, մի՞թէ քո եղբայրը երբէք...

Օր. Բեր. Եղբա՞յրս... ի՞նչ...

Յովհ. Մի՞թէ նա երբէք . . . այսինքն, կամենում եմ ասել. նա մի՞թէ երբէք ինձ համար մի պաշպանողական խօսք անգամ չէ՞ ասել։

Օր. Բեր. Յովհաննէս, մի՞թէ քեզ անծանօթ են Ռիքարդի խիստ սկզբունքները։

Յովհ. Հը՜մ... այո, այո, ես քաջ ծանօթ եմ իմ վաղեմի ընկեր Ռիքարդիս խիստ սկզբունքների հետ. բայց այդ... ես երբ նրա հետ խօսում էի, ինձ թւում էր, որ նա շատ է փոխուել։

Օր. Բեր. Ինչպէ՞ս կարող ես նրան դատապարտել։ Ռիքարդը միշտ մի կատարեալ մարդ է եղել։

Յովհ. Ես այդ չէի ուզում ասել... բայց թողնենք։ Հ՜ըմ... ինձ համար պարզ է, թէ ինչ գաղափար ունէիր դու իմ մասին. դու սպասում էիր ապերախտ որդու վերադարձին։

Օր. Բեր. Լսիր, Յովհաննէս, ես քեզ կասեմ, թէ ինչ էի երևակայում ես քո մասին։ (Յոյց է տալիս պարտէզը)։ Տեսնո՞ւմ ես այն օրիորդին, որ Օլգիի հետ խոտերի մէջ խաղում է։ Նա Դինան է։ Յիշո՞ւմ ես այն երկդիմի նամակը, որ դու գրել էիր ինձ՝ քո մեկնելուց առաջ։ Դու ինձ խնդրում էիր, որ քեզ վրայ վստահ լինիմ, և ես միշտ վստահ եմ եղել, Յովհաննէս։ Ասենք թէ այն բոլոր տխուր դէպքերը, որոնց մասին այստեղ լուրեր էին պատմում, կարող էին կատարուած լինել բոպէական անմտութիւնից կամ անխոհմութիւնից։

Յովհ. Ես քեզ չեմ հասկանում...

Օր. Բեր. Օ՜հ, դու ինձ շատ լաւ ես հասկանում, բայց լռենք։ Դու նոր կեանք սկսելու համար ստիպուած էիր այստեղից հեռանալ... Տեսնում ես, Յովհաննէս, ես՝ իբրև քո խաղակից ընկերը՝ այստեղ քո տեղն եմ բռնել։ Այն պարտականութիւնները, որ դու արհամարհեցիր, կամ հէնց չէիր կարող կատարել, ես ինձ վրայ առի և այդ քեզ ասում եմ, որպէսզի դու քեզ չնախատես։ Ես այն խեղճ մանուկի համար մայր դարձայ և կրթեցի նրան իմ ոյժերի ներածի չափ...

Յովհ. Եւ նրա համար ամբողջ կեանքդ զոհեցիր...

Օր. Բեր. Այդ ապարդիւն զոհ չէր, բայց դու ուշ ես եկել, Յովհաննէս։

Յովհ. Մարթա... եթէ միայն կարողանայի քեզ ասել... Բայց թող, որ քո անձնուէր բարեկամութեանդ համար շնորհակալութիւնս յայտնեմ։

Օր. Բեր. (ակամայից ժպտալով) Հը՜մ... Յովհաննէս, այժմ ամեն բան պարզեցինք... Լռիր, կարծեմ մէկը գալիս է։ Ցըտեսութիւն, չեմ կարող այժմ... (Զախ կողմի երկրորդ դռնով հեռանում է։ Օրիորդ Հեսսելը տիկին Բերնիկի ուղեկցութեամբ պարտիզից ներս է գալիս)։

Տ. Բեր. (պարտիզում) Բայց ի սէր Աստուծոյ, Լոնա, ի՞նչ պատահեց քեզ։

Օր. Հես. Թող, ասում եմ քեզ, ես պարտաւոր եմ և պէտք է նրա հետ խօսեմ։

Օր. Բեր. Մտածիր թէ ինչ խայտառակութիւն կը լինի։ Ա՜խ, Յովհաննէս, դու դեռ այստե՞ղ ես։

Օր. Հես. Գնա դուրս, ի՞նչ գործ ունիս այս սենեակում, գնա պարտէզ և Դինայի հետ խօսիր։

Յովհ. Ես հենց մտադիր էի...

Տ. Բեր. Բայց...

Օր. Հես. Լսիր, Զոն, դու Դինայի վրայ կարգին ուշադրութիւն դարձրի՞լ ես։

Յովհ. Կարծեմ։

Օր. Հես. Դու նրա վրայ լուրջ ուշադրութիւն պիտի դարձնես։ Նա իսկ և իսկ համապատասխան է քեզ։

Տ. Բեր. Բայց, Լոնա՜...

Յովհ. Ի՞նձ։

Օր. Հես. Այո, այդպէս եմ կարծում։ Դէ՛հ, գնա։

Յովհ. Մեծ բաւականութեամբ։ (Գնում է պարտէզ)։

Տ. Բեր. Լոնա, դու ինձ ապշեցնում ես։ Մի՞թէ լո՞ւրջ ես խօսում։

Օր. Հես. Անկասկած։ Դինան թարմ, առողջ և օրինաւոր աղջիկ է։ Նա կատարեալ հարմնացու է Զոնի համար։

Տ. Բեր. Դինա՜ն, Դինա Դո՞րֆը։ Գոնէ մտածիր։

Օր. Հես. Ես նախ և առաջ նրա երջանկութեան մասին

եմ մտածում։ Պէտք է Զոնին օգնեմ, որովհետև նա օրիորդ-ների և կանանց հետ վարուել չգիտէ։

Տ. Բեր. Նա, Յովհաննէսը... իսկ ես կարծում եմ, թէ նա այդ առթիւ ընդհակառակն բաւական պերճախօս փաստեր է տուել։

Or. Հես. Խնդրեմ, այդ յիմար պատմութիւնը նորից մի յիշիր։ Ո՞ւր է Բերնիկը. ես նրա հետ պիտի խօսեմ։

Տ. Բեր. Լոնա, կրկնում եմ որ թողնես։

Or. Հես. Անպատճառ ցանկանում եմ։ Եթէ նրանք իրարու համակրում են, ուրեմն ինչու չպիտի ամուսնանան։ Բերնիկը խելօք մարդ է, և նա մի հնար ցոյց կը տայ...

Տ. Բեր. Ես մինչև անգամ չեմ հասկանում, թէ դու ինչպէս կարող ես նրա աչքերին նայել, այն ծանր և կոպիտ անպատուութիւնից յետոյ, որ դու նրան հասցրիր...

Or. Հես. Այո, Բեատի, զգում եմ, թէ յանցաւոր եմ։

Բեր. Եւ ինչպէս ազնուաբար նա քեզ ներեց, նա, որ անմեղ էր։ Չէ՞ որ նա դատապարտելի չէ եթէ դու քեզ յոյսերով էիր կերակրում։ Բայց այն ժամանակից սկսած դու ինձ ես տեսնում։ (Արտասուում է)։ Դու միշտ աշխատել ես երջանկութիւնս խանգարել և այժմս, դժբաղտաբար, եկել ես այստեղ, որ ամբողջ քաղաքին ցոյց տաս, թէ ես Ռիքարդին ինչպիսի ընտանիքի մէջ եմ ձգել։ Այո, այդ է քո նպատակը։ Օ՜հ, որ աստիճանի զզուելի է։(Նա լալով, ձախ կողմի յետեւի դռնով հեռանում է)։

Or. Հես. (Նրա յետեւից նայելով) Խեղճ Բեատի։ (Բերնիկը գալիս է իւր սենեակից)։

Բեր. (դռան մօտ կանգնած) Այո, շատ գեղեցիկ, պ. Քրապ, շատ գեղեցիկ, ազքատների և մուրացկանների խնամատար ընկերութեան 500 մարկ ուղարկեցէք։ (Յետ է դառնում)։ Լոնա, (Մօտենում է). դու միայնա՞կ ես։ Բեատին այստեղ չպէտք է՞ դայ։

Or. Հես. Ո՛չ, կանչեմ նրան։

Բեր. Ո՛չ, ո՛չ, թող նրան։ Օ՜հ, Լոնա, քեզ յայտնի չէ,

թէ ես ինչպէս փափագում էի քեզ հետ պարզ խօսել, ներողութիւն խնդրել։

Or. Հես. Լսիր, Ռիքարդ, թողնենք զզայնականութիւնը, որովհետև մեզ չէ սազում։

Բեր. Լոնա, պէտք է ինձ լսես։ Ես գիտեմ, թէ ապացոյցներն ինձ դէմ էին. քեզ նմանապէս յայտնի է ամեն ինչ Դինայի մօր մասին, բայց երդւում եմ, որ այդ միայն վաղանցուկ հրճուանք էր. կար մի ժամանակ, երբ քեզ անկեղծ սիրում էի։

Or. Հես. Ի՞նչ ես կարծում, ինչն է ստիպել ինձ այստեղ վերադառնալու։

Բեր.. Չգիտեմ. բայց աղաչում եմ, ոչ մի դիտաւորութեանդ ձեռնամուխ չլինես, մինչև որ ես ինձ չարդարացնեմ։ Իսկ ես կարող եմ ինձ արդարացնել, Լոնա, դոնէ...

Or. Հես. Դու արդէն վախենում ես։ Ասում ես, թէ մի ժամանակ ինձ սիրել ես։ Այո, դու նամակներումդ հաւաստիացնում էիր և գուցէ հիշդ, քանի որ դու արտասահմանում ազատ երկրումն էիր ապրում, որը քեզ խրախուսում էր ազատ և լայն կերպով մտածելու։ Գուցէ քո կարծիքով ես աւելի անկախ բնաւորութիւն ունէի, քան թէ այս տեղի միւս աղջիկները։ Եւ մանաւանդ դա մեր մէջ մի գաղտնիք էր և ոչ ոք բացարձակ կարող էր քո վատ ճաշակը ծաղրել։

Բեր. Լոնա, ինչո՞ւ ես մտածում,..

Or. Հես. Բայց երբ դու հայրենիք վերադարձար և տեսար, թէ ինչպիսի գոյներով են ինձ նկարագրում ու ծաղրում իմ օտարոտի սովորութիւնները...

Բեր. Այն ժամանակ դու ակնածութիւն չունէիր։

Or. Հես. Միայն այն նպատակով, որպէսզի այս քաղաքի երկու սեռի փարիսեցի էակներին զայրացնեմ։ Բայց դու այն նաղելի զերասանուհու հետ ծանօթացար...

Բեր. Այդ տղայական խաղ էր...

Or. Հես. Գուցէ, բայց երբ գեղեցիկ, չքնաղ և բոլորի պաշտած Բեատին տուն վերադարձաւ և յայտնի եղաւ ամեն-

քին, որ նա իւր մօրաքրոջ ամբողջ կարողութիւնն է ժառանգելու, իսկ ես ոչինչ...

Բեր. Ահա մենք հասանք էական կէտին, Լոնա, այժմ խնդրեմ ինձ լսիր: Ես այն ժամանակ Բեատրիսն չէի սիրում: Ես կորեցի քեզ հետ յարաբերութիւններս, ոչ թէ նրա համար, որ մի այլ զգացմունքի անձնատուր եղայ, քաւ լիցի, այլ դրա պատճառը դրամն էր, ես ստիպուած էի...

Or. Հեռ. Եւ դու համարձակւում ես հենց երեսիս ասել

Բեր. Այո, Լոնա, լսիր:

Or. Հեռ. Սակայն դու ինձ գրեցիր, որ քեզ պատել է մի անբուժելի զգացմունք դէպի Բեատրիս. դու կոչումն էիր անում իմ մեծահոգութեան և աղերսում լռել անցածի մասին...

Բեր. Ես ստիպուած էի, կրկնում եմ քեզ:

Or. Հեռ. Եթէ ճիշդ է, երդւում եմ Աբրաշի անունով, թէ բնաւ չեմ զղջում այն օրուայ վրայ, երբ ինձ մոռանալով, չզսպեցի ինձ...

Բեր. Թոյլ տուր, որ քեզ հանդիստ և անվրդով կերպով բացատրեմ մեր այն ժամանակուայ դրութիւնը: Ինչպէս յիշում ես, մայրս մեր գործի պարագլուխն էր, թէև ամենևին գործնական կին չէր: Ես ստիպուած էի Փարիզից շուտով վերադառնալ, ժամանակը կրիտիկական էր, ես պէտք է գործերի դրութիւնը ուղղէի: Բայց ի՞նչ դատայ: Ես դատայ մեր տունը բոլորովին աւերուած, և այդ իբրև դաղանիք պիտի մնար: Այո, մեր այդ երեք սերունդից մնացած նշանաւոր տունը համարեա թէ սնանկացած էր. ինձ. իբրև միակ ժառանգի՝ մնում էր նրան փրկելու միջոց գտնել:

Or. Հեռ. Եւ դու Բերնիկի տունը մի կնոջ դրամական միջոցներով փրկեցիր:

Բեր. Դիտես, որ Բեատրիս ինձ շատ է սիրում:

Or. Հեռ. Իսկ ի՞նչ:

Բեր. Հաւատացիր, Լոնա, դու երբէք չէիր կարող ինձ հետ երջանիկ լինել:

Or. Հեռ. Ուրեմն երջանկութեանս համար թողեցիր ինձ:

Բեր. Եւ դու կարծում ես, թէ ես անձնասիրական միտումներից դրդուած եմ այդպէս վարուել: Եթէ այն ժամանակ միայնակ լինէի, հանդիստ սրտով ու քաջութեամբ նոր կեանք կըսկսէի: Դէթ մտածում ես այն մասին, թէ այն հասարակութիւնը, որ ես և դու մերն ենք կոչում, Բերնիկի տան անկումից մեծ կորուստ պիտի ունենար:

Or. Հեռ. Ուրեմն այս 18 տարուայ ընթացքում հասարակութեան բարեկեցութեան համար էիր ստախօսութեան վրա յենուելով գործում:

Բեր. Ստախօսութեա՞ն:

Or. Հեռ. Բեատրիս արդեօք գիտէ՞, ի՞նչ է կատարուել մինչև ձեր ամուսնութիւնը և յետոյ:

Բեր. Կարծում ես, որ ես կը ցանկայի նրա զգացմունքները մի խոստովանութեամբ աննպատակ վիրաւորել:

Or. Հեռ. Աննպատակ ես ասում. այո, այո, դու գործնական մարդ ես և լաւ ես հասկանում շահը: Բայց այժմ լսիր, Ռիքարդ. ես նոյնպէս կամենում եմ սառն և հանդիստ խօսել: Ասա ինձ, արդեօք քեզ երջանի՞կ ես զգում:

Բեր. Ընտանիքո՞ւմ:

Or. Հեռ. Այո:

Բեր. Այո, Լոնա: Եւ պէտք է ասեմ, թէ տարէց տարի աւելի եմ երջանկացել:

Or. Հեռ. Բայց համաքաղաքացիներդ ստախօսութեանդ մասին տեղեկութիւն չունի՞ն:

Բեր. Ստախօսութեանս մասի՞ն:

Or. Հեռ. Այո, այն ստախօսութեան մասին, որով դու քօղարկել էիր ամբողջ 18 տարի...

Բեր. Եւ դու այդ անուանում ես...

Or. Հեռ. Այո, ստախօսութիւն: Եռապատիկ սուտ, որովհետև դու ստել ես առաջինը դէպի քեզ, երկրորդ դէպի Յովհաննէսը:

Բեր. Բեատրիս ինձնից երբէք խոստովանանք չէ պահանջել:

Or. Հեռ. Որովհետև նա ոչինչ չգիտէ:

Բեր. Եւ դու էլ հարկաւ ինձնից չես պահանջիլ, որ ես այդ բանի մասին նրան պատմեմ, որովհետև դու ես համաձայնում ես Բէտտիին։

Օր. Հես. Այո, ես կարող եմ արհամարհանքներ տանել, ըստ որում համբերող արարած եմ։

Բեր. Յովհաննէսը նոյնպէս չի պահանջիլ, որովհետև նա ինձ այդ արդէն խոստացել է։

Օր. Հես. Բայց դու, Ռիքարդ, մի՞թէ չունիս այնքան վեհութիւն, որ թօթափես քեզանից այդ սուտը։

Բեր. Դու ուզում ես, որ ես ինքնայօժար կերպով զոհեմ ընտանեկան երջանկութիւնս և հասարակական դիրքս։

Օր. Հես. Բայց դու ի՞նչ իրաւունք ունիս երջանիկ լինելու։

Բեր. 15 տարուան ընթացքում քայլ առ քայլ վաստակում էի թէ իմ գործունէութեամբ և թէ իմ բարք ու վարքով։

Օր. Հես. Այո, դու շատ ես աշխատել թէ քեզ և թէ այլոց համար։ Դու այս քաղաքի ամենահարուստ և ամենաազդեցիկ մարդն ես։ Բոլորը հնազանդւում են քո կամքին, ճանաչելով քեզ իբրև մաքուր և ամբիծ մարդ. քո կեանքը ու տունը օրինակելի են համարւում, սակայն, այդ վեհութիւնը, պատիւը ճահճային հողի վրայ է կանգնած։ Կըգայ մի վայրկեան, մի բառ կարտասանուի, և դու մի ակնթարթում պատուի փարթամութեանդ հետ միասին կարող ես խորտակուել, եթէ ժամանակին չապահովացնես և չազատուես։

Բեր. Լռնա՞, ի՞նչ մտադրութեամբ ես այստեղ եկել։

Օր. Հես. Որպէսզի քեզ օգնեմ և դու ոտիդ տակը հաստատ հող ունենաս։

Բեր. Վրէ՞ժ։ Դու կամենում ես վրէժ առնել։ Ես դրան վաղուց էի սպասում։ Բայց այդ քեզ յաջողուելու չէ։ Այստեղ միայն մէկը իրաւունք ունի խօսելու, բայց նա լռում է։

Օր. Հես. Յովհաննէսը։

Բեր. Այո, Յովհաննէսը։ Եթէ մի ուրիշը համարձակուի

մեղադրել ինձ, ամեն բան կուրանամ։ Եթէ ինձ կամենան խորտակել, մահու և կենաց կռիւ կը մղեմ։ Նորից կըրկնում եմ, այդ քեզ յաջողուելու չէ։ Նա, որը կարող է ինձ խայտառակել—նա լռում է։ Նա հեռանում և գնում է։ (Ռումմէլն եւ Վիգելանդը աջ կողմից գալիս են)։

Ռում. Ողջոյն, սիրելի Բերնիկ. դու մեզ հետ պէտք է առևտրական ժողովարանը գաս. երկաթուղու մասին ժողով ունինք։

Բեր. Այժմ չեմ կարող։

Վիգել. Հաստատ, պէտք է մեզ հետ գաք։

Ռում. Այո Բերնիկ, անհրաժեշտ է։ Այնտեղ մարդիկ կան, որոնք մեզ հակառակ են գործում։ Խմբագիր Համմէրն և մի քանի ուրիշ անձինք, որոնք առաջ երկաթուղու ծովեզրեայ գիծն էին պաշտպանում, այժմ ամեն տեղ տարածում են, թէ նոր առաջարկութեան տակ մասնաւոր շահեր են թաղնուած։

Բեր. Ուրեմն բացատրեցէք նրանց որ...

Վիգ. Մեր բացատրութիւնը նշանակութիւն չունի, պարոն քաղաքապետ։

Ռում. Ո՛չ, ո՛չ, դու էլ պէտք է մեզ հետ գաս. ոչ ոք կը համարձակուի քո դէմ կասկած արտայայտելու։

Օր. Հես. Ի հարկէ, ոչ...

Բեր. Ասում եմ ձեզ, չեմ կարող։ Ես տկար եմ....կամ... գնէ... թողէք, որ քիչ կաղդուրուեմ։ (Աջ կողմից Նեքս է գալիս Բորլանդը)։

Բորլ. Ներեցէք, պ. քաղաքապետ. դուք տեսնում էք իմ շփոթմունքը...

Բեր. Այո, ի՞նչ է պատահել։

Բորլ. Պ. քաղաքապետ. ձեզ պէտք է մի հարց առաջարկեմ։ Արդեօք ձեր թոյլտուութեամբն է այն մատաղահաս օրիորդը, որը ձեր յարկի տակ ապաստանարան է գտել, բացարձակ երևում փողոցում մի այնպիսի մարդու ուղեկցութեամբ, որը...

Օր. Հես. Ո՞ւմ մասին էք խօսում, պարոն պաստոր։

Բոր. Մի այնպիսի պարոնի մասին, որից այդ օրիորդը բոլորովին պէտք է խոյս տայ։

Օր. Հեռ. Օ՜հ...

Բոր. Ձեր թոյլտուութեամբ է նա այդպէս անում, պարոն քաղաքապետ։

Բեր. (գլխարկն եւ ձեռնոցներն որոնելով) Ոչինչ չգիտեմ։ Նեղողութիւն, ես ժողովի եմ շտապում։

Հիլմ. (պարտիզից գալիս եւ ձախ կողմի երկրորդ դռան մօտ կանգնում է) Բեատի, Բեատի, այստեղ եկ։

Բեր. (դռան մօտ) Ի՞նչ կայ։

Հիլմ. Գնա պարտէզ և վերջ տուր այն սիրահարութեան, որ մի պարոն Դինա-Դորֆի հետ թոյլ է տալիս իրան։ Այդ հանդամանքը բոլոր ջղերս գրգռեց։

Օր. Հեռ. Իրօ՞ք։ Եւ ի՞նչ էր ասում այն պարոնը Դինային։

Հիլմ. Նա այն աղջկան համոզում էր իւր հետ Ամերիկա գնալ, ոչ աւելի, ոչ պակաս։ Օ—ճհ...

Բոր. Միթէ հնարաւո՞ր է։

Տ. Բեր. Ի՞նչ ես ասում։

Օր. Հեռ. Այդ հրաշալի բան կը լինէր։

Բեր. Անկարելի բան է։ Դու երևի լաւ չես լսել, Հիլմար։

Հիլմ. Կարող ես իրան հարցնել։ Ահա զոյգը գալիս է։ Միայն ինձ մի խառնիր։

Բեր. (Ռումմելին եւ Վիզելանդին) Ես խնդրում ձեր եռևից կը գամ... (Ռումմելն եւ Վիզելանդը աջ կողմով դուրս են գնում։ Յովհաննէսը եւ Դինան պարտիզից գալիս են)։

Յովհ. Կեցցէ Լոնան, նա էլ մեզ հետ է գալիս։

Տ. Բեր. Բայց Յովհաննէս, այդ թեթևամտութիւն է։

Բոր. Մի՞թէ կարելի է։ Ի՞նչ սարսափելի խարդաւանանք... ստոր միջոցներով...

Յովհ. Կամաց, կամաց, բարեկամս, ինչ էք ասում։

Բոր. Պատասխանեցէք ինձ Դինա...դուք մտադի՞ր էք... դուք կատարեալ կերպով խորհե՞լ էք...

Դինա. Ես պէտք է այստեղից հեռանամ...

Բոր. Բայց նրա՞ հետ... նրա՞ հետ։

Դինա. Յոյց տուէք մի ուրիշը, որ քաջութիւն ունենար ինձ իւր հետ վերցնելու...

Բոր. Այդ, դուք պէտք է իմանաք, թէ ով է նա։

Յովհ. Լսեցէք։

Բեր. Ոչ մի խօսք։

Բոր. Ես անարժան սպասաւոր կը լինէի հասարակութեան, որի բարոյականութեան պահապանն եմ, աննեբելի յանցանք կը լինէր իմ կողմից մի օրիորդի վերաբերմամբ, որի դաստիարակութեան մեծ չափով մասնակցած եմ, և որը...

Յովհ. Զգուշացէք...

Բոր. Ո՛չ, նա պէտք է իմանայ։ Դինա, այս մարդն է ձեր մօր դժբախտութեան և անարգանաց պատճառը։

Բեր. Պարոն քարոզիչ...

Դինա. Նա՞։ (Յովհաննէսին) Ճի՞շդ է։

Յովհ. Ռիքարդ, դու պէտք է պատասխանես։

Բեր. Ոչ մի խօսք այլ ևս։ Այսօր ոչ մի խօսք չլինի։

Դինա. Ուրեմն ճշմարիտ է...

Բոր. Այո, ճշմարիտ է, ճշմարիտ։ Եւ դրանից էլ աւելի։ Այս մարդն, որին վստահանում էք, դատարկ ձեռքով չէ փախել այս տեղից, այլ այրի Բերնիկի գանձով... քաղաքապետը կարող է վկայել։

Օր. Հեռ. Ստախօս։

Բեր. Օ՜հ...

Տ. Բեր. Ախ, Աստուած իմ, Աստուած իմ։

Յովհ. (ձեռքը բարձրացրած մօտենում է նրան) Դուք յանդգնում էք։

Օր. Հեռ. (նրան պահելով) Յովհաննէս, դու նրան դիպչելու չես։

Բոր. Այո, այո եթէ կամենում էք, կարող էք ինձ վրայ յարձակուել, բայց այնուամենայնիւ ճշմարտութիւնը պէտք է երևան գայ, իսկ իմ խօսքերը զուտ ճշմարտութիւններ են։

Պ. քաղաքապետը բոլորից առաջ է այդ ասել և բացի դրանից, ամբողջ քաղաքն արդէն իմանում է։ Ուրեմն այժմ ճանաչում էք նրան, Դինա։ (Մի բոպէ լռութիւն է տիրում)։

Յովհ. (Բերնիկի ձեռքից կամաց բռնում է) Այդ ի՞նչ ես ասել, Ռիքարդ։

Տ. Բեր. (արտասուելով) Օ՜հ, Ռիքարդ, այս խայտառակութեան համար ինձ ես պարտական։

Ալտշ. (աջ կողմից գալիս է եւ կանչում Բերնիկին, դռան մօտ կանգնելով) Դուք անպայման պէտք է շտապէք, պ. քաղաքապետ։ Երկաթուղու հարցը մագից է կախուած։

Բեր. (շփոթուած) Ի՞նչ է, ինչ են կամենում...

Օր. Հեռ. (լուրջ եւ կրքոտ) Պէտք է գնաս և հասարակութիւնը պաշտպանես իբրև նրա նեցուկը։

Ալտշ. Այո, գնանք, գնանք։ Եկէք, ձեր բարոյական հեղինակութիւնը մեզ անհրաժեշտ է։

Յովհ. (ցածր) Մենք այդ մասին վաղը առանձին կը խօսենք, Բերնիկ։ (պարտիզով հեռանում է։ Բերնիկն, ակամայ հետեւում է եւ աջ դռնով դուրս գնում)։

ՎԱՐԱԳՈՅՐ

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Քաղաքապետ Բերնիկի տան պարտիզի սալօնը։

(Սպանական ձեռնափայտը ձեռին, բարկացած դուրս է գալիս ձախ կողմի երկրորդ սենեակից եւ նրա դուռն իր ետեւից կիսաբաց է թողնում։

Բեր. Այդպէս. ուրեմն բանը լրջացել է։ Նա այն հարուածները այնպէս շուտ չէ կարող մոռանալ (սենեակում մէկին)։ Ի՞նչ ես ասում դու։ Իսկ ես քեզ ասում եմ, որ դու մի անխոհեմ մայր ես։ Դու ներում ես նրան, և նրա մէջքի վրայ շատ չարութիւններ ես բարդում։ Մի՞թէ այդ չարաճճիութիւն չէ։ Բայց դու ինչ ես անում այդ բանը։ Գիշերը ծածուկ տանից փախչել, ձկնորսների հետ նաւով դուրս գնալ, մինչև միւս առաւօտեան ժամը 10-ը ննջասուն մնալ և ինձ այդպիսով սաստիկ վախեցնել... Ինձ, որը այսքան շատ հոգսեր ունի։ Դեռ այդ բաւական չէ, այն կոպիտը դեռ սպառնում է փախչել։ Թող նա այդ բանը փորձի անել։ Դու, ի հարկէ, ես հաւատում եմ, չես ցաւիլ ինչ որ նրա հետ պատահի։ Ես հաւատացնում եմ որ նա եթէ իր կեանքը... մի՞թէ... բայց ես չեմ կարող երեխայից զրկուել։ Բետսի, էլ մի վիճիր, երեխան տանը պէտք է մնայ։ (մի ձայն է լսւում)։ Հանգիստ, թող ոչ-ոք չնկատէ այդ բանը։ (աջ կողմից գալիս է Քրապը)։

Քրապ. Մի բոպէ ժամանակ ունի՞ք, պարոն քաղաքապետ։

Բեր. (Զղում է սպանական փայտը) Այո՛, այո։ Դուք նաւագործարանի՞ցն էք գալիս.

Քրապ. Այո՛, ես ուղղակի այնտեղից եմ գալիս։ Հ՞ըմ...

Բեր. Այդպէս։ Ի՞նչ է դառել «Արմաւենին»։

Քրապ. «Արմաւենին» առաւօտը ծոցումն կը լինի։ Բայց...

Բեր. Բայց «Վիթ-ը»։ Ես իմանում էի որ այս յամառը...

Քրապ. «Վիթ-ը» նոյնպէս կարող է առաւօտը ծոցը մտնել, բայց ես չեմ կարծում, որ այդ շոգենաւը կարողանայ հեռու գնալ։

Բեր. Ի՞նչ էք ուզում ասել։

Քրապ. Ներողութիւն, պ. քաղաքապետ։ Այն դուռը բաց է և կարծում եմ մէկը այստեղ...

Բեր. (փակում է դուռը)։ Բայց ի՞նչ գաղտնիք ունիս դու ինձ ասելու։

Քրապ. Ի՞նչ... Այն անգործ Աուլերը մտադրութիւն ունի նաւը իր բոլոր մարդկանցով խորտակելու։

Բեր. Բայց, Աստուած իմ, ի՞նչպէս կարող էք դու այդ բանին հաւատալ։

Քրապ. Պ. քաղաքապե՛տ, ես ուրիշ կերպ չեմ կարող հաւատալ։

Բեր. Ուրեմն ինչ ունիք ինձ ասելու։

Քրապ. Իսկոյն ասեմ։ Դուք արդէն իմանում էք թէ նաւագործարանի գործերը ինչպէս դանդաղ են գնում, սկսած այն օրից, երբ մենք այդ նոր մեքենաներն և անվարձ բանւորներն ունինք...

Բեր. Այո՛, այո՛։

Քրապ. Բայց երբ ես այս առաւօտ այնտեղ գնացի և գործերը քննեցի, նկատեցի որ Ամերիկական նաւը սովորականից դուրս շուտով է նորոգուած. այդ նաւի փչացած յատակը արտաքուստ լաւ էր նորոգուած...

Բեր. Այո, այո, յետոյ։

Քրապ. Այդ նաւը արտաքուստ բոլորովին նորոգուած էր, և ինչպէս երևում է, նաւի փչացած տեղը նա մի բան է հագցրել, այնպէս որ նա նոր նաւի նման է երևում։ Ես լսեցի, որ Աուլերն նոյն իսկ ամբողջ գիշերը ճրագով այդ նաւով է զբաղուել։

Բեր. Այո՛, այո՛, յետոյ...

Քրապ. Ես գնացի այդ նաւը նայելու և որովհետև բանւորները նախաճաշիկ էին անում, դրա համար ես կարողացայ այդ բեռնուած նաւը ներսից և դրսից դիտելու, բայց ինչպէս դուք ուզում էք, այնուամենայնիւ այնտեղ մի բան է պակասում, պարոն քաղաքապետ։

Բեր. Ես այդ բանին չեմ կարող հաւատալ, պ. Քրապ։ Ես Աուլերից չեմ կարող և չեմ էլ ուզում մի վատ բան սպասել։

Քրապ. Ես ցաւում եմ, որ... Բայց այդ բանը մի մերկ ճշմարտութիւն է։ Ես կարծում եմ այնտեղ շատ բաներ են պատահում։ Որքան ես կարողացայ տեսնել, այդ նաւի համար նա նոր բաներ չէր շինել։ Միայն բարակ տախտակներով և մի քանի այդպիսի բաներով յատակը ծածկուած է։ Մի խօսքով, նրա արածը բոլորովին զուր աշխատանք է։ «Վիթ»-ը ամենևին չէ կարող Նիւ-Իորք հասնել։ Նա ծածկուած ամանի նման ջրի մէջ կը խորտակուի։

Բեր. Բայց այդ բանը սարսափելի է։ Ձեր կարծիքով նա դրանով ի՞նչ է մտադիր անելու։

Քրապ. Հաւանական է, որ նա դրանով ուզում է նոր մեքենաների վարկը ձգել, իր վրէժը հանել, և հին բանւորների գործը նորից լաւացնել։

Բեր Եւ այդ ձևով գուցէ շատ մարդկանց կեանքը զոհել...

Քրապ. Նա նորերս ասաց, որ «Վիթ»-ի վրայ եղածները մարդիկ չեն, այլ կենդանիներ։

Բեր. Այո՛, այո՛, գուցէ բայց մի՞թէ այն կապիտալի մասին չէ մտածում, որ դրանով պէտք է կորչի։

Քրապ։ Աուլերն այդ մեծ կապիտալի վրայ լաւ աչքով չէ նայում, պ. քաղաքապետ։

Բեր. Ի հարկէ, նա մի վաշխառու է. Բայց մի՞թէ կարելի է այդպիսի անխիղճ գործ կատարել։ Լսեցէք, պ. Քրապ, շոգենաւը նորից պէտք է քննել։ Ո՛չ մի մարդու չպատմես այդ բանի մասին։ Մեր նաւագործարանը վտանգի կենթարկուի եթէ մարդիկ դրա մասին լսեն։

Քրապ. Հասկանալի է, բայց...

Բեր. Փոխանակ կէս օրից յետոյ մի քիչ հանգստանալու, գնացէք և նորից քննեցէք նաւը Մենք պարտաւոր ենք խիղճ ունենալ։

Քրապ. Շատ լաւ, պ. քաղաքապետ, բայց ի՞նչ էք մտադիր յետոյ անելու։

Բեր. Ի հարկէ, պէտք է այդ բանի մասին յետոյ լրագիրներում յայտարարել։ Մի այդպիսի ոճրագործութեան համար մենք մեղ մեղաւոր չենք համարիլ։ Ես պէտք է խիղճս մաքուր պահեմ։ Բայց մամուլի և հասարակութեան վրայ լաւ տպաւորութիւն կը թողնէք, երբ նրանք տեսնեն, որ ես անձնական ակնածութիւններս մի կողմ թողած, արդարութեան համար եմ մտածում։

Քրապ. Շատ ճշմարիտ էք ասում, պարոն քաղաքապետ։

Բեր. Բայց իմացէք, որ ամենից առաջ մենք պէտք է աշխատենք գործի իսկական դրութեան հետ ծանօթանալ, և մինչև այդ ժամանակ պէտք է լռենք...

Քրապ. Ո՛չ մի խօսք չեմ ասիլ պ. քաղաքապետ. պէտք է գործի իսկական դրութեան հետ լաւ ծանօթանալ։ (Նա պարտիզով դուրս է գնում դէպի փողոց)։

Բեր. (Մի քիչ բարձր ձայնով) Սարսափելի է... Բայց ո՛չ, այդ բանը անկարելի և անհաւատալի է։ (Նա ուղում է դէպի իւր սենեակը գնալ, բայց այդ ժամանակ իսկոյն աջ կողմից դալիս է Հիլմարը)։

Հիլմ. Բարև՛ Բերնիկ։ Շնորհաւորում եմ վաճառականական ընկերութեան մէջ երէկուայ տարած յաղթութիւնը։

Բեր. Շնորհակալ եմ։

Հիլմ. Այդ մի փառաւոր յաղթութիւն էր, ինչպէս ես լսեցի։ Այդ ինտելիգենտ հասարակութեան մտաւոր յաղթանակն էր եսասիրութեան և նախապաշարմունքի վերաբերմամբ։ Զարմանալի է որ դու այն անհաճելի բանից յետոյ այստեղ...

Բեր. Այո՛, այո՛, թող այդ...

Հիլմ. Բայց գլխաւոր պատերազմը դեռ ես մնում է։

Բեր. Երկաթուղու հարցի կռուի մասի՞ն ես ասում։

Հիլմ. Այո՛, դու արդէն իմանում ես թէ խմբագիր Համմերն ի՞նչ է պատրաստում անելու...

Բեր. (զարմացած) Ո՛չ, ի՞նչ է։

Հիլմ. Նա այստեղ տարածուած ձայներից օգտուելով, կամենում է մի յօդուած գրել։

Բեր. Ո՞ր ձայներից։

Հիլմ. Երկաթուղու երկրորդական ճիւղի երկարութեամբ ընկած հողերի գնելու մասին։

Բեր. Ի՞նչ ես ասում։ Մի՞թէ այստեղ այդպիսի ձայն է տարածուած։

Հիլմ։ Այո՛, այդ ձայնը ամբողջ քաղաքում տարածուած է։ Այդ բանը ես կլուրում լսեցի... Մեր փաստաբաններից մէկին են յանձնել ծածուկ կերպով բոլոր անտառոտ, հանքային և ջրային տեղերը գնելու։

Բեր. Զգիտե՞ս ում համար։

Հիլմ. Ինչպէս ասում են այդ հողերի գնողը մեր հարեւան քաղաքի մի ընկերութիւն է, որը լսելով քո ծրագրի մասին, աշխատում է դրանք գնել, քանի որ այդ հողերը այժմ չեն թանդացել... Մի՞թէ այդ բանը ստորութիւն չէ։

Բեր. Ստորութիւն։

Հիլմ. Այո, որ այդ օտար մարդիկն աշխատում են այդ ձևով մեր երկիրը մտնել։ Բացի դրանից այդ բանի աջողութեան համար աշխատում է և մեր քաղաքի փաստաբաննե-

ըից մէկը։ Այդ օրինակ մարդիկ կարող են շատ օգուտներ ստանալ։

Բեր. Բայց չէ՞ որ այդ միայն մի ձայն է։

Հիլմ. Բայց մեր քաղաքում այդ ձայնին հաւատում են, և վաղը, կամ վաղը չլինի միւս օրը, խմբագիր Համմերը այդ բանը իրականութեան տեղ պէտք է ընդունի և յօդուած գրի։ Մեր քաղաքում այդ լուրը ամենքին բարկացրել է։ Մանաւանդ ես լսեցի, որ շատերն ասում էին, եթէ այդ լուրը հաստատուի, այն ժամանակ նրանք պէտք է իրանց անունները այդ ստորագրութիւնից ջնջեն։

Բեր. Այդ անկարելի է։

Հիլմ. Ինչո՞ւ ես դու կարծում, որ այդ անգործ մարդիկ սիրով պատրաստ են քո ձեռնարկութեան օգնելու։

Բեր. Այդ անկարելի է, ասում եմ քեզ։ Մեր փոքրիկ հասարակութեան մէջ այնքան հասարակական հոգի կայ։

Հիլմ. Այստե՞ղ։ Այո՛, դու միշտ լաւատես մարդ ես և բոլոր մարդկանց քո չափով ես չափում։ Բայց ես իրրև մի լաւ դիտող ասում եմ քեզ, որ այստեղ բացի մեղանից չկայ մէկը, որ գաղափարական դրօշակը կարողանայ բարձր պահել։ (Գնում է դէպի բեմի խորքը)։ Ա՜խ, ահա նրանք կրկին գալիս են։

Բեր. Ո՞վքեր։

Հիլմ. Այն երկու ամերիկացիները։ (աջ կողմից դէպի դուրսն է նայում)։ Բայց նրանց հետ ո՞վ է... երրորդ անձնաւորութիւնն էլ կարծես «Վիթ-ի» նաւապետը լինի։ Ա՜խ...

Բեր. Նրանք ի՞նչ գործ ունեն նաւապետի մօտ.

Հիլմ. Դրանք իրար շատ լաւ գտել են։ Նա մի գերեվաճառ կամ ծովային աւազակ պէտք է եղած լինի։ Բայց ո՞վ է իմանում, թէ միւսներն այս վերջին տարիներում ինչո՞վ են պարապել։

Բեր։ Իմ կարծիքով, չպէտք է նրանց մասին այդքան էլ վատ խօսել։

Հիլմ. Դու միշտ մի լաւատես մարդ ես եղել։ Բայց ահա

նրանք մեզ մօտ են գալիս, քանի որ ես դեռ ժամանակ ունիմ, ուզում եմ այստեղից հեռանալ... (գնում է դէպի ձախ դուռը)։

Բեր. (Աջ կողմից գալիս է Օր. Հեսսելը)։

Օր. Հես. Տէ՛ս Հիլմար, դու ուզում ես ինձնից փախչել։

Հիլմ. Բոլորովին ոչ, ես շտապում եմ... ես Բետտիին բան ունիմ ասելու... (ձախ դռնով գնում է դէպի մի ուրիշ սենեակ)։

Բեր. (Մի քիչ լսելուց յետոյ) Ի՞նչ կայ, Լոնա։

Օր. Հես. Ի՞նչ...

Բեր. Այսօր ինչ կարծիք ունիս դու իմ մասին։

Օր. Հես. Ինչպէս երէկ։ Դու միշտ ստում ես...

Բեր. Ես այժմ ամեն բան քեզ կըպարզեմ։ Ո՞րտեղ է Յովհաննէսը։

Օր. Հես. Նա գալիս է. Յովհաննէսը մի մարդու հետ խօսելու բան ունէր։

Բեր. Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ես քո ենթադրած ոճրագործութեան համար մեղաւոր չեմ։

Օր. Հես. Այո, այդ հասկանալի է. բայց ո՞վ էր գողը։

Բեր. Ո՞չ մի գող չէ եղել, և ոչ էլ փող են գողացել, մինչև անգամ մի շիլլինգ չեն գողացել։

Օր. Հես. Ինչպէ՞ս։

Բեր։ Ո՞չ մի շիլլինգ անգամ, ասում եմ քեզ։

Օր. Հես. Բայց ինչո՞ւ է այն լուրը տարածուել, որ իբր թէ Յովհաննէսը...

Բեր. Լոնա, ես կարծում եմ, որ քեզ հետ կարող եմ լաւ խօսել և ամեն բան կասեմ քեզ։ Ահա ճշմարտութիւնը։ Ես էլ եմ մեղաւոր, որ այդ լուրը տարածուել է։

Օր. Հես. Դո՞ւ, մի՞թէ կարող ես դու այն մարդուն մի վատութիւն անել, որ քեզ համար...

Բեր. Դու ինձ չպէտք է դատապարտես, մինչև որ չիմանաս այն ժամանակուայ իրերի դրութիւնը։ Երէկ ես քեզ այդ պատմեցի։ Երբ ես տուն վերադարձայ, այն ժամանակ մայրս խառնուել էր մի շարք անհասկանալի ձեռնարկութիւնների մէջ։ Յետոյ շատ դժբախտութիւններ պատահե-

ցան. կարծես թէ ամեն չար բան մեզ վրայ էր թափւում: Մեր տունը կործանման վիճակին մօտ էր. այն էլ մասամբ թեթեւամտութեան և մասամբ էլ յուսահատութեան պատճառով:

Օր. Հեն. Հ՝ըմ...

Բեր. Լոնա, երեւակայիր, երբ դու և Յովհաննէսը այստեղից հեռացել էիք, այն ժամանակ այստեղ ամեն տեսակ ձայներ տարածուեցան: Մէկն ասում էր. «Այդ նրա առաջին թեթեւամիտ գործը չէ». «Դորֆը նրանից էլ մի մեծ գումար է ստացել, որպէս զի լռութիւն պահպանեն» ասում էր մի ուրիշը: Հենց այդ միւնոյն ժամանակը յայտնի դարձաւ, որ մեր տունը չէ կարող իր պարտականութիւնները կատարել: Շատ բնական էր, երբ այդ շաստախօս բամբասողները իրենց ձայները միմեանց հետ միացրին: Երբ Դորֆը այստեղ աղքատ կեանք էր վարում, այն ժամանակ ասում էին, որ նա այդ փողն իր հետ Ամերիկա է տարել. մի խօսքով այդ տարածուած ձայնը փողի քանակութիւնը հետզհետէ մեծացնում էր:

Օր. Հեն. Եւ դու Ռիչարդ:

Բեր. Ես այդ տարածուած ձայնից օգտուեցի, ինչպէս որ խեղդւողը նոյն իսկ մի դրմանից է բռնում ազատուելու համար:

Օր. Հեն. Եւ դու ուզում էիր այդ ձայները աւելի՞ տարածել:

Բեր. Ես այդ ձայներին չէի հակառակում: Տարածուած լուրերին հաւատացողները կատաղել էին, և հարկաւոր էր նրանց հանգստացնել: Հարկաւոր էր իւրաքանչիւր մի կասկած մեր տան հաստատութեան համար հեռացնել: Պէտք էր նրանց հասկացնել, որ մեզ հետ պատահում են ժամանակաւոր դժբաղդութիւններ. եթէ մեզ չ՝նեղացնէին և ժամանակ տային, այն ժամանակ իւրաքանչիւրը իւր տուածը կստանայ:

Օր. Հեն. Իւրաքանչիւրն իր տուածն ստացաւ:

Բեր. Այո՛, Լոնա, այդ տարածուած ձայնն է ազատել մեր

տունը, և ինձ մի այնպիսի մարդ դարձրել, որպիսին ես այժմ եմ:

Օր. Հեն. Ուրեմն ստախօսութիւնը քեզ այդպիսի մարդ դարձրեց...

Բեր. Այդ բանն ոչ-ոքի չ՝վնասեց: Յովհաննէսը ամենևին դիտաւորութիւն չունէր տուն վերադառնալու: Եթէ դու նոյն իսկ մի ամենաբարոյական մարդու ներքինը քննես, դու այնտեղ էլի մի սև բիծ կը գտնես, որը պէտք է ծածկել:

Օր. Հեն. Դու ասում ես, որ այդ բանը ոչ ոքին չ՝վնասեց. նայիր քո ներքինը և ասա ինձ, արդեօք դու դրանով չե՞ս վնասուել: Բայց դուք ձեզ հասարակութեան նեցուկներ էք անուանում:

Բեր. Հասարակութիւնը մեզանից աւելի լաւ նեցուկներ չունի:

Օր. Հեն. Հասարակութեան համար այդպիսի նեցուկներ եղած կամ չեղած, այդ միևնոյն է: Ի՞նչ է այստեղ տիրող սկզբունքը: Արտաքինը և ստախօսութիւնը և ուրիշ ոչինչ: Դու իբրև այս քաղաքի առաջին մարդ, շատ ուրախ, փառաւոր և պատուաւոր ես ապրում և շատ ուժեղ ես. դու այն մարդն ես որ մի անմեղի վրայ ձգեցիր քո յանցանքը:

Բեր. Դու կարծում ես, որ ես նրա դէմ արած մեղքս չե՞մ ուզում քաւել: Իմացած եղիր որ ես պատրաստ եմ նորից այդ բանը ուղղելու:

Օր. Հեն. Ինչո՞վ: Հրապարակական խոստովանութիա՞մբ:

Բեր. Եւ դու այդ ինձանից կարող ես պահանջել:

Օր. Հեն. Այդ անարդարութիւնը քաղելու համար ուրիշ միջոց չէ մնում:

Բեր. Լոնա, ես հարուստ եմ և Յովհաննէսը ինձանից ամեն բան կարող է պահանջել...:

Օր. Հեն. Այո՛, համարձակուիր նրան փող առաջարկել և տես, թէ նա քեզ ի՞նչ կ՝պատասխանի:

Բեր. Դու ծանօթ ես նրա մտադրութիւնների հետ:

Օր. Հեն. Ո՛չ: Երեկուանից սկսած նա միշտ լռում է, և

կարծես թէ այդ բոլոր բանները նրան միանգամայն մի չար մարդ են դարձրել։

Բեր. Ես նրա հետ պէտք է խօսեմ։

Օր. Հես. Ահա նա։ (Յովհաննէսը աջ կողմից գալիս է)։

Բեր. (Մօտենալով նրան) Յովհաննէս...

Յովհ. Թող առաջ ես խօսեմ։ Երեկ ես քեզ խօսք տուի լռելու։

Բեր. Այո։

Յովհ. Բայց դեռ չէի իմանում...

Բեր. Յովհաննէս, թո՛ղ տուր ինձ մի երկու խօսքով այն հանգամանքը բացատրեմ...

Յովհ. Հարկաւոր չէ. այդ հանգամանքն ես արդէն գիտեմ։ Այն ժամանակ ձեր տունը դժուար դրութեան մէջ էր. երբ ես այստեղից հեռացել էի, դու անպաշտպան անուն-նով կարող էիր ամեն բան անել։ Ես այդ բանի համար քեզ սաստիկ չեմ վիրաւորիլ։ Այն ժամանակ մենք երկուսս էլ թեթեւամիտ և ջահել էինք։ Բայց ես այժմ ուզում եմ, որ մարդիկ ճշմարտութիւնն իմանան և դու պէտք է ճշմարիտ խօսես.

Բեր. Հենց այժմ ես կարիք ունիմ բարոյական բարձր նշանակութեան և դրա համար էլ չ՚պէտք է խօսեմ...

Յովհ. Այն բոլոր զրպարտութիւնները, որոնք դու իմ մասին ես մարդկանց մէջ տարածել, դրանց հետ ես գործ չունիմ, բայց մի բան կայ, որի համար դու մեղքը քեզ վրայ պէտք է յանձն առնես։ Դինան կինս պէտք է դառնայ և ես նրա հետ ուզում եմ այս քաղաքում ապրել։

Օր. Հես. Այստե՞ղ։

Բեր. Դինայի հե՞տ, իբրև քո կի՞նը։ Այս քաղաքում...

Յովհ. Այո՛, հենց այստեղ։ Ես ուզում եմ այստեղ մնալ այդ բոլոր ստախօսութիւններին և զրպարտութիւններին հակառակելու։ Բայց որպէսզի Դինային ստանամ, դու պէտք է անպատճառ իմ վրայ ընկած արատը մաքրես։

Բեր. Դու իմանում ես, որ երբ ես մի քան խոստովանեմ, այն ժամանակ ստիպուած կը լինեմ մի ուրիշ բան էլ

խոստովանել։ Դու ուզում ես ասել, որ ես մեր հաշուի գրքերով կարող եմ ապացուցանել, որ ոչ մի գողութիւն չէ եղել։ Բայց այդ բանն ես չեմ կարող անել։ Ենթադրենք, որ նոյնիսկ կարող եմ... Բայց այդ բանից ի՞նչ դուրս կը գայ... Այն ժամանակ ես մարդկանց աչքում մի այնպիսի անձնաւորութիւն կերևամ, որը իւր ստախօսութեան շնորհիւ ազատուել է և 15 տարի շարունակ այդ ստախօսութիւնը տարածել է ամեն տեղ։ Դուրս կգայ որ ես ոչ մի կերպով չեմ աշխատել այդ սուտն ուղղելու։ Դու մեր հասարակութիւնը չես ճանաչում, եթէ ոչ դու կ՚իմանայիր, որ այդպէս անելով ես ինձ բոլորովին փչացրած կլինէի։

Յովհ. Ես քեզ նորից կրկնում եմ, որ կամենում եմ տիկ. Դորֆի աղջկայ հետ պսակուել և նրա հետ այս քաղաքում ապրել։

Բեր. (Ձակատի քրտինքը սրբում է) Լսի՞ր ինձ, Յովհաննէս, դու էլ, Լոնա։ Դժբախտաբար ես այս քանի օրերս սովորական դրութեան մէջ չեմ գտնուում։ Եթէ ինձ մի այդպիսի հարուած տաք, դուք ոչ միայն ինձ փչացրած կը լինէք, այլ և այն հասարակութեան երջանիկ ապագան, որին նոյնպէս դուք ձեր մանկութիւնից սկսած պատկանում էք։

Յովհ. Բայց եթէ ես քեզ մի այդպիսի հարուած չ՚տամ, այն ժամանակ փչացրած կը լինեմ իմ ապագայ ամբողջ երջանկութիւնը։

Օր. Հես. Յետո՞յ, Բերնիկ։

Բեր. Ուրեմն լսեցէք։ Այդ բոլորը կախուած է երկաթուղու հարցից. այդ գործը այնքան էլ հասարակ բան չէ, որպէս դուք էք կարծում։ Դուք, ի հարկէ, լսած կը լինէք, որ անցեալ տարի այստեղ երկաթուղու ափնեայ գծի համար ագիտացիա էին անում, և այդ գծի համար թէ քաղաքումս և շրջակայ տեղերում բաւականին ձայներ ժողովուել են. ամուլը նոյնպէս աշխատում էր այդ գծի համար։ Բայց ես ափնեայ գծի այդ ծրագիրը բոլորովին խորտակել տուեցի, որովհետև դա մեր ծովափնեայ շրջանաւերի գործին կը վնասէր։

Օր. Հեն. Բայց մի՞թէ քեզ հետաքրքրում է շոգենաւագնացութիւնը։

Բեր. Այո, և ո՞չ-ոք չէ կարող այդ գործի համար իմ մասին կասկածել. ես բոլորի մօտ մի յարգելի անուան տէր էի, որը ինձ միւս մարդկանց կասկածանքներից պաշտպանում և հովանաւորում էր։ Ասենք ես այդ կորուստը կարող էի տանել, բայց քաղաքը չէր կարող... Այդպիսով ընտրուեց երկաթուղու ներքին գիծը։ Բայց երբ այդ հարցը վճռուած և վերջացած էր, այն ժամանակ ես մտածեցի մեր քաղաքի մօտով մի երկրորդական գիծ էլ անցկացնել տալ և նրան գլխաւոր երկաթուղու հետ միացնել. այդ բանի մասին ես ո՞չ-ոքի հետ չը խօսեցի,

Օր. Հեն. Ինչո՞ւ համար չ'խօսեցիր, Բերնիկ։

Բեր. Մի՞թէ դուք չգի՞ք լսել, որ շատերը ուզում են բոլոր այն անտառները, հանքերը և ջրերը գնել...

Յովհ. Այո, ուրիշ քաղաքի մի ընկերութիւն է ուզում։

Բեր. Եւ որովհետև ներկայ սեփականատէրերը այդ կալուածները իր ժամանակին շատ էժան գնով են գնել, դրա համար էլ նրանք շատ չնչին գներով վաճառեցին ուրիշներին։ Կարող ես երևակայել, թէ ինչպիսի անամօթ գներ կը պահանջէին վերոյշեալ կալուածատէրերը, եթէ նրանք առաջուց լսածլինէին երկաթուղու ծրագրի մասին։

Օր. Հեն. Այո, այո, բայց...

Բեր. Այժմ մի խնդիր է ծագում, որի մասին զգուշան կերպով կարելի է մտածել։ Եթէ մի մարդ վճռում է հասարակութեան մէջ հրապարակական խոստովանութիւն անելու, այդ ժամանակ այդ մարդը պէտք է այստեղ մի յենարան ունենայ, կամ գոնէ պատուաւոր անուան տէր լինի...

Օր. Հեն. Դէհ ասա, ի՞նչ ունիս...

Բեր. Ես այդ բոլոր կալուածները գնել եմ։

Օր. Հեն. Դո՞ւ։

Յովհ. Քո սեպհական հաշուո՞վ։

Բեր. Այո, իմ սեպհական հաշուով։ Եթէ երկաթուղու երկրորդական գծի այդ կալուածների մօտով անցկացնելը

աջողուեց, այն ժամանակ ես միլիոնատէր կը դառնամ, իսկ եթէ ոչ, ես բոլորովին կը քանդուեմ։

Օր. Հեն. Դու շատ համարձակ գործ ես բռնել, Բերնիկ։

Բեր. Ամբողջ կարողութիւնս այդ գործին եմ նուիրել։

Օր. Հեն. Ես կարողութեանդ մասին չեմ մտածում, այլ երբ յայտնի եղաւ, որ...

Բեր. Հենց այդ բանի մէջն է հարցի ամբողջ էութիւնը։ Ես մինչև այժմ պահպանած անբիծ անունովս այդ գործը կարող եմ ուսերիս վրայ տանել և յետոյ համաքաղաքացիներիս ասել. «Ես այդ գործը հասարակութեան օգտի համար եմ կատարել»,

Օր. Հեն. Հասարակութեա՞ն։

Բեր. Այո, և ո՞չ-ոք չպէտք է բարի մտադրութիւններիս մասին կասկածի։

Օր. Հեն. Բայց չէ՞ որ այստեղ այնպիսի մարդիկ էլ կան, որոնք առանց յետին մտքերի այդ գործին բարոյապէս նպաստել են։

Բեր. Ո՞վքեր են դրանք։

Օր. Հեն. Ի հարկէ, Ռումմելը, Ալտշտէտը և Վիգիլանդը։

Բեր. Որպէսզի ես նրանց էլ իմ կողմս քաշեմ, ստիպուած էի նրանց ես այդ գործի գաղտնիքը բացատրելու։

Օր. Հեն. Յետո՞յ...

Բեր. Նրանց հետ պայմանաւորուել եմ վերոյիշեալ ապագայ ձեռնարկութեան զուտ արդիւնքի մի հինգերորդական մասով։

Օր Հեն. Ահա քեզ հասարակութեան նեցուկներ։

Բեր. Հասարակութիւնն է մեզ ստիպում այդպիսի ծուռ ճանապարհով ընթանալ։ Եթէ ես ուրիշ ձևով վարուած լինէի, այն ժամանակ ի՞նչ կըլինէր։ Եթէ ես այդ բանը գաղտնի կերպով արած չլինէի, այն ժամանակ բոլորեքեան կը-թափուէին այդ ձեռնարկութեան վրայ և գործը կը փչացնէին, կը խորտակէին, կը վնասէին։ Այս քաղաքում բացի ինձանից, մի մարդ չկայ, որը կարողանար այդ հետզհետէ մեծացող առևտուրը կառավարել։ Միայն այստեղի գաղթական

ընտանիքներն են, որոնք կարող են մեծ առևտրով զբաղուել։ Դրա համար իմ խիղճը հանգիստ է։ Միայն իմ ձեռքերում կարող են այդ կալուածները հաղարաւոր մարդկանց համար հաց հայթայթել։

Օր. Հեն. Այո, այդ կէտում, դու ճշմարիտ ես ասում Բերնիկ։

Յովհ. Բայց ես այդ հաղարաւոր մարդկանց չեմ ճանաչում և կեանքիս երջանկութեան հետ խաղում եմ։

Բեր. Քու ծննդավայրի բարեկեցութեան հետ էլ ես խաղում։ Եթէ այդ գաղտնիքները բացուին, որոնք իմ անցեալ կեանքի վրայ ստուեր են ձգում, այն ժամանակ բոլոր հակառակորդներս միացած ոյժերով ինձ վրայ պէտք է թափուէին։ Մեր հասարակութիւնը երիտասարդական անմտութիւնը չէ ներում։ Պէտք է քննեն ամբողջ կեանքս և հազար ու մէկ աննշան հանգամանքներ այդ գաղտնիքների համեմատ լուծեն ու դատեն։ Նրանք ինձ դանդաղ ձայների և զրպարտութիւնների համար կը փչացնեն։ Այն ժամանակ ես ստիպուած պէտք է լինիմ երկաթուղու գործից հեռանալու, ուրիշ, խօսքով նիւթապէս և բարոյապէս մնանկանալու։

Օր։ Հեն. Յովհաննէս, դու այդ բոլոր բանների համար պէտք է լռես, և այստեղից հեռանաս.

Բեր. Այո, այո, Յովհաննէս, դու պէտք է հեռանաս և լռես։

Յովհ. Այո, ես ուզում եմ լռել, և հեռանալ, բայց ես նորից կը վերադառնամ, և այն ժամանակ քեզ հետ նորից կը խօսեմ։

Բեր. Յովհաննէս. ապրիր ընդ միշտ այնտեղ և լռիր, այն ժամանակ խոստանում եմ քեզ հետ բաժանելու...

Յովհ. Քեզ համար պահիր փողը, միայն թէ վերադարձրու ինձ կրկին անարատ անունս։

Բեր. Ես դրա համար զոհեմ իմ անունս։

Յովհ. Դու և հասարակութիւնը կարող էք այդ բանը ձեր մէջ վերջացնել։ Ես ուզում եմ և պէտք է Դինային ստանամ։ Դրա համար ես վաղը «Վիթ»-ով կը ճանապարհուեմ.

Բեր. (առանձին եռանդով)։ «Վիթ»-ո՞վ։

Յովհ. Այո, նաւապետը խոստացաւ ինձ իւր հետ վերցնել։ Ես կը գնամ, կը ծախեմ կալուածս և գործերս կարգի կը բերեմ։ Երկու ամսից յետոյ նորից այստեղ կը լինեմ։

Բեր. Այն ժամանակ դու դաղտնիքներդ բոլորին կը յայտնե՞ս։

Յովհ. Զէ՞ որ յանցաւորը մեղքն իր վրայ պէտք է վերցնի։

Բեր. Դու մոռանո՞ւմ ես, որ ես այն ժամանակ նոյնպէս այն մեղքերը պէտք է իմ վերայ վերցնեմ, որոնք ես չեմ գործել։

Յովհ. Ո՞վ է 15 տարի առաջ այդ խայտառակ ձայներից օգտուել։

Բեր. Դու ինձ բոլորովին յուսահատեցնում ես. եթէ դու կը խօսես այն ժամանակ ես բոլորը կը բացատրեմ։ Եւ կասեմ, որ այդ իմ դէմ մի դաւադրութիւն կամ վրէժ է և դու իրը թէ եկել ես ինձանից փող կեղեքելու։

Օր. Հեն. Ամաչէր, Ռիչարդ։

Բեր. Ես յուսահատուել եմ, ասում եմ քեզ, ես կեանքիս համար կուռում եմ , և ամեն բան կ'ուրանամ։

Յովհ. Հենց դրա համար էլ ես մինչև այժմ պահում եմ երկու նամակները։ Ես դրանք արկղիս միւս թղթերի մէջ եմ դնել։ Այդ նամակները այս օր առաւօտեան նորից կարդացի։ Դրանք շատ զօրեղ ապացոյցներ են։

Բեր. Եւ այդ թղթերը դու պէտք է աշխարհ հանես.

Յովհ. Եթէ միայն կարիք լինի։

Բեր. Երկու ամսից յետոյ կըգա՞ս նորից։

Յովհ. Յուսով եմ։ Բամին լաւ է։ Եթէ «Վիթ»-ը չխորտակուի, 3 շաբաթից յետոյ Նիւ-Եորքում կը լինեմ։

Բեր. (յանկարծակի) Խորտակուի՞։ «Վի՞թ»-ը, բայց ինչո՞ւ պէտք է խորտակուի։

Յովհ. Ես էլ եմ կարծում, որ նա հազիւ թէ խորտակուի։

Բեր. (հազիւ լսելի ձայնով)։ Խորտակուի՞։

Յոլհ. Ուրեմն, այդպէս, Բերնիկ, դու արդէն իմանում ես թէ ես ինչ պէտք է անեմ, և կարող ես առ այժմ այդ բանի համար նախապատրաստուել։ Յաւելուածիւն։ Բարեւիր իմ կողմից Բեատիչին, թէկուզ նա ինձ մի քրոջ նման չէ ընդունել։ Բայց ես կամենում եմ Մարթային տեսնել։ Նա պէտք է Դինային ասի... նա պէտք է ինձ գովի... (ձախ կողմի երկրորդ դռնով հեռանում է)։

Բեր. (ինքն իրան) «Վիթ»-ը՞։ (արագ) Լենա, դու պէտք է արգելես.

Օր. Հեն. Ռիչարդ, դու տեսնում ես, որ ես նրա վրայ այլ ես չեմ կարող ազդեցութիւն թողնել։ (Յովհաննէսի ետեւից դէպի ձախ կողմի սենեակն է գնում)։

Բեր. (անհանգիստ մտքերի մէջ խորասուզուած) Խորտակուի՞... (աջ կողմից գալիս է նաւագործ Աուլէրը)։

Աուլ. Ներողութիւն, պարոն քաղաքապետ, արդեօք ես ձեզ չեմ խանգարում...

Բեր. (բարկացած) Ի՞նչ էք ուզում...

Աուլ. Ես սիրով կցանկանայի ձեզ մի բան հարցնել, պարոն քաղաքապետ։

Բեր. Լաւ, ի՞նչ ես ուզում. ասա շուտ,

Աուլ. Ես ուզում էի իմանալ թէ արդեօք դուք հաստատ վճռե՞լ էք ինձ հրաժարեցնել, եթէ «Վիթ»-ը վաղը ծոցումն չ՚լինի։

Բեր. Այդ ինչ է նշանակում։ Չէ որ շոգենաւը պատրաստ կըլինի։

Աուլ. Այո։ Բայց ենթադրենք որ պատրաստ չեղաւ, այն ժամանակ պէտք է հրաժարական տամ։

Բեր. Ինչու՞ համար էք այդ դատարկ հարցերը ինձ տալիս։

Աուլ. Պ. քաղաքապետ, ես ուզում եմ այդ բանը որոշ կերպով իմանալ։ Ասացէք ինձ, արդեօք պէտք է հրաժարուիմ։

Բեր. Ես սովորութիւն չունիմ որոշած վճիռներս փոխելու։

Աուլ. Ուրեմն ես պէտք է իմ տեղը, նոյնպէս և ընտանիքիս վերաբերմամբ ունեցած դիրքս կորցնեմ։ Հաւանական է, որ դրանով բանւորական շրջանի վրայի ազդեցութիւնս էլ կորցնեմ. և Աստուած իմ, այն ժամանակ չեմ կարող աղքատ եղբայրներիս օգնել...

Բեր։ Աուլէր...

Աուլ. Լաւ, այն ժամանակ «Վիթ»-ը ծոցում կըլինի. (մի առ ժամանակ լռութիւն)։

Բեր. Լսեցէք ինչ եմ ասում. ես չեմ կարող ամենաեղ աչքեր ունենալ, և բացի դրանից ամեն բանի համար պատասխանատու լինել։ Ես հաստատ համոզուած եմ, որ շոգենաւը բարեխղճաբար էք նորոգել...

Աուլ. Պարոն քաղաքապետ, լաւ նորոգելու համար շատ կարճ ժամանակ էիք նշանակել։

Բեր. Բայց այնուամենայնիւ դուք լաւ էք նորոգել, այնպէս չէ՞։

Աուլ. Եղանակը լաւ է և ամառային. (նորից կարճատեւ լռութիւն)։

Բեր. Ուրիշ բան չունի՞ս հայտնելու։

Աուլ. Ուրիշ ոչինչ, պ. քաղաքապետ։

Բեր. Ուրեմն «Վիթ»-ը որոշեալ ժամին ծոցի վրա՞յ կը լինի։

Աուլ. Առաւօտեան։

Բեր. Այո։

Աուլ. Լաւ։ (Ողջունում է եւ հեռանում։ Բերնիկը մի առ ժամանակ անվճռական կերպով կանգնած է. յետոյ նա գնում է դէպի դուռը, կարծես թէ ուզում է Աուլէրին յետ կանչել, բայց իսկոյն կանգնում է եւ ձեռքը մնում է դռան վրայ դրած։ Հենց այդ րոպէին Քրապը դրսից բռնում է դուռն եւ ներս է մտնում)։

Քրապ. Նա այստեղ էր, և ոչինչ չխոստովանե՞ց։

Բեր. Հ՞ըմ... Չլինի՞ մի բան ես իմացել։

Քրապ. Էլ ուրիշ ի՞նչ ես ուզում, միթէ դու նրա հայեացքից բանի էութիւնը չիմացար.

Բեր. Ես նրա հայեացքից չկարողացայ ոչինչ իմանալ։ Բայց դուք բան իմացաք, ասացէք, այո, կամ ոչ։

Քրապ. Արդէն ուշ էր և ես չկարողացայ այնտեղ գնալ, նրանք նաւը պատրաստում էին ծոցը մտնելու։ Հենց շոգենաւի շուտ պատրաստելը ցոյց է տալիս, որ...

Բեր. Այդ ոչինչ ցոյց չէ տալիս։ Ուրեմն նրանք նորոգութեանը նայեցին և վերջացրին։

Քրապ. Հասկանալի է, բայց...

Բեր. Տեսնում էք, ուրեմն շոգենաւը այլ ևս պակաս տեղ չունէր։

Աուլ. Պարոն քաղաքապետ, դուք արդէն իմանում էք թէ մարդիկ այդ նորոգութեանը ինչպէս են նայում, մանաւանդ մեր նաւագործարանում, որը մեծ համբաւ ունի։

Բեր. Այդ միևնոյն է։ Յամենայն դէպս, մենք պատասխանատուութիւնից ազատւում ենք։

Քրապ. Պարոն քաղաքապե՛տ, միթէ դուք չնկատեցիք, որ Աուլէրը...

Բեր. Ես ձեզ ասում եմ, որ Աուլէրը ինձ բոլորովին հանգստացրեց։

Քրապ. Բայց ես էլ ձեզ բարոյապէս համոզուած ասում եմ, որ...

Բեր. Այդ ի՞նչ է նշանակում է Քրապ... ես կարծում եմ որ դուք դէպի Աուլէրը վատ էք տրամադրուած։ Եթէ դուք ուզում էք նրան վնասել, այն ժամանակ ուրիշ պատճառ գտէք։ Դուք արդէն գիտէք, որ ես, աւելի ճիշտ ասած, այդ շոգենաւի սեփական տէրերը ուզում են, որ «Վիթ»-ը վաղը ծովը մտնի։

Քրապ. Լաւ, թողէք այդպէս լինի, բայց երբ մենք այդ շոգենաւի մասին ուրիշ վատ բան լսենք... հը՛մ... (վաճառական Վիգելանդը աջ կողմից ներս է մտնում)։

Վիգելանդ. Ձեր ամենահնազանդ ծառան, պարոն քաղաքապե՛տ, կարող էք ինձ մի բոպէ ժամանակ շնորհել։

Բեր. Ես պատրաստ եմ ծառայելու, պարոն Վիգելանդ։

Վիգ. Ես ուզում էի, իմանալ, թէ արդեօք դուք համաձայնէք, որ Արմաւենին վաղը ճանապարհուի։

Բեր. Ի հարկէ, այդ արդէն վաղուց է որոշուած։

Վիգ. Բայց նաւապետը մի քիչ առաջ եկաւ ինձ յայտնելու, որ փոթորիկի նշաններ են երևում...

Քրապ. Բայց ջերմաչափը այսօրուանից սկսած բաւականին իջել է։

Բեր. Այդպէ՞ս։ Ուրեմն կարող է փոթորիկ լինել։

Վիգ. Յամենայն դէպս քամին շատ սաստիկ է. չնայելով հակառակ քամի չէ...

Բեր. Հ՞ըմ... ի՞նչ էք ասում։

Վիգ. Ես ասում եմ այն, ինչ որ նաւապետին եմ ասել. «Արմաւենի»-ն այժմ նախախնամութեան ձեռքումն է։ Այդ շոգենաւը առաջ հիւսիսային ծոցով պէտք է անցնի իսկ Անգլիայում այժմ նաւավճարը այնպէս բարձրացել է, որ...

Բեր. Այո, գուցէ մենք վնասներ ստանանք, եթէ սպասենք։

Վիգ. Ինչպէս դուք գիտէք նաւը համեստ և ապահով կերպով է շինուած. բայց «Վիթ»-ի հարցը բոլորովին ուրիշ է։

Բեր. Ի՞նչ էք ուզում ասել։

Վիգ. Չէ՞ որ նա էլ վաղը ճանապարհւում է։

Բեր. Այո, այդ շոգենաւի սեփականատէրերը շատ են ստիպում և բացի դրանից...

Վիգ. Եթէ այդ հին տապանը և այն էլ հին ծառայողներով ճանապարհ ընկնի, այն ժամանակ ամօթ կըլինէր, եթէ մենք...

Բեր. Լաւ, լաւ, բայց գուցէ նաւի դոկումենտները ձեզ մօտ են։

Վիգ. Այո, ինձ մօտ են։

Բեր. Լաւ, խնդրեմ պարոն Քրապի հետ միասին ինձ մօտ դաք։

Քրապ. Շատ լաւ։ Շուտով պատրաստ կըլինի։

Վիգ. Լաւ, բայց պարոն քաղաքապետ, լաւ իմացէք, որ գործի աջողութիւնը ամենաբարձրեալին ենք յանձնում։ (Բրագպի հետ միասին գնում է ձախ կողմ սենեակը։ Ներս է մտնում քարտուղի օգնական Բորլանդը)։

Բորլ։ Ա՜հ, Միթէ օրուայ այս ժամանակը դուք տանն էք, պարոն քաղաքապետ։

Բեր. (մտքերի մէջ խորասուզուած)։ Ինչպէս դուք տեսնում էք...

Բորլ.. Ես խնդրեցի ձեր ամուսնու համար եմ այստեղ եկել։ Ես կարծեցի որ նա մխիթարական խօսքի կարիք է զգում։

Բեր. Շատ կարելի է։ Բայց ես նոյնպէս սիրով կը ցանկայի ձեզ հետ խօսել։

Բորլ. Շատ ուրախ եմ, պարոն քաղաքապետ։ Բայց ասացէք խնդրեմ, ի՞նչ է պատահել ձեզ հետ։ Դուք բոլորովին գունատուած և ցրուած էք երևում։

Բեր. Ե՞ս... մի՞թէ... Այո՛, ճշմարիտ է, և ինչպէս կարող եմ ուրիշ տեսակ երևալ, երբ այժմ ինձ շատ խնդիրներ տանջում են։ Իմ ամբողջ առևտուրս... և յետոյ երկաթուղու գործը... լսեցէք, ես կամենում եմ ձեզանից մի բան հարցնել, պարոն քարտուղէ։

Բորլ. Շատ խնդրում եմ, պարոն քաղաքապետ։

Բեր. Այժմ իմ մէջ մի միտք է յղացել... եթէ մի մարդ պատրաստւում է մի այնպիսի ձեռնարկութիւն սկսել, որից հազարաւոր մարդկանց երջանկութիւնն է կախուած և եթէ այդ ձեռնարկութիւնը մի զոհ է պահանջում...

Բորլ. Ի՞նչ էք ուզում ասել։

Բեր. Վերցնենք մի օրինակ։ Ենթադրենք մի մարդ ուզում է մի մեծ գործարան հիմնել.., Այդ մարդը երկարամեայ փորձառութիւնից գիտէ, որ միանգամ այդ գործարանը մի քանի մարդկանց կեանքը պիտի զոհէ։

Բորլ. Այո՛, շատ հաւանական է.

Բեր. Կամ օրինակի համար մէկը հանքային արդիւնաբերութեան է ձեռնարկում։ Այդ մարդը շատ ընտանիքների

հայրեր, և ջահել թարմ մարդիկ է վարձում բանեցնելու։ Մի՞թէ հաստատ չի կարելի ասել, որ նրանցից մի քանիսն այդ ձեռնարկութեան համար պէտք է զոհուեն։

Բորլ. Այո, դժբախտաբար դուք իրաւունք ունիք։

Բեր. Լաւ։ Այդ մարդը առաջուց գիտէ, որ իր ձեռնարկած գործը մի քանի մարդկանց կեանքը պէտք է զոհի։ Բայց այդ ձեռնարկութիւնը մեծամասնութեան օգտի համար է ծառայում։ Սկսած ձեռնարկութիւնից զոհւում են միայն անհատներ, այն ինչ դրա փոխարէն հարիւրաւոր և հազարաւոր մարդիկ մեծամեծ օգուտներ են ստանում։

Բորլ. Դուք երկաթուղու հանքագործութեան և զանազան պայթուցիկ նիւթերի մասի՞ն էք խօսում, որոնք...

Բեր. Այո՛, հենց դրանց մասին. խօսքս գլխաւորապէս երկաթուղուն է վերաբերում։ Երկաթուղին նոյնպէս գործարանների և հանքագործութեան զարգացմանը զգալի կենդանութիւն է տալիս։ Մի՞թէ դուք չէք ենթադրում, որ...

Բորլ. Սիրելի պարոն քաղաքապետ, դուք շատ բարեխիղճ էք։ Ես կարծում եմ, որ եթէ դուք ձեր ձեռնարկութիւնը նախախնամութեանը յանձնէք...

Բեր. Այո՛... ի հարկէ... նախախնամութեան...

Բորլ. Այն ժամանակ դուք այլ ևս տատանուելու կարիք չէք ունենալ և բոլորովին մխիթարուած կարող էք ձեր երկաթուղու գործի շինութիւնը սկսել։

Բեր. Այո՛, բայց մենք վերցնենք բացառական մի դէպք։ Ենթադրենք որ մի հանքում ական է դրուած և այդ հանքը պէտք է պայթեցնել, առանց որի երկաթուղու լինելը դլուխ չի գալ։ Ճարտարապետը հանքը պայթեցնելու համար անպատճառ այնտեղ բանւոր է ուղարկում, որի կեանքն անխուսափելի կերպով պէտք է զոհուի։

Բորլ. Հ՜ըմ...

Բեր. Ես հասկանում եմ թէ դուք ինչ էք ուզում ասել։ Աւելի լաւ կը լինէր, որ հենց ինքը ճարտարապետը այդ հանքը պայթեցնելու համար պատրոյկը վառէր։ Բայց սովորաբար

բար այդպէս չեն անում։ Նա անպատճառ դրա համար բանտի կեանքն է զոհում։

Բոր. Այո, մեր ճարտարապետները այդ բանը իրանք ամենևին չեն կատարում։

Բեր. Մեծ երկրների ճարտարապետներից և ոչ մէկը նոյն իսկ չէ մտածել այդ մասին։

Բոր. Մեծ երկրներում։ Այո, ես հաւատում եմ։ Մի ապականուած և մեծ հասարակութեան մէջ։

Բեր. Ո՛չ, այդպիսի հասարակութիւնը լաւ կողմեր էլ ունի։

Բոր. Եւ այդ բանը դո՞ւք էք ասում, դուք, որ...

Բեր. Մեծ հասարակութեան մէջ սովորաբար կարելի է օգտակար ձեռնարկութիւններ դլուխ բերել։ Այնտեղ քաջութիւն ունին մեծ գործի համար զոհուելու. իսկ մեզ մօտ ընդհակառակն ամեն մարդ մանր հաշիւներով, ակնածութիւններով և երևակայութիւններով է կաշկանդուած։

Բոր. Բայց մի՞թէ մի մարդու կեանքը մանր հաշիւ է...

Բեր. Այո, եթէ այդ մարդու կեանքը հազարաւոր մարդկանց բարեկեցութեան համար պէտք է զոհուի։

Բոր. Բայց դուք բոլորովին անկարելի դէպքեր էք վերցնում, պարոն քաղաքապետ։ Ես այսօր ձեզ բոլորովին չեմ հասկանում։ Դուք միշտ մեծ հասարակութիւնն աչքի առաջ ունէք։ Մի՞թէ մարդկային կեանքը այնտեղ գնահատւում է։ Այնտեղ մարդկային կեանքը կապիտալով են հաշուում։ Բայց այստեղ մենք բոլորովին ուրիշ բարոյական հայեացքներ ունենք։ Հենց վերցնենք մեր նաւերի սեպհականատէրերին. ցոյց տուէք ինձ այստեղ մի սեպհականատէր, որը իր անձնական օգտի համար մարդկային կեանք զոհէր։ Բայց վերցրէք այն մեծ հասարակութիւնների անպիտան մարդկանց, որոնք իրանց սեպհական օգտի համար մէկը միւսի ետևից ծովը բազմաթիւ անպիտան նաւեր են ուղարկում...

Բեր. Ես անպիտան նաւերի մասին չեմ խօսում։

Բոր. Բայց իմ խօսքը հենց դրանց մասին է, պարոն քաղաքապետ։

Բեր. Այո... բայց... ինչո՞ւ։ Այդ իսկական գործին չէ վերաբերում։ Օ՜հ, այդ մանր և վտանգաւոր հաշիւները... Եթէ մի գեներալ մեզ մօտ իր զօրքերին առաջնորդէր թշնամուն ջարդելու համար, այն ժամանակ նա անքուն գիշերներ կ'անցկացնէր։ Բայց ուրիշ երկրներում այդպէս չէ։ Եթէ դուք լսած լինէիք, թէ նա այստեղի մասին ինչ է պատմում...

Բոր. Նա... ո՞վ... Ամերիկացի՞ն...

Բեր. Այո... եթէ իմանայիք թէ Ամերիկայում ինչպէս...

Բոր. Այստե՞ղ է նա։ Եւ դուք այդ ինձ չէ՞ք ասում... Ես ուզում եմ իսկոյն...

Բեր. Բայց այդ բանը ձեզ բոլորովին չի օգնիլ։ Դուք ամենևին չէք կարող նրան համոզել։

Բոր. Տեսնենք... Ահա նա։ (Յովհաննէս Թիոննեսէնը ծախ կողմի սենեակից ներս է մտնում)։

Յովհ. (բաց զոնով Դինայի հետ խօսում է)։ Այո, այո, այդպէս է, Դինա։ Ես ձեզ չեմ թողնիլ։ Ես նորից կը՞ վերադառնամ և մեն բան մեր մէջ կը լաւանայ։

Բոր. Ներողութիւն, ի՞նչ էք ասում, ի՞նչ էք ուզում։

Յովհ. Ես ուզում եմ այն ջահել աղջկայ ձեռքը խնդրել, որի մօտ դուք երեկ ինձ խայտառակ կերպով զրպարտեցիք։

Բոր. Դո՞ւք... Եւ դուք կարծում էք որ...

Յովհ. ... Որ նա կինս լինի։

Բոր. Այն ժամանակ արդէն կիմանաք... (գնում է դէպի կիսաբաց զուռը)։ Տիկին Բերնիկ, ուզո՞ւմ էք վկայ լինել, դուք նոյնպէս, օրիորդ Մարթայ։ Թողէք Դինան այստեղ գայ։ (օրիորդ Հեսսելին նկատում է) Ա՜հ, դուք է՞լ այստեղ էք։

Օր. Հես. (դուռն մօտ) Ես է՞լ գամ։

Բոր. Ովքեր ցանկանում են. որքան շատ լինին, այնքան լաւ է։

Բեր. Ի՞նչ ես ուզում անել։ (սենեակից գալիս են օր. Հեսսելը, տիկ. Բերնիկը, օր. Բերնիկը, Դինան եւ Հիլմար Թիոննեսէնը)։

Տ. Բեր. Պարոն քարոզիչ, ես չկարողացայ նրան իմ բարի կամքով արգելել...

Բորլ. Ես նրան կը խանգարեմ, տիկ. Բերնիկ. դուք մի անմիտ աղջիկ էք, Դինա: Բայց ես չեմ ուզում ձեզ շատ վիրաւորել: Դուք այստեղ երկար ժամանակ այն բարոյական նեցուկից զրկուած էիք, որը ձեզ կը փրկէր: Ես միայն դատապարտում եմ ինձ, որ այդ բարոյական նեցուկը ձեզ վաղուց չեմ ցոյց տուել:

Դինա. Այժմ մի խօսիր դրա մասին:

Տ. Բեր. Բայց այս ինչ է նշանակում:

Բորլ. Ես հենց այժմ եմ ուզում խօսել, թէկուզ երեկուայ և այսօրուայ ձեր վարմունքն ինձ 10 անգամ աւելի դժուարութիւն է պատճառում: Բայց ձեզ ազատելու համար միւս հաշիւները պէտք է բոլորովին մոռանալ... Դուք յիշում էք այն խոստումը, որ ես ձեզ տուեցի: Յիշում էք նոյնպէս, թէ ինչ խոստացաք ինձ պատասխանել, երբ ես որոշած ժամանակի մասին ձեզ յայտնէի: Այժմ ես չեմ կարող երկար տատանուել, և դրա համար... (Յովհաննէսին): Այս ջահել աղջիկը, որին դուք հետևում էք, նշանածս է:

Տ. Բեր. Ի՞նչ էք ասում:

Բեր. Դինա:

Յովհ. Դուք... Ձե՞ր...

Օր. Բեր. Ո՛չ, ոչ, Դինա:

Օր. Հեն. Այդ ստախօսութիւն է:

Յովհ. Դինա. միթէ այդ մարդը ճշմարիտ է խօսում:

Դինա. (կարճ տատանուելուց յետոյ) Այո:

Բորլ. Յուսով իմ, որ ձեր բոլոր փորձերը նրան մոլորեցնելու համար ի դերև եղան: Մեր հասարակութիւնը կարող է իմանալ, որ ես այդ քայլը անում եմ միայն նրան փրկելու համար, և յոյս ունիմ, որ այդ միևնոյն հասարակութիւնն իմ արած քայլի համար ինձ չի մեղադրիլ: Իսկ այժմ, տիկին Բերնիկ, աւելի լաւ կըլինի նրան այստեղից հեռացնել, որպէսզի նրա սիրտը հանգիստ լինի:

Տ. Բեր. Այո, գնանք այստեղից: Օ՜հ Դինա, այդ բանը քեզ համար երջանկութիւն է: (Նա Դինային ձախ կողմով դուրս է տանում: Բորլանդը դրանց հետևում է):

Օր. Բեր. Յտեսութիւն, Յովհաննէս: (Դուրս է գնում).

Հիլմ. (պարտիզի դռան մօտ) Հը՜մ... Այժմ ես նրան պէտք է ասեմ...

Օր. Հեն. (Դինային աչքի տակով հետևել է): Քաջութիւնդ մի կորցնիր, Յովհաննէս: Ես այստեղ կըմնամ և պաստորին կը հետևեմ: (Աջ կողմով դուրս է գնում:

Բեր. Յովհաննէս, այժմ դու չես կարող «Վ ի թ» - ով գնալ:

Յովհ. Հենց այժմ պէտք է գնամ:

Բեր. Էլ չե՞ս վերադառնալ:

Յովհ. Ես նորից կը վերադառնամ:

Բեր. Այդ բանից յետոյ: Է՞լ ինչ ես ուզում այստեղ անել:

Յովհ. Ես ձեզանից վրէժս կառնեմ և բոլորիդ էլ կը փչացնեմ: (Աջ կողմով դուրս է գնում: Վիգելանդը եւ հիւպատոսը սենեակից դուրս են):

Վիգ. Պարոն քաղաքապետ, այժմ բոլոր թղթերը կարգի են բերած:

Բեր. Լաւ, լաւ...

Քրապ. (մեղմութեամբ) Վաղը անպատճառ «Վիթ»-ը այստեղից դուրս կը գնայ:

Բեր. Այո, վաղը առաւօտեան (գնում է իր սենեակը: Վիդելանդն եւ Քրապն աջ կողմով ներս են մտնում: Հիլմարը ուզում է դրանց հետևել, բայց այդ ժամանակ Օլգիը ձախ կողմի դռնով նայում է):

Օլգի. Հօրեղբայր, հօրեղբայր Հիլմար:

Հիլմ. Ինչ ես ուզում: Ինչու դու այժմ վերև չես: Ձի՞ որ դու պատժուած ես:

Օլգի. (մի քանի քայլ առաջ է գալիս): Սուս, հօրեղբայր Հիլմար, նոր բան չգիտես...

Հիլմ. Այո, ես արդէն իմանում եմ որ դու այսօր ծեծուել ես:

Օլգի. (իր հոր սենեակի մօտ սպառնական դիրքով կանգնած է): Նա ինձ չպէտքէ այդքան շատ ծեծի: Բայց դու իմանում ես

որ հօրեղբայր Յովհաննէսը վաղը Ամերիկացիների հետ գը-նում է։

Հիլմ. Քո ինչ գործն է։ Գնա էլի վերև։

Օլաֆ. Հօրեղբայր, գուցէ ինձ աջողուի մի անգամ վայ-ելեն եղ որսալու։

Հիլմ. Յիմար, քեզ նման վախկոտի մէկը...

Օլաֆ. Այո, սպասիր։ Վաղը դու արդէն կը տեսնես։

Դատարկ... (պարտէզ է գնում։ Օլաֆը Քրապի աջ կողմով ներս մտնելը նկատելով փախչում է իր սենեակը եւ դուռը կողպում)։

Քրապ. (գնում է դէպի քաղաքապետի դուռը եւ նրա մօտ կան գնում)։ Ներեցէք, պարոն քաղաքապետ, որ ես կրկին ձեզ մօտ եմ գալիս. այժմ սկսում է սաստիկ փոթորիկը. (մի բոպէ սպասում է նրան, չէ պատասխանում)։ «Վիթ»-ս դուրս կ'գայ։

Բեր. (իր սենեակում) Այո, պէտք է դուրս գնայ։

(Քրապը նորից դուռը կողպում եւ աջ կողմով դուրս է գնում)։

ՎԱՐԱԳՈՅՐ

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Քաղաքապետ Բերնիկի տան պարտիզի տաղօնը։

(Այն սեղանը որի մօտ նստած աշխատում էին, մի քիչ հեռացրուած է։ Կէս օրից յետոյ է. եղանակը փոթորկալի է, հետզհետէ սկսում է մթնել։ Մի ծառայ ջուները վառում է, երկու աղախինները ներս են բերում ծաղկամաններ, ճրագներ եւ մոմեր։ Մոմերի մի քանիսը դնում են սեղանների վրայ, մի քանիսն էլ պատերի հայելիների կողքերից են կախ անում։ Վաճառական Ռումմելը համազգեստը, ձեռնոցները, եւ ըս-պիտակ վզնոցը հագած, կանգնած է սպասում եւ կարգադրութիւններ է անում։

Ռում. (ծառային)։ Բոլոր մոմերը մի վառիր, Յակոբ, տօ-նական լուսաւորութիւն հարկաւոր չէ։ Պէտք է այդ միայն սիւրպրիզ լինի։ Եւ այս բոլոր ծաղիկները... Դէհ լաւ, թող դրանք էլ մնան... թող դրանք կարծեն, որ իբր թէ այդ ճրագ-ները այստեղ միշտ վառուած են լինում։ (Քաղաքապետ Բեր-նիկ իր սենեակից դուրս է գնում)։

Բեր. (դռան մօտ) Այս ինչ է նշանակում։

Ռում. Օ՜հ դու այստեղ ես... (ծառաներին) Այժմ դուք կարող էք գնալ. (ծառան եւ աղախինները ձախ կողմի երկրորդ դռ-նով հեռանում են)։

Բեր. (մտահոգով)։ Բայ այս ինչ է նշանակում, Ռումմել...

Ռում. Այս նշանակում է, որ քո կեանքի փրկաւոր բո-

պէն հասել է։ Այս երեկոյեան ամբողջ քաղաքն իւր առաջին քաղաքացուն պէտք է մի սերենադայով պատուի։

Բեր. Ի՞նչ ես ասում։

Ռում. Այո, երաժշտական մի սերենադայով։ Մենք՞ ուզում էինք նոյնպէս ջահեր վերցնել, բայց այսպիսի փոթորկալի եղանակով մենք այդ չենք կարող անել։ Բացի դրանից շատ լաւ հրավառութիւն էլ պէտք է լինի, որովհետև լրագիրները այդ բանի մասին պէտք է գրեն։

Բեր. Լսիր, Ռումմել, ես այդ բանի մասին չեմ ուզում մինչև անգամ լսել։

Ռում. Ո՛չ, արդէն ուշ է, նրանք կէս ժամից յետոյ այստեղ կըլինին։

Բեր. Բայց ինչո՞ւ համար դրա մասին ինձ առաջուց չեն ասել։

Ռում. Որովհետև ես վախենում էի, որ դու այդ հանդիսի մասին կարող էիր զանազան առարկութիւններ անել։ Այդ խնդրի մասին ես խօսեցի կնոջդ հետ. նա ինձ թոյլ տուեց ամեն բան կազմել և ինքն էլ հիւրասիրութեան մասին հոգալ։

Բեր. (մի ձայն է լսում). Այս ի՞նչ է։ Նրանք արդէն գալի՞ս են, կարծեմ երգի ձայն եմ լսում։

Ռում. (պարտիզի դռան մօտ)։ Ե՞րգ։ Դրանք միայն Ամերիկացիներն են, որոնք «Վիթ»-ը դուրս են բերում։

Բեր. Դո՞ւրս են բերում։ Այո՛... ոչ, ես այս երեկոյեան չեմ կարող, որովհետև հիւանդ եմ։

Ռում. Այո՛, ճշմարիտ, որ դու վատ ես երևում։ Բայց պէտք է ուրախանաս, անպատճառ ուրախանաս։ Եթէ դու իմանայիր, թէ ես, Ալտշտերն և Վիդելանդը ինչպէս ենք աշխատել այդ բանը գլուխ բերելու։ Եւ կարծում եմ մեր հակառակորդները հասարակական կարծիքից կըճնշուեն։ Ամբողջ քաղաքում զանազան տեսակ ձայներ են տարածուել, Այն հոդեր գնելը այլևս երկար չպէտք է գաղտնի մնայ։ Դու այսօր երեկոյեան երգերի, ճառերի և բաժակների իրար զարնուելու ժամանակ պէտք է յայտնես, որ միմիայն հասարակութեան օգտի համար ես այդ համարձակ քայլը արել։ Մի այդ տեսակ հանդիսի ժամանակ մեզ մօտ կարելի է շատ բան անել։ Այդ հանդէսն անպատճառ պէտք է կատարենք և առանց դրան ոչինչ չէ կարելի գլուխ բերել։

Բեր. Այո, այո, այո...

Ռում. Մանաւանդ երբ մի այդպիսի դժուար և հիանալի հարց պէտք է բարձրացնուի. փառք Աստուծու, որ անուն ունիս, Բերնիկ։ Բայց այժմ լռիր, մենք պէտք է իրար հասկանանք։ Հիլմար Թիոննեսէնը քեզ համար մի երգ է յօրինել։ Այդ երգը հետևեալ գեղեցիկ խօսքերովն է սկսում «կ ե ց ց է, կ ե ց ց է, գ ա ղ ա փ ա ր ա կ ա ն դ ր օ շ ա կ», իսկ քարողչի օգնական Բորլանդը գովասանական ճառը կը խօսի, և դու ի հարկէ այդ ճառին պէտք է պատասխանես։

Բեր. Այս երեկոյեան ես չեմ կարող, Ռումմէլ, դու չե՞ս...

Ռում. Այդ անկարելի է, որքան էլ ես սիրով ցանկանայի. ըստ ինքեան հասկանալի է, որ այդ ճառը քեզ ուղղուած կըլինի։ Բայց նա գուցէ իր ճառի մի քանի խօսքերն էլ դէպի մեզ ուղղի։ Ես Ալտշտեդի և Վիդելանդի հետ դրա մասին արդէն խօսել եմ. մեր կարծիքով լաւ կըլինի եթէ դու հասարակութեան առաջադիմութեան, բարեկարգութեան կենացը առաջարկես։ Ալտշտեդը հասարակութեան զանազան խաւերի համերաշխութեան և միութեան մասին մի քանի խօսք կասի։ Վիդելանդը մի կենացով ցանկութիւն կըյայտնի, որ մեր նոր ձեռնարկութիւնը չ'քանդէ բարոյական այն նեցուկը, որի վրայ այժմ կանգնած է հասարակութիւնը։ Ես էլ ուզում եմ մի քանի խօսք ասել այն տիկինների մասին, որոնց աջող գործունէութիւնը հասարակութեան համար օգտաւէտ է։ Բայց դու չես լսում...

Բեր. Այո, լսում եմ... բայց ասա, խնդրեմ, ծովը շատ է փոթորկալի։

Ռում.. Դու «Արմաւենու» համար ես վախենում.... բայց չէ՞ որ նա արդէն լաւ ապահովագրուած է։

Բեր. Այո՛, ապահովագրուած է, բայց...

Ռում. Եւ լաւ է նորոգուած, այդ ամենից գլխաւորն է։

Բեր. Հը՛մ... բայց եթէ շոգենաւի հետ մինչև անգամ մի բան էլ պատահի, այդ դեռ չէ նշանակում որ մարդկանց կեանքը կը զոհուի... նաւն և բեռը կարող են կորչել..., իսկ պայուսակը և թղթերը...

Ռում. Ի սէր Աստուծոյ, չարժէ պայուսակի և թղթերի մասին այդքան մտածել։

Բեր. Չարժէ՞, ոչ, ես միայն կարծում եմ, որ... լսէր, ահա նրանք կրկին երգում են...

Ռում. Նրանք «Արմաւենու» նաւաստիներն են. (վաճառակ. Վիգելանդը աջ կողմից ներս է մտնում)։

Վիգ. Այո, նրանք այժմ «Արմաւենին» դուրս են բերում։ Բարի երեկոյ, պ. քաղաքապետ։

Բեր. Իսկ դուք իրրև փորձառու յուսո՞վ էք որ...

Վիգ. Յոյս նախախնամութեան վրայ եմ դրել, պարոն քաղաքապետ. բացի դրանից ես գնացի նաւահանգիստ և մի քանի թերթեր բաժանեցի, որոնք յուսով եմ բարերար ազդեցութիւն կը թողնեն։ (Ալտշտէտն եւ Քրապն աջ կողմից դալիս են)։

Ալտշ. (դռան մօտ)։ Այո, եթէ այդ բանը լաւ լինի, այն ժամանակ ամեն ինչ լաւ կը լինի։ Ահ, բարի երեկոյ, բարի երեկոյ։

Բեր. Բա՞ն է պատահել, պարոն Քրապ։

Քրապ. Ես ոչինչ չեմ ասել, պ. քաղաքապետ։

Ալտշ. «Վիթ»-ի բոլոր նաւաստիները հարբած են. ես պատուաւոր մարդ չեմ լինիլ, եթէ նրանք կենդանի այնտեղ կարողանան հասնել։ (Օր. Հեսսելը աջ կողմից ներս է մտնում)։

Օր. Հես. (Բերնիկին) Այո, այժմ ես կարող եմ նրա կողմից ողջունել։

Բեր. Արդէն նաւահանգստո՞ւմն է։

Օր. Հես. Նա շուտով այստեղ կը լինի։ Մենք հիւրանոցում միմիանցից բաժանուեցինք։

Բեր. Նա հաստատ է վճռել։

Օր. Հես. Ժայռի նման հաստատ է։

Ռում. (լուսամուտի մօտ)։ Գրողը տանի այս նոր ձևերը։ Չեմ կարողանում վարագոյրը իջեցնել։

Օր. Հես. Ուզո՞ւմ էք ծածկել։ Ես կարծում եմ ընդհակառակն։

Ռում. Օրիորդ, առ այժմ ծածկենք, դուք արդէն իմանում էք թէ ինչ պէտք է պատահի։

Օր. Հես. Այո, թող ես օգնեմ. (վարագոյրի կողքերից բռնում է) ես ուզում եմ Բերնիկի համար վարագոյրը իջեցնել... թէկուզ ես աւելի շուտ կը ցանկայի բարձրացնել...

Ռում. Այդ էլ յետոյ կարող էք անել, երբ ամբոխը մեր պարտէզը կը մտնի, այն ժամանակ վարագոյրները կը բարձրացնենք, որպէսզի նա տեսնի այս երջանիկ և ուրախ ընտանիքը։ Քաղաքապետի տունը ապակեայ պահարանի նման պէտք է լինի։

Բեր. (կարծես ուզում է մի բան ասել, բայց յետոյ դառնում եւ գնում է իր սենեակը)։

Ռում. Այժմ վերջին անգամ խորհուրդ անենք... եկէք ինձ հետ, պարոն Քրապ, դուք մեզ մի քանի բաներ պիտի բացատրէք. (բոլոր պարոնները քաղաքապետի սենեակն են մտնում)։ (Օր. Հեսսելը լուսամուտների վարագոյրները ծածկել եւ ուզում է նոյնպէս ապակեայ դռան վարագոյրն էլ իջեցնել։ Օլաֆը վերեւից դալիս է սանդուխքի աստիճանի մօտ կանգնում)։

Օր. Հես. Ա՜խ Աստուած իմ, դու ինձ բոլորովին վախեցրիր.

Օլաֆ. (դուռը ծածկում է) սուս, մօրաքոյր։

Օր. Հես. Լուսամուտովն ես փախել։ Ո՞ւր ես ուզում գնալ։

Օլաֆ. Սուս... չխօսես։ Ես ուզում եմ քեռի Յովհաննէսի... դէպի նաւահանգիստը. իմանում ես... նրան միայն մնաս բարև ասել։ Բարի գիշեր, մօրաքոյր։ (պարտիզով դուրս է գնում)։

Օր. Հես. Ո՛չ, սպասիր, Օլաֆ, Օլաֆ։ (Յովհաննէսը իրրեւ ճանապարհորդ հագնուած եւ պայուսակն ուսին ձգած, աջ դռնով ներս է մտնում)։

Յովհ. Լոնա։

Օր. Հես. (դէպի նրան դառնալով)։ Ինչո՞ւ ես վերադարձել։

Յովհ. Ես մի քանի բոպէ դեռ ժամանակ ունիմ, ուզում

եմ նրան միանգամ էլ տեսնել։ Ինչպէս մենք չենք կարող միմեանցից բաժանուել։ (Պ. Բերնիկն եւ Մարթան վերարկուներ հագած ձախ կողմի երկրորդ դռնով ներս են մտնում։ Դինան վերցրել է եւ իր ցանապաքնորդական փոքրիկ պայուսակը)։

Դինա. Նրա մօտ, նրա մօտ։

Օր. Բեր. Այո, դու պէտք է նրա մօտ գնաս, Դինա։

Դինա. Ահա նա։

Յովհ. Դինա։

Դինա. Ինձ էլ վերցրէք ձեզ հետ։

Յովհ. Ինչպէս...

Օր. Հես. Ոզո՞ւմ ես...

Դինա. Այո, ինձ էլ ձեզ հետ վերցրէք։ Նա ինձ գրել և ասում է, որ այս երեկոյեան բոլոր մարդկանց ներկայութեամբ կը յայտնի, որ...

Յովհ. Դինա... դուք նրան չէ՞ք սիրում։

Դինա. Այդ մարդուն ես ամենեին չեմ սիրել։ Ես ինձ ծովը կը ծգեմ, երբ ես նրա նշանածը դառնամ։ Նա ինձ երեկոյեան իր մեծահոգի ճառերով ինչպէս հիւանդացրեց և ուզում էր զգալ տալ, որ ինքը ինձ նման մի ոչինչ արարածի փրկում է։ Ինձ հետ չ՚պէտք է այդպէս հասարակ կերպով վարուել։ Ես ուզում եմ այստեղից հեռանալ։ Կարո՞ղ եմ ձեզ հետ գնալ։

Յով. Այո, այո, հազար անգամ այո։

Դինա. Ես չեմ ուզում ձեզ համար երկար ժամանակ ծանրութիւն լինել։ Միայն ինձ օգնեցէք մինչև այնտեղ հասնելը։ Օգնեցէք միայն մի քիչ գործի սկզբում։

Յովհ. Ուրրա, այդպէս կըլինի, Դինա։

Օր. Հես. (ցոյց է տալիս քաղաքապետի դուռը) սուս, կամաց, կամաց։

Յովհ. Դինա, ես ձեզ ձեռքերիս վրայ պէտք է տանեմ։

Դինա. Այդ բանը ես ձեզ թոյլ չեմ տալ... ես ուզում եմ ինքս ինձ օգնել և այդպէս կարող եմ անել այնտեղ։ Եթէ միայն այստեղից կարողանամ հեռանալ։ Օ՜հ, այս տիկինները... նրանք չգիտեն... նրանք ինձ այսօր էլ են գրել և

ուզում են ինձ խրատել և ցոյց տալ, թէ նա դէպի ինձ ինչպէս մեծահոգի կերպով է վարուել, միշտ ինձ հետևելեն, որպէսզի իմանան թէ ես արժանի եմ այդպիսի մի մեծ բախտի։ Այդ տեսակ կեղծաւորութիւնն ես բոլորովին ատում եմ։

Յովհ. Ասացէք ինձ, Դինա, մի՞թէ միայն դրա համար էք այստեղից հեռանում։ Մի՞թէ ես ձեզ համար ոչի՞նչ եմ։

Դինա։ Ո՛չ, Յովհաննէս, դուք ինձ համար միւս մարդկանցից աւելի բարձր էք։

Յովհ. Օ՜հ, Դինա...

Դինա. Այստեղ բոլորը ինձ ասում են, որ ես ձեզ ատեմ, զզուեմ ձեզանից, և իբր թէ պարտական եմ դէպի ձեզ այդպէս վարուել։ Բայց ես այդպիսի պարտականութիւն ամենևին չեմ հասկանում, և չ՚պէտք է էլ հասկանամ։

Օր. Հես. Դու այդ բանը չ՚պէտք է անես, սիրելիս։

Օր. Բեր. Այո, ճիշտ է, և իբրև նրա կինը պէտք է նրան հետևես։

Յովհ. Այո, այո...

Օր. Հես. Ի՞նչ... թող համբուրեմ քեզ, Մարթա։ Այդպիսի խօսք ես քեզանից չէի սպասում։

Օր. Բեր. Ես քեզ հաւատում եմ, որովհետև ես էլ այդպիսի խօսք ինձանից չեմ սպասիլ։ Բայց չէ՞ որ սառոյցը մի անգամ պէտք է կոտրուէր։ Այստեղի բարքերն և սովորութիւնները մեզ տանջում են։ Բողոքիր դրանց դէմ, Դինա։ Եղի՛ր նրա կինը, հարկաւոր է վերջ տալ մեր հասարակութեան կեղծաւորութեանը։

Յովհ. Ի՞նչ էք պատասխանում, Դինա։

Դինա. Այո, ես սպասում եմ ձեր կինը դառնալ։

Յովհ. Դինա։

Դինա. Բայց ամենից առաջ ես ցանկանում եմ մի քիչ աշխատել, որպէսզի մի բան դառնամ... ես չեմ ուզում առարկայ լինել, որը վերցնում են։

Օր. Հես. Այո, այդպէս լաւ է։ Ուրեմն այդպէս արա։

Յովհ. Լաւ, պէտք է յուսամ և սպասեմ։

Օ.. Հես. ... Նրան ստանալու, Ջոն։ Բայց այժմ ժամանակ է նաւահանգիստ գնալու։

Յովհ. Այո, գնանք։ Բայց, Լոնա, սիրելի քոյրս, մի խօսք ունիմ, լսիր, ինձ։ (նա նրան դէպի բեմի խորքն է տանում եւ արագ խօսում է նրա հետ)։

Օր. Բեր. Երջանիկ Դինա, թող քեզ վերջին անգամ նայեմ և համբուրեմ։

Դինա. Վերջին անգամը չէ... Ո՛չ, Մարթա, մենք միմիանց կրկին կը տեսնենք։

Օր. Բեր. Ո՛չ. խոստացիր ինձ, Դինա, որ ամենևին այստեղ չես վերադառնալ (բռնում է նրա երկու ձեռքերից եւ նրան նորից է նայում)։ Այժմ դու գնում ես երջանկութեանը դիմաւորելու, սիրելիս, ծովի այն կողմը... Դեռ աշակերտական նստարանի վրայ ես շատ եմ ցանկացել այդ ծովով այստեղից հեռանալ։ Այնտեղ լաւ պէտք է լինի։ Այնտեղի երկինքն ընդարձակ է... ամպերը աւելի բարձր են, քան այստեղ, և մարդկանց այնտեղ ազատ օդ է շրջապատում։

Դինա. Օ՜հ, Մարթա, դու էլ երևի միանգամ մեր հեռուից կ'գաս մեզ մօտ։

Օր. Բեր. Ե՞ս։ Ո՛չ, ոչ։ Ես այստեղ կեանքի մի փոքր խնդիր ունեմ։

Դինա. Միշտ քեզանից բաժանուած լինել, ո՛չ, ես չեմ կարող այդ մտքի հետ հաշտուել։

Օր. Բեր. Օ՜հ, Դինա, մարդս կարող է շատերից անջատուած մնալ։ (համբուրում է նրան) խոստացիր ինձ, որ նրան կը բախտաւորացնես, սիրելի մանուկս։

Դինա. Ես ոչինչ չեմ ուզում խոստանալ։ Ես ատում եմ բոլոր խոստումները, ամեն բան այնպէս կըլինի, որպէս այդ Աստուած է ցանկանում։

Օր. Բեր. Այո, այո, այդպէս է. մնա այսպէս, ինչպէս որ ես, և եղիր ճշմարիտ և հաւատարիմ դէպի քեզ։

Դինա. Ես էլ այդպէս եմ ուզում, Մարթա։

Օր. Հես. (Յովհաննէսի տուած թղթերն իր գրպանն է դնում)։ Լաւ, լաւ, սիրելի Ջոնս, այժմ գնացէք։

Յովհ. Այո, այժմ մենք այլևս ժամանակ չունենք։ Մնաս բարև, Լոնա, շնորհակալ եմ քո սիրոյ համար, մնաս բարև Մարթա, քո ընկերութեան համար նոյնպէս շնորհակալ եմ։

Օր. Բեր. Մնաս բարեաւ, Յովհաննէս, մնաս բարեաւ Դինա։ Եղէք միմեանց հետ երջանիկ. (նա եւ օր. Հեսսէլը դէպի բեմի խորքի դուռն են գնում։ Յովհաննէսն եւ Դինան պարտիզով շուտով հեռանում են։ Օր. Հեսսէլը փակում է դուռն եւ վարագոյրը ծածկում)։

Օր. Հես. Այժմ մենք միայնակ ենք, Մարթա։ Դու Դինային կորցրիր, իսկ ես Յովհաննէսին։

Օր. Բեր. Դու Յովհաննէսին։

Օր. Հես. Ես նրան տանն էի համարեայ կիսով չափ կորցրել։ Այդ երիտասարդը աշխատում էր իր սեպհական ոտների վրայ կանգնել և դրա համար էլ ես համոզեցի նրան, երբ թէ հայրենիքի տենչանք ունիմ։

Օր. Բեր. Դրա՞ համար։ Այժմ ես հասկանում եմ, թէ դու ինչու այստեղ եկար։ Բայց նա նորից կը ձգտի դէպի քեզ, Լոնա։

Օր. Հես. Ի՞նչ է նրա համար մի խորթ աղջկանուհին... մարդիկ յաճախ քանդում են շատ կապեր, որպէսզի երջանկանան։

Օր. Բեր. Այո, այդպէս է...

Օր. Հես. Բայց այժմ մենք միասին պէտք է լինենք, Մարթա։

Օր. Բեր. Ի՞նչ կարող եմ ես քեզ համար անել։

Օր. Հես. Դու ինձ համար, բոլորից բարձր ես... մենք երկուսս իրրև հոգացող մայրեր, մեր երեխաներին կորցրինք։ Այժմ մենք միայնակ ենք։

Օր. Բեր. Այո, միայնակ ենք, և հենց դրա համար դու պէտք է իմանաս, որ ես էլ նրան սիրել եմ։

Օր. Հես. Մարթա... (նրա ձեռքից բռնում է) մի՞թէ այդ ճշմարիտ է։

Օր. Բեր. Ամբողջ կեանքիս բովանդակութիւնն այդ խօսքերումն է կայանում։ Ես նրան սիրել և սպասել եմ։ Ամեն

ամառ ես սպասում էի, որ նա կըգար... նա եկաւ... Բայց չտեսաւ...

Or. Հես. Նրան սիրե՞լ ես։ Դու էիր, որ նրան երջանկացրիր։

Or. Բեր. Ես նրան պէտք է երջանկացնէի, որովհետև նրան սիրում էի։ Այո, ես նրան սիրել եմ։ Ամբողջ կեանքս նրան է պատկանել... Այն օրից ի վեր երբ նա այստեղից հեռացաւ։ Դու հարցնում ես, թէ ես ի՞նչ հիմք ունէի նրանից որ և է բան յուսալու... Օ՜, ես, կարծեմ հիմք ունէի յուսալու. բայց երբ նա այստեղ վերադարձաւ, կարծես թէ ամեն բան մոռացել էր... նա ինձ վրայ չ'նայեց...

Or. Հես. Դինան քեզ վրայ ստուեր ձգեց, Մարթա։

Or. Բեր. Լաւ է, որ նա այդպէս արեց։ Երբ նա այստեղից հեռացաւ, մենք երկուսս էլ միևնոյն տարիքն ունէինք, բայց երբ ես նրան նորից տեսայ, օ'հ, այդ սարսափելի բոպէն, այն ժամանակ ինձ համար պարզ էր, որ ես նրանից տաս տարով մեծ էի։ Նա այնտեղ, ովկիանոսի միւս կողմում միշտ պարզ արեգակի լոյսի ազդեցութեան տակ է ապրել և միշտ մաքուր օդ ծծելով, առողջ և երիտասարդ է մնացել, իսկ ես այստեղ միշտ նստել և կարելով ու մանելով եմ զբաղուել։

Or. Հես. Նրա բախտն ես հիւսել, Մարթա։

Or. Բեր. Այո, կարծես թէ ես ոսկի էի հիւսում և ոչ թէ դառնութիւն։ Լոնա, մենք նրա համար երկու լաւ քոյրեր ենք եղել, այնպէս չէ՞։

Or. Հես. (ձեռքը նրա վրայ է դնում) Մարթա... (Բերնիկն իւր սենեակից գալիս է)։

Բեր. (իւր սենեակի պարոններին) Այո, այո, ինչպէս ուզում էք, այնպէս արէք։ Երբ ժամանակը կը գայ, այն ժամանակ ես պէտք է... (դուռը փակում է) Ա'հ դուք այստե՞ղ էք... Լսի՛ր, Մարթա, դու պէտք է մի քի՞չ զարդարուես։ Բետսիին էլ ասի՛ր, նա էլ պէտք է նոյնը անէ։ Գիտե՞ս, ես փառահեղ բան չեմ ուզում, այլ մի հասարակ և համեստ զարդարանք։ Բայց շո՛ւտ։

Or. Հես. Ձեր դէմքերն էլ պէտք է բաւականութիւն և երջանկութիւն արտայայտեն, իսկ աչքերը լաւ փայլեն...

Բեր. Օլաֆը նոյնպէս այստեղ պէտք է գայ. ես ուզում եմ նրան մօտս ունենալ։

Or. Հես. Հը՜մ... Օլաֆ...

Or. Բեր. Ես Բետսիին կասեմ (ձախ կողմի երկրորդ դռնով հեռանում է)։

Or. Հես. Ուրեմն հանդիսաւոր բոպէն մօտեցե՞լ է։

Բեր. (անհանգիստ կերպով քայլում է) Այո, այդ բոպէն արդէն հասել է։

Or. Հես. Մի այդպէսի բոպէում մարդս իրեն հպարտ և երջանիկ պէտք է զգայ.....

Բեր. (նրան նայելով) Հ՜ըմ...

Or. Հես. Ինչպէս ես լսում եմ, ամբողջ քաղաքը պէտք է լուսաւորուած լինի։

Բեր. Այո, կարծում եմ։

Or. Հես. Բոլոր ընկերութիւնները իրանց դրօշակներով պէտք է այստեղ դան։ Քո անունը հրաւառ գրերով պէտք է լուսաւորուի։ Այս գիշեր մեր երկրի դէպի ամեն կողմեր պէտք է հեռագիրներ ուղարկուեն հետևեալ բովանդակութեամբ. «Քաղաքապետ Բերնիկը, հասարակութեան նեցուկներից մէկը, իւր ընտանիքով շրջապատուած, հաժաքաղաքացիների յարգանքը ընդունեց։»

Բեր. Ամեն բան պէտք է լինի։ Փողոցում պէտք է ուրբա կոչեն, ինձ դէպի դուռն տանեն և ես նրանց պէտք է շնորհակալութիւն անեմ և հիւրասիրեմ։

Or. Հես. Ա'հ, դու պէտք է...

Բեր. Դու կարծում ես թէ ես այս բոպէին ինձ բախտաւոր եմ զգում։

Or. Հես. Ո՛չ, չեմ կարծում, որ դու քեզ բոլորովին բախտաւոր զգաս։

Բեր. Լոնա, դու ինձ արհամարհում ես։

Or. Հես. Դեռ ոչ։

Բեր. Դու իրաւունք էլ չունիս... ոչ, դու ինձ չ'պէտք է արհամարհես։ Լոնա, դու չես կարող երևակայել թէ ես այս սահմանափակ և յիմար հասարակութեան մէջ ինչպէս միայնակ եմ մնացել, և բացի դրանից, թէ ինչպէս իմ մէջ տարբեցտարի բարձր կեանքի խընդիրքը յղացաւ և հետզհետէ զարգացաւ։ Ես ինչ եմ արել, որքան էլ աշխատութիւնս բազմանան երևայ։ Մինչև այժմ քիչ բան եմ արել, այստեղ չէ կարելի ուրիշ աւելի մեծ կենսական գործ կատարել և աւելի լայն կեանքի խնդիր ունենալ։ Եթէ ես փորձէի մեր ժամանակակից գաղափարներից և հայեացքներից մի քիչ խոյս տալ, այն ժամանակ այժս կըկորցնէի... գիտես մենք հասարակութեան նեցուկներ ենք կոչվում։ Իսկապէս մենք հասարակութեան գործիքներն ենք և ուրիշ ոչինչ։

Օր. Հես. Եւ ինչու՞ ես դու այդ միայն այժմ իմանում։

Բեր. Որովհետև ես վերջին ժամանակս, սկսած այն օրից, երբ դու այստեղ ես, մանաւանդ այս երեկոյեան, այդ հարցի մասին շատ եմ մտածել։ Օ՜հ, Լոնա, ինչու՞ ես քեզ առաջներում լաւ չեմ ճանաչել։

Օր. Հես. Յեռոյ...

Բեր. Ես քեզ ամենևին չէի թողնել եթէ դու ինձ հետ լինէիր, այն մամանակ ես այնպիսի դիրք չէի ունենալ, որպիսին իմ ներկայ դիրքս է։

Օր։ Հես. Բայց դու չ'մտածեցիր թէ նա, որին իմ փոխարէն քեզ համար ընտրեցիր, ինչ կարող էր դառնալ։

Բեր. Բայց յամենայն դէպս ես գիտեմ, որ նա ինձ համար այն չեղաւ, ինչ որ ես էի ցանկանում։

Օր. Հես. Որովհետև դու նրա հետ կեանքի խնդիրը չըբաժանեցիր և դրա համար նրա յարաբերութիւնը քեզ հետ ուղիղ և ազատ չէր։ Զմոռանամ ասել և այն, դու նրան այնպիսի խայտառակ դրութեան մէջ դրիր և նրա ազգականների հետ շատ վատ վարուեցիր։

Բեր. Այո՛, այո, մեղաւորը ստախօսութիւնը և կեղծաւորութիւնն էր։

Օր. Հես. Ինչու՞ չես թողնում ստախօսութիւնդ։

Բեր. Ա՞յժմ, այժմ արդէն ուշ է, Լոնա։

Օր. Հես. Ասա՛ ինձ, Ռիչարդ, մի՞թէ քեզ ստախօսութիւնը բաւականութիւն է պատճառում։

Բեր. Ո՛չ, ստախօսութիւնը և ցուցամոլութիւնը ինձ երբէք բաւականութիւն չեն պատճառում։ Ես պէտք է այս ամբողջ վատ հասարակութեան հետ խորտակուեմ։ Մեզանից յետոյ կը յառաջանայ մի նոր սերունդ. ես որդուս համար եմ աշխատում, նրան պատրաստում եմ կեանքի իսկական նպատակի համեմատ։ Կը գայ մի ժամանակ, երբ ճշմարտութիւնը հասարակական կեանքի մէջ կը թափանցի, և որդիս այդ ճշմարտութեան վրա մի երջանիկ գոյութիւն կը հիմնի, քան թէ իր հայրն է այդ արել։

Օր. Հես. Ստախօսութիւնը հիմքի տեղ կը ծառայի։ Մտածիր և տես, թէ որդուդ ինչ ժառանգութիւն ես թողնում։

Բեր. (բոլորովին յուսահատուած) Ես նրա համար հազար անգամ աւելի վատ ժառանգութիւն եմ թողնում, քան թէ դու այդ իմանում ես։ Բայց վաղ թէ ուշ այդ անէծքը կը վերջանայ։ Ես բացի դրանից... բացի դրանից (բարկացած) ինչու՞ էք այդ բոլոր բաների համար իմ դէմ դաւադրութիւն կազմում։ Բայց ինչ ինձ է վերաբերում, արդէն եղել է։ Ես պէտք է աշխատեմ և չեմ կարող գործս դադարեցնել։ Դուք ուզում էք ինձ փչացնել, բայց այդ ձեզ չ'պէտք է աջողուի։ (Հիլմարը մի բաց նամակ ձեռին, աջ կողմի դռնից իսկոյն ներս է մտնում)։

Հիլմ. Բայց այս... Բեատի, Բեատի։

Բեր. Ի՞նչէ, ի՞նչ։ Նրանք արդէն գալի՞ս են.

Հիլմ. Ո՛չ, ոչ, ես պէտք է անպատճառ մէկի հետ խօսեմ։ (Ձախ կողմի ետեւի դռնով դնում է)։

Օր. Հես. Ռիչարդ... քո ասելով մենք եկել ենք քեզ փչացնելու։ Թող որ ես խօսեմ։ Որպիսի՞ մեծաղից է այդ կորուսեալ որդին շինուած, որից ձեր բարոյական հասարակութիւնը փախչում է, կարծես թէ նա ժանտախտ հիւանդութիւն ունի։ Նա արդէն ձեզանից ազատուել և հեռացել է։

Բեր. Բայց նա ուզում էր կրկին վերադառնալ։

Օr. Հես. Յովհաննէսը բոլորովին չի վերադառնալ. նա այս քաղաքը վերջականապէս թողել և Դինան էլ նրա հետ է գնացել։

Բեր. Բոլորովին չի՞ վերադառնալ։ Եւ Դինան էլ նրա հետ գնացե՞լ է։

Օr. Հես. Այո, նրա կինը դառնալու. Դրանով այդ երկուսը ձեր առաքինի հասարակութեանը ապտակ են տալիս, որպէս ես մի ժամանակ... այո։

Բեր. Նրանք արդէն գնացել են։ Դինան նոյնպէս «Վիթ»-ով է...

Օr. Հես. Ո՛չ, այդպիսի մի թանկագին մարդ չէր կարող ձեր փթած շոգենաւին վստահանալ։ Յովհաննէսն և Դինան «Արմաւենի»-ով են գնացել։

Բեր. Ա՜խ... Այդպէ՞ս... ի զուր... (Բեմի վրա ման է գալիս, յետոյ իսկոյն գնում է իւր սենեակի դուռը բաց է անում եւ դուռում է) Քրնպ, «Վիթ»-ը պահեցէ՛ք։ Այս երեկոյեան նա ծովը չ'պէտք է մտնի։

Քրապ. (սենեակում) «Վիթ»-ն արդէն ծովի վրա է, պ. քաղաքապետ։

Բեր. (դուռը փակում է, բոլորովին թուլացած խօսում) Արդէն ուշ է... և բոլորովին անօգուտ...

Օr. Հես. Ի՞նչ ես ասում։

Բեր. Ոչինչ, ոչինչ, հեռացէ՛ք ինձանից։

Օr. Հես. Հը՜մ... լսի՛ր Ռիչարդ։ Յովհաննէսն ինձ պատուիրեց քեզ ասելու, որ նա իր անունը ինձ է վստահանում, որը նա մի ժամանակ քեզ է տուել, նոյնպէս և քո նրա բացակայութեան ժամանակ գողացած փողը։ Յովհաննէսը կը լսի, իսկ ես այդ հարցի մասին կարող եմ անել այն, ինչ որ ուզում եմ։ Ահա քո երկու նամակներդ ինձ մօտ են։

Բեր. Քեզ մօտ են։ Եւ այժմ... այժմ դու ուզո՞ւմ ես... այսօր երեկոյեան գուցէ սերենադայի ժամանակ։

Օr. Հես. Ես չեմ վերադարձել այստեղ քեզ մատնելու, այլ որպէսզի քեզ յորդորեմ պարզ խօսելու։ Այդ բանը ինձ 'չաջողուեց։ Դու կարող ես ստախօսութեանդ վրա հաստատ մնալ։ Տես, ահա պատռում եմ երկու նամակներդ։ Վերցրու կտորները, ահա քեզ։ Այժմ քո դէմ բողոքելու համար ոչ մի ապացոյց և փաստ գոյութիւն չունի։ Այժմ դու ազատով ես, և եթէ կարող ես երջանկացիր։

Բեր. (խորին կիրպով զբաղուած) Լոնա, ինչո՞ւ այդ առաջ չարիր։ Այժմ արդէն ուշ է, մանաւանդ որ ամբողջ կեանքս կատակի եմ ենթարկել... անկարելի է այլևս իմ ապրելը...

Օr. Հես. Բայց ինչ է պատահել։

Բեր. Ինձանից մի հարցնիլ։ Բայց ոչ... Ես պէտք է ապրեմ. ես ուզում եմ որդուս համար ապրել։ Նա ամեն ինչ կը բաւի և նորից կուզղի։

Օr. Հես. Ռիչարդ... (Հիլմարը շուտով վերադառնում է)։

Հիլմ. Ոչ ոքի չգտայ, բոլորը գնացել են. նոյնիսկ Բետտին։

Բեր. Ի՞նչ ունիս ասելու։

Հիլմ. Չեմ կարող քեզ ասել,

Բեր. Ինչ՞ կայ, դու պէտք է այդ ինձ ասես։

Հիլմ. Լաւ, Օլաֆը «Վիթ»-ով գնացել է։

Բեր. (բոլորովին շուարած) Օլաֆը... «Վիթ»-ով... Ո՛չ, ոչ, դու ստում ես։

Օr. Հես. Ո՛չ, ճշմարիտ է։ Այժմ ես հասկանում եմ։ Ես նրան պատուհանում փախչելիս տեսայ։

Բեր. (իր սենեակի դռան մօտ է գնում եւ կանչում) Քրնպ, աշխատիր «Վիթ»-ը անպատճառ պահել։

Քրապ. (դուրս է գնում) Այդ անկարելի է, պարոն քաղաքապետ։ Ի՞նչպէս կարելի է...

Բեր. Ո՛չ, հարկաւոր է շոգենաւը անպատճառ կանգնեցնել։ Չէ՞ որ Օլաֆը շոգենաւումն է։

Քրապ. Ի՜նչ էք ասում։

Ռուս. (դուրս է գնում) Օլաֆը փախե՞լ է... Մի՞թէ...

Այլոց. (ներս է մտնում) Նրան լոցմանով կը վերադարձնեն, պարոն քաղաքապետ։

Հիլմ. Ո՛չ, ոչ, նա ինձ գրել է։ (Տոմսակը ցոյց է տալիս) Նա ասաց որ ինքը ապրանքների մէջ թաղ կը կենայ, մին-

չև որ շոգենաւը նաւահանգստից բաւականին հեռացած լինի։

Բեր.. Օ՜հ, ես նրան այլևս չեմ տեսնիլ։

Ռում. Ա՜խ, ինչ յիմար բան ես ասում։ Մի այդպիսի ամուր ու լաւ նաւ... և շատ նորոգուած...

Վիգ. (սենեակից նոյնպէս. դուրս է եկել) Եւ այն էլ ձեր սեպհական նաւագործարանում նորոգուած, պարոն քաղաքապետ։

Բեր. Ես նրան այլևս չեմ տեսնիլ, ասում եմ ձեզ։ Նրան կորցրել եմ։ Լոնա, և... տեսնում եմ... որ նա երբէք իմս չէ եղել։ (Ուշադրութեամբ մի բանի ականջ է դնում) Այս ի՞նչ է։

Ռում. Երաժշտութիւնը։ Գնացքը գալիս է։

Բեր։ Ես չեմ կարող և չեմ էլ ուզում նրանց բոլորովին ընդունել։

Ռում. Ի՞նչ ես մտածում։ Այդ բոլորովին անկարելի է։

Ալsշsեs. Անկարելի է, պարոն քաղաքապետ, գիտէ՞ք թէ դրանից ինչ բաներ են կախուած։

Բեր. Ի՞նչ պէտք է դրանից վաստակել. էլ ո՞ւմ համար եմ ես աշխատում,

Ռում. Եւ դո՞ւ ես այդ բանը հարցնողը։ Դու պէտք է մեզ և հասարակութեան համար աշխատես։

Վիգ. Շատ ճշմարիտ է։

Ալsշsեs. Եւ չ՚մոռանաք. պարոն քաղաքապետ, որ մենք... (Օր Բերնիկը ձախ կողմի ետեւի դռնով ներս է մտնում։ Փողոցի երաժշտութեան մեղմ ձայնը լսւում է)։

Օr. Բեr. Այժմ գնացքը գալիս է, բայց Բետտին տանը չէ. ես չեմ հասկանում թէ որտեղ է նա։

Բեr. Տանը չէ՞... Տեսնո՞ւմ ես, Լոնա, ես ոչ ուրախութեանս և ոչ էլ ասնջանքիս ժամանակ նեցուկ չունեմ։

Ռում. Վարագոյրները բարձրացրէք։ Օգնեցէք ինձ, պարոն Բրապ։ Դուք նոյնպէս, Ալտշտեդ։ Ինչպէս ցաւալի է, որ այս ընտանիքն այս բոպէիս ցրուել է։ Այդ բանը մեր կազմած ծրագրին չէ համապատասխանում։ (Լուսամուտների եւ դռան վարագոյրները բարձրացնում են։ Հակառակ տան դռան վրա գրուած են հետեւեալ խօսքերը)։ «Կեցցէ մեր հասարակութեան նեցուկ քաղաքապետ Բերնիկը»։

Բեr. (յետ է քաշւում) Հեռու տարէք ինձանից այդ բոլոր բաները։ Ես այդ բանը չեմ ուզում տեսնել։ Հանգցրէք, հանգցրէք։

Ռում. Լաւ՞ր, խելքդ գլխումդ է։

Օr. Բեr. Ինչո՞ւ է նա այդպէս, Լոնա։

Օr. Հես. Սուս (նրա հետ հանդարտ խօսում է)։

Բեr. Հեռու տարէք այդ ծիծաղելի գրուածքը, ասում եմ ձեզ։ Մի՞թէ դուք չէ՞ք տեսնում որ այդ ճրագները մեզ վրա ծիծաղում են

Ռում. Ո՛չ, ես պէտք է խօստովանեմ։

Բեr. Օհ, դուք ոչինչ չ՚գիտէք... Բայց ես, ես... Մի դիակատան ճրագներ են դրանք...։

Բրապ. Հը՞մ...

Ռում. Ո՛չ. գիտե՞ս դու շատ ես վշտացել։

Ալsշsեs. Այն փոքրիկը Ատլանտեան ովկիանոսի վրա մի ճանապարհորդութիւն կանի և յետոյ կը վերադառնայ ձեզ մօտ։

Վիգ. Միայն դուք Ամենաբարձրեալի վրայ վստահ եղէք, պարոն քաղաքապետ։

Ռում. Եւ նոյնպէս նաւի վրա. նա փոթորկին կըդիմանայ։

Բրապ. Հը՞մ...

Ռում. Եթէ այն անպիտան նաւերից մէկը լինէր, որոնցից մեծ տէրութիւնները շատեն ուղարկում...

Բեr. Ես զգում եմ... Օ՜հ Աստուած իմ... (Տիկ. Բերնիկը մի թաշկինակ է ծռել գլխին եւ սարտիղի դռնով գալիս է)։

Տ. Բեr. Ռիչարդ, Ռիչարդ, գիտե՞ս դու...

Բեr. Այո, ես իմանում եմ... Բայց դու... դու ոչինչ չես նկատել մայրական աչքով...

Տ. Բեr. Օ՜հ, լաւ՞ր խնդրեմ։

Բեr. Ինչո՞ւ նրա վրա չես հսկել։ Այժմ նրան կորցրելեմ։ Տուր ինձ նրան կրկին եթէ կարող ես։

Տ. Բեr. Այո, ես կարող եմ. նա այստեղ է։

Բեր. Այստե՞ղ է նա։

Պարոներ. Ա՜հ։

Հիլմ. Ես էլ հենց այդպէս էի կարծում.

Տ. Բեր. Նա այստեղ է, Ռիչարդ։

Օր. Հես. Ուրեմն այժմ նրան բեր այստեղ։

Բեր. Այստե՞ղ է նա։ Ճշմարիտ, ո՞ւր է նա։

Տ. Բեր. Ես չեմ ասիլ մինչև որ դու նրան չ'ներես։

Բեր. Այ՛, ես կ'ներեմ, կ'ներեմ... բայց դու ի՞նչպէս իմացար։

Տ. Բեր. Դու կարծում ես թէ նրա մայրը կո՞յր է։ Ես մահու չափ վախենում էի, որ դու այդ բանի մասին լսէիր։ Նա երեկ մի երկու խօսք ասաց... Յետոյ ես նրա սենեակը դատարկ գտայ։ Նրա ճանապարհորդական պայուսակը և շորերը անյայտացան։

Բեր. Այո՞, այո՞...

Տ. Բեր. Ես դրանցով դուրս գնացի և Աուլէրին գտայ։ Մենք նրա նաւակով դուրս եկանք։ Ամերիկական շոգենաւը պատրաստւում էր ճանապարհուելու։ Փառք Աստուծոյ, մենք ժամանակին հասանք շոգենաւին և սկսեցինք նրան այստեղ վնտրել և վերջապէս գտանք նրան։ Օ՜հ Ռիչարդ, դու նրան չ'պէտք է պատժես։

Բեր. Բետի։

Տ. Բեր. Ներիր, Աուլէրին նոյնպէս։

Բեր. Աուլէրին։ Ի՞նչ է պատահել նրա հետ։ Մի՞թէ «Վիթ»-ը ծովի վրայ է,..

Տ. Բեր. Ո՛չ, հենց հարցը դրա մէջն է։

Բեր. Խօսիր, ասա՛։

Տ. Բեր. Աուլէրն ինձ նման շատ էր վախեցել։ Նրա եւ-տեւից մարդ գալը շատ ժամանակ պահանջեց։ Մուրը վրա հասաւ. լոցմանը չէր ուզում սպասել, և նա քո անունով հա-մարձակուեց...

Բեր. Յետո՞յ...

Տ. Բեր. Շոգենաւը մինչև առաւօտը պահելու։

Քրապ. Հ՜ըմ...

Բեր. Օ՜հ, ինչպէս ես երջանիկ եմ։

Տ. Բեր. Դու չե՞ս բարկանում։

Բեր. Բետի, ընդհակառակն ես շատ երջանիկ եմ։

Ռուս. Դու նոյնպէս շատ բարեխիղճ ես։

Հիլմ. Հենց որ ընութեան հետ մի փոքրիկ կռիւ սկսուեց, այն ժամանակ... օ՜հ...

Քրապ. (լուսամուտի մօտ) Պարոն քաղաքապետ, գնացքն արդէն պարտիզի դռնով գալիս է։

Բեր. Այո՛, այժմ կարող է գալ։

Ռուս. Ամբողջ պարտէզը մարդկանցով լցւում է։

Ալտշ. Ամբողջ փողոցն էլ մարդկանցով լիքն է։

Ռուս. Իսկ ամբողջ քաղաքը ոտքի վրա էր, Բերնիկ։ Ճշմարիտ, որ ներկայ բոպէն ոգեւորիչ է։

Վիգ. Այդ բոպէն մենք խաղաղ սրտով կըվայելենք, պարոն Ռումմէլ։

Ռուս. Բոլոր դրօշակները ծածանւում են։ Ինչպիսի՞ գնացք։ Ահա և հանդիսի մասնաժողովը, որի գլխին քարոզիչ Բորլանդն է կանգնած։

Բեր. Թողէք նրանք այստեղ դան, ասում եմ ձեզ։

Ռուս. Բայց լսիր, դու այժմ գրգռուած գրութեան մէջ ես գտնւում։

Բեր. Ի՞նչ։

Ռուս. Ես չեմ մերժել քեզ տեղ մերժելու։

Բեր. Ո՛չ, շնորհակալ եմ, այս երեկոյեան ես ինքս կըխօսեմ։

Ռուս. Բայց գիտե՞ս թէ ինչ պէտք է խօսես։

Բեր. Անհոգ եղիր, Ռումմէլ,... ես այժմ իմանում եմ թէ ինչ պէտք է խօսեմ։ (Երաժտութիւնը մի առ ժամանակ լռում է, պարտիզի դուռը բացւում է։ Հանդիսի մասնաժողովը Բորլանդի առաջնորդութեամբ ներս է մտնում. ծառաներից երկուսը մի ծածկած զամբիւղ են իրանց վրայ կրում։ Սրանց հետեւում են ամեն դասակարգերի քաղաքացիներ, որոնք դալիճում տեղաւորւումեն։ Պարտիզում եւ փողոցում խռնուած է ամբոխը. դրօշակները ծածանում են)։

Բորլ. Մեծապատիւ պարոն քաղաքապետ, Ձեր երեսի

վրա ես զարմանք եմ նկատում. որովհետև մենք ձեզ համար բոլորովին անսպասելի կերպով իբրև անկոչ հիւրեր, մտնում ենք ձեր երջանիկ ընտանեկան շրջանը և խաղաղ օջախը։ Բայց մեր սրտի ցանկութիւնն էր, ձեզ մեր համակրանքը ցոյց տալու։ Այս բանը առաջին անգամը չէ պատահում, բայց այսօր աւելի շքեղ հանդէսով ենք կատարում. Մենք շատ յաճախ ձեզանից շնորհակալ ենք եղել, որ դուք մեր հասարակութիւնը բարոյական լայն հիմքի վրա էք դրել, և հասարակական շահերը մասնաւոր շահերից միշտ գերադասել էք...

Ամբոխի ձայներն եւ Վիգլ. } Կեցցէ՞, կեցցէ։

Որոլ. Այսօր մենք պատուում ենք գլխաւորապէս մեր հակացող, անխոնջ, անկաշառ և ինքնազոհ համաքաղաքացուն, որը մի այնպիսի ձեռնարկութեան սկզբնապատճառն է եղել, որը գործին շատ հմուտ և վստահելի մարդկանց կարծիքով մեր հասարակութեան ծաղկման և բարեկեցութեան մեծ զարկ պէտք է տայ։

Ձայներ. Կեցցէ, կեցցէ, քաղաքապետ Բերնիկ՛ը։

Որոլ. Պարոն քաղաքապետ, շատ տարիների ընթացքում մեր քաղաքի համար իբրև մի լուսատու օրինակ էք եղել։ Ես չեմ ուզում այստեղ ոչ ձեր ընտանեկան օրինակելի կեանքի և ոչ էլ առհասարակ ձեր անբիծ ու բարոյական վարմունքի մասին խօսել։ Բայց ես խօսում եմ ձեր այն քաղաքացիական գործունէութեան մասին, որը ամեն մարդ տեսնում է։ Ձեր նաւագործարանից դուրս են գալիս բազմաթիւ լաւ պատրաստուած նաւեր։ որոնք հեռու ծովերի վրա իրանց դրօշակներն են բարձրացնում։ Բազմաթիւ և երջանիկ բանուորների մի խումբ ձեզ իր երկրորդ հայրն է համարում։ Դուք արդիւնաբերութեան համար նոր միջոցներ էք հնարել և այդպիսով հարիւրաւոր ընտանիքների տնտեսական վիճակը բարելաւել։ Ուրիշ խօսքերով, դուք մեր հասարակութեան նեցուկն և հիմնական արմատն էք կազմում։

Ձայներ. Լսեցէք, լսեցէք, կեցցէ։

Որոլ. Եւ ձեր ամբողջ կեանքի անկաշառ ուղղութիւնը լաւ հետևանքներ ունի, մանաւանդ ներկայումս... Դուք նոյնպէս մտադիր էք մօտիկ ապագայում, թոյլ տուէք առանց ճոռոմաբանութեան միտքս պրօզայական խօսքով արտայայտելու, մեզ համար երկաթուղի շինելու։

Շատ ձայներ. Կեցցէ, կեցցէ։

Որոլ. Բայց կարելի է հաստատ ասել որ մի քանի մարդկանց նեղսիրտ և եսասիրական ակնածութիւններն այդ ձեռնարկութեան համար դժուարութիւններ պէտք է պատրաստեն.

Ձայներ. Լսեցէք, լսեցէք։

Որոլ. Բայց գրեթէ ամեն մէկին յայտնի է, որ մի քանի անձնաւորութիւններ, որոնք իսկապէս մեր հասարակութեանը չեն պատկանում, մեր քաղաքի մի քանի փաստաբաններ հետ առաջուց պայմանաւորուել և մի քանի օգուտներ իրանց են սեպհականացրել, որոնցից իսկապէս մեր քաղաքը պէտք է շահուէր։

Ձայներ. Այո՛, այո՛։ Լսեցէք, լսեցէք։

Որոլ. Այս տխուր փաստը ձեզ էլ յայտնի կըլինի, պարոն քաղաքապետ։ Բայց դուք պէտք է ձեր ձեռնարկութեան համար հաստատ կերպով աշխատէք, լաւ գիտակցելով որ տէրութեան ամեն մի քաղաքացի միայն իր հայրենի քաղաքի օգուտները աչքի առաջ չպէտք է ունենայ։

Ձանազ. ձայն. Հ՞ըմ... Ո՛չ, ո՛չ... Այո՛, այո...

Որոլ. Նա, որին մենք այսօր երեկոյեան մեր յարգանքն ենք ցոյց տալիս, մեր տէրութեան քաղաքացին և համաքաղաքացին է, բաւերիս կատարեալ նշանակութեամբ։ Թող ձեր ձեռնարկութիւնը հասարակութեան համար օգտաւէտ և տևողական լինի։ Երկաթուղին, անկասկած, մի ճանապարհ կը դառնայ։ որտեղով մենք դրսի ՇԱՍակար տարրերը կ՛ստանանք, բայց միևնոյն ժամանակ մի ուրիշ ճանապարհ էլ կը լինի, որով մենք շուտով նրանցից կազատուենք։ Արտաքին ՇԱՍակար տարրերից մենք այժմ էլ մինչև անգամ չենք կարող խոյս տալ։ Բայց ինչպէս ես այս հանդիսաւոր երեկոյ-

եան լսեցի, մենք այդ վաստակաւոր տարրերի մի մասից, սպասածից աւելի շուտով ազատուեցինք...

Ձայներ. Սուս, սուս։

Բոր. Ես ձեր ձեռնարկութեան համար այդ մի լաւ նշան եմ համարում և այդ կէտն այստեղ շոշափում եմ, որովհետև մենք մի այնպիսի տան ենք գտնուում, որտեղ ընտանեկան կապերը բարոյական դաղափարին են ենթարկուում։

Ձայներ. Լսեցէք, լսեցէք, կեցցէ

Բեր. (միեւնոյն ժամանակ) Թոյլ տուէք ինձ...

Բոր. Մի քանի խօսք ևս, պարոն քաղաքապետ։ Դուք անկասկած մեր հասարակութեան օգտի համար առանց որ և է յետին մտքերի էք գործել և ձեր իսկական նիւթական շահն ի նկատի չէք ունեցել։ Մենք հաւոդուած ենք, որ դուք ձեր համաքաղաքացիների յարգանքի հաւաստիքը չէք մերժել, մանաւանդ մի այսպիսի նշանաւոր բոպէում։ երբ մենք մի քանի գործնական մարդկանց կարծիքով մի նոր դարագլխի առաջ ենք կանգնած,

Շաs ձայն. Կեցցէ՝ լսեցէք, լսեցէք։ (Բորլանդը ակնարկում է ծառաներին. նրանք կողովը մօտ են բերում։ Հանդիսի մասնաժողովի անդամները հետեւեալ ծառի շարունակութեան ժամանակ ընծաները վերցնում եւ բարձրացնում են)։

Բոր. Ահա, պարոն քաղաքապետ, մենք ձեզ տալիս ենք սուրճի արծաթեայ սպասներ։ Թող այս սպասները ձեր սեղանի զարդերը լինին և մենք ուրախ կը լինենք։ երբ կարողանանք ձեր յարկի տակ յաճախ միմեանց պատահել։ Դուք նոյնպէս պարոններ, դուք որ այդպէս պատրաստուած կերպով մեր առաջին համաքաղաքացուն միշտ օգնել էք, դուք նոյնպէս յիշաաակի համար մի հասարակ ընծայ վերցրէք։

Այս արծաթեայ բաժակը քեզ համար է, պարոն վաճառական Ռումմէլ։ Դուք շատ անգամ բաժակները միմեանց զարկելով մեր հասարակութեան ջահերը ձեր քաղցրանչիւն խօսքերով պաշտպանել էք։ Ես ցանկանում եմ, որ դուք յաճախ արժանի բոպէներ գտնէք այս բաժակը բարձրացնելու և դատարկելու։ Ձեզ, պարոն վաճառական Ալաշեէտ, տալիս

եմ մեր համաքաղաքացիների լուսանկարներով այս ալբոմը։ Ձեր յայտնի և գնահատելի մարդասիրութիւնը ձեզ այնպիսի մի դրութեան մէջ է դրել, որ դուք մեր հասարակութեան բոլոր կուսակցութիւններում կողմնակիցներ ունիք։ Իսկ ձեզ, պարոն վաճառական Վիգելանդ, ձեր մասնաւոր առանձնասենեակը զարդարելու համար, տալիս եմ այս մագաղաթեայ փառակազմ ժամագիրքը։ Տարիների բարերար ազդեցութեան շնորհիւ դուք իւրացրել էք մի օրինակելի աշխարհահայեցողութիւն։ Ձեր գործունէութիւնը միշտ եղել է բարձր և գաղափարական։ (Դառնում է ամբոխին) Իսկ այժմ ընկերներս, կեցցեն Բերնիկն և նրա աշխատակիցները։ Կեցցեն հասարակութեան նեցուկները։

Ամբողջ ժողովուրդը։ Կեցցէ քաղաքապետ Բերնիկը։ Կեցցեն հասարակութեան նեցուկները։ Ուրրա, Ուրրա, Ուրրա...

Օր. Հես. Շնորհաւորում եմ։ (Լռութիւն է տիրում)։

Բեր. (լուրջ եւ դանդաղ կերպով սկսում է)։ Համաքաղաքացիներս... Ձեր ճառախօսն ասաց, որ մենք այսօր երեկոյեան մի նոր սկսող դարագլխի առաջ ենք կանգնած... և ես հաստատ հաւոդուած եմ որ նրա խօսքերը ճշտում են։ Բայց որպէսզի դրանք իրականանան, մենք պէտք է միշտ այն ճշմարտութեամբ առաջնորդուենք, այն ճշմարտութեամբ, որը մինչև այժմ մեր հասարակութեան մէջ միշտ փայլել է իւր բացակայութեամբ։ (Հանդիսականները զարմանում են)։ Պարոն քարոզիչ, ամենից առաջ ես չեմ ընդունում այն գովասանքը, որը սովորաբար ասում են օրուայ հերոսների մասին։ Ես արժանի չեմ այդ գովասանքին, որովհետև ես մինչև այսօր անկարող մարդ չեմ եղել։ Եթէ ես միշտ նիւթական շահերի ետևից չեմ ընկել, դրա գլխաւոր պատճառն էլ այն է եղել որ ես իմ գործունէութեան ընթացքում երբեմն աշխատել եմ ոյժ, ազդեցութիւն, և հեղինակութիւն ձեռք բերել։

Ռում. (կիսաձայն) Ի՞նչ է այս։

Բեր. Ես չեմ ուզում համաքաղաքացիներիս յանդիմանել, և այժմ կարծում եմ, որ ես էլ ինձ կարող եմ արժանաւոր մարդկանց շարքում դասել։

Շատ ձայներ։ Այո՛ այո՛, այո՛։

Բեր. Բայց մի բան որի համար ես կարող եմ ինձ մեղադրել, այդ այն, է, որ ես իմ գործունէութեան համար փշոտ ճանապարհ եմ ընտրել։ Առհասարակ մեր հասարակութիւնը պատրաստ է մարդուս ամեն մի ձեռնարկութեան համար կասկածել... Բայց այժմ շոշափեմ ամենագլխաւոր կէտը։

Ռում. (անհանգիստ) Հը՛մ... հը՛մ...

Բեր. Այստեղ տարածուել էին այն մեծ կալուածների գնելու վերաբերմամբ զանազան տեսակ լուրեր։ Եւ հենց այդ բոլոր կալուածներն ես գնեցի, այն էլ բոլորովին միայնակ։

Ձիշտուած ձայներ. Ի՞նչ է ասում նա։ Քաղաքապետը, քաղաքապետ Բերնիկը։

Բեր. Նրանք առ այժմ ինձ են պատկանում։ Ի հարկէ այդ բանի գաղտնիքն ես աշխատակիցներիս պատմեցի, այս ինքն՝ Ռումմէլին, Ալտշտեատին և Վիգելանդին, և մեր մէջ համաձայնութիւն կայացաւ։

Ռում. Ո՛չ, այդ ճշմարիտ չէ. ապացոյց... ապացոյց...

Վիգ. Մեր մէջ բոլորովին համաձայնութիւն չէ կայացել։

Ալտշտեատ. Այժմ ես պէտք է խոստովանեմ։

Բեր. Շատ ճշմարիտ է, որ մենք գլխաւոր հարցի մասին միմեանց հետ դեռ չենք համաձայնուել, որի մասին ես ուզում եմ ձեզ տեղեկութիւն տալ։ Բայց ես հաւատացած եմ որ այս երեք պարոններն ինձ չեն հակառակել, եթէ ես ասեմ որ այս երեկոյեան վճռել եմ այդ հողերի համար մի ընկերութիւն կազմել, ով ուզում է կարող է այդ ընկերութեան մասնակցել։

Շատ ձայներ. Ուրրա։ Կեցցէ քաղաքապետ Բերնիկը։

Բեր. Հանգիստ, պարոններ։ Ես իրաւունք չունիմ այդպիսի յարգանք վայելելու, որովհետև այժմ ինչ վճռել եմ, այդ բանը ժողովը չեմ եղել սկզբում անելու։ Ես առաջ մըտադիր էի այդ բոլոր հողերն ինձ համար պահելու և այժմ էլ այնպէս եմ կարծում, որ հողերից կարելի է լաւ օգտուել այն ժամանակ, երբ դրանք մի ձեռքում գտնուին։ Բայց ընտրութիւնը ձեզանից է կախուած։ Եթէ դուք ցանկանում էք, ես պատրաստ եմ այդ հողերի կառավարութիւնն յանձն առնելու։

Ձայներ. Այո՛, այո՛, այո՛։

Բեր. Բայց ամենից առաջ իմ համաքաղաքացիները պէտք է ինձ լաւ ճանաչեն։ Թող ձեզանից իւրաքանչիւրն իրան քննի, որովհետև այսօրուանից մի նոր ժամանակ է ըսկսւում. թող անցեալն իւր կեղծիքով, դատարկութեամբ և ցուցամոլութեամբ մեզ համար մի թանգարանի տեղ ծառայի և բաց լինի ամեն մարդու առաջ։ Այնպէս չէ՞, պարոններ, մենք այդ թանգարանին ընծայենք սուրճի սպասները, բաժակը, ալբոմն և մագաղաթեայ փառակազմ ժամագիրքը։

Ռում. Ի հարկէ։

Վիգ. Բայց դուք ամենագլխաւոր բանը վերցրէք, ուրեմն...

Ալտշտեատ. Խնդրեմ...

Բեր. Ես այժմ պէտք է հասարակութեան հետ ունեցած գլխաւոր հաշիւս վերջացնեմ։ Մի քիչ առաջ ասացին, որ այս երեկոյեան ճաշասակաբ տարբերը այստեղից հեռացան։ Ես մի բան էլ կարող եմ աւելացնել, որ ձեզ դեռ ես յայտնի չէ. այն մարդն, որի վրայ էին ակնարկում, այստեղից միայնակ չ'հեռացաւ... նրան ուղեկցեց և մէկը, որ ուզում էր նրա կինը դառնալ։

Օր. Հեռ. (բարձրաձայն) Դինա—Դորֆը։

Բարդ. Ի՞նչ։

Տ. Բեր, Ի՞նչ ես ուզում։ (Հանդիսատես ամբոխի մէջ իրարանցում է ընկնում)։

Բարդ. Փախել է, հեռացել է նրա հետ... այդ անկարելի է։

Բեր. Նրա կինը դառնալու, պարոն քարոզիչ։ Բայց ես դեռ մի բան ունիմ աւելացնելու. (կամաց) Բետի, պատրաստուիր լսելու այն, ինչ որ ես այժմ պէտք է ասեմ։ (Բարձր ձայնով) Ես ասում եմ խոնարհուենք այդ մարդու առաջ, որովհետև նա մեծահոգութեամբ ուրիշի մեղքն իր վրա է

վերցրել։ Համաքաղաքացիներս, ես ուզում եմ ստելուց խոյս տալ։ Սուտը քիչ էր մնացել, որ բոլոր նեարդերս թունաւորի։ Դուք պէտք է ամեն բան իմանաք։ Տասն և հինգ տարի առաջ մեղաւորը ես էի։

Տ. Բեր։ (հանդարտ եւ դողալով) Ռիչարդ։

Օր. Բեր. (նոյնպէս) Ա՜խ, Յովհաննէս...

Օր. Հես. Վերջապէս դու ինքդ քեզ նորից գտար։ (Հանդիսականները զարմանում եւ լսում են)։

Բեր. Այո, համաքաղաքացիներս, մեղաւորը ես էի և նա թողեց հայրենիքը։ Իսկ այն չար և սուտ ձայները, որոնք յետոյ այստեղ տարածուեցան, այժմ էլ կարիք չկայ հերքելու։ Բայց տասն և հինգ տարի առաջ ես այդ ձայների շնորհիւ բարձր դիրք ստացայ։ Եթէ ես այժմ այդ բարձրութիւնից պէտք է ընկնեմ, այդ էլ ձեր վճռելու գործն է։

Բարլ. Ինչպիսի՜ հարուած է... քաղաքի առաջին մարդը... (Հեզ կերպով տիկ. Բերնիկին) Օ՜հ, ինչպէս ես ձեզ համար ցաւում եմ, ողորմած տիկին։

Հիլմ։ Մի այդպիսի խոստովանութիւն... ես պէտք է ասեմ, որ.....

Բեր. Բայց խնդրեմ այսօր երեկոյեան ոչ մի վճիռ չարձակէք։ Ձեզ ամենքիդ էլ խնդրում եմ տուն գնացէք և մտածելով ձեր խիղճը քննէք. երբ դուք ձեր խիղճը կը կարողանաք հանգստացնել, այն ժամանակ միայն յայտնի կը լինի, թէ ճշմարտութիւնը խոստովանելով ես մի բան կորցրի՞, թէ շահեցի։ Յոհեսութիւն ուրեմն, բարի գիշեր։ Ես դեռ շատ-շատ բան պէտք է զղջամ և քաւեմ։ Այդ իմ խղճի գործն է։ Հեռացրէք ինձանից այս փքուն հանդէսն և զարդարանքները, որովհետև մենք բոլորս էլ զգում ենք, որ այդ հանդէսի տեղը այստեղ չէ։

Բարլ. Ի հարկէ, ոչ։ (Մեղմ կերպով Տ. Բերնիկին) Փախեմ է։ Ուրեմն նա ինձ համար արժանի չէր (հանդիսի մասնաժողովին) պարոններ, իմ կարծիքով այս միջադէպքից յետոյ աւելի լաւ կը լինի հանդիսաւոր կերպով հեռանալ։

Հիլմ. Ի՞նչպէս կարելի է այժմ գաղափարի դրօշակը

բարձր պահել... Օ՜հ... (Քաղաքապետի տուած տեղեկութիւնը դրեթէ բոլոր հանդիսականների մէջ տարածուել է։ Նրանցից շատերը պարտիզով հեռանում են. Ռումմէլն, Ալտշտէտն եւ Վիգելանդը միմիեանց հետ տաք բայց մեղմ կերպով վիճելով, դուրս են գնում։ Հիլմարը դաղտագողի կերպով հեռանում է։ Քաղաքապետը, տիկ. եւ օրիորդ Բերնիկները, Օր. Հեսսեն եւ Քրապը սալոնում լուռ կանգնած սպասում են)։

Բեր. Ների՛ր ինձ, Բեատի։

Տ. Բեր. (ծիծաղելով, նրան նայում է). գիտե՞ս Ռիչարդ, դու ինձ համար այսօր ինչ լուսաւոր ապագայ ստեղծեցիր։

Բեր. Ինչպէ՞ս...

Տ. Բեր. Ես մի քանի տարիներ շարունակ կարծում էի, թէ դու մի ժամանակ ինձ ես պատկանել, իսկ յետոյ ես քեզ կորցրել եմ։ Միայն այժմ ես իմացայ, որ դու մինչև այժմ բոլորովին ինձ չես պատկանել։ Բայց այսուհետև դու իմս կլինիս։

Բեր. (գրկում է նրան) Օ՜հ, Բեատի։ Ես քեզ եմ պատկանում։ Ես Լոնայի շնորհիւ եմ քեզ հետ ծանօթացել։ Բայց թող այժմ Օլաֆը այստեղ գայ։

Տ. Բեր. Այո, այժմ նա այստեղ կը լինի։ Պարոն Քըրապ... (Բեմի խորքում նրա հետ մեղմ կերպով խօսում է։ Յետոյ Քրապը պարտիզի դռնով դուրս է գնում։ Հետեւեալ խօսակցութեան ժամանակ, տան բոլոր ծրագները հետզհետէ հանդցնում են)։

Բեր. (նեղուելով) Շնորհակալ եմ քեզանից, Լոնա, դու իմ մէջ և ինձ համար ամենալաւ բանը փրկեցիր։

Օր. Հես. Միթէ ես ուրիշ բան էի ցանկանում։

Բեր. Այո՛, թէ ոչ։ Ես քեզ չեմ հասկանում։

Օր. Հես. Հը՜մ...

Բեր. Ուրեմն դու ինձ չէի՞ր ուզում։ Կամ չէի՞ր ուզում վրէժխնդիր լինել։ Ինչո՞ւ եկար այստեղ,

Օր. Հես. Հին սէրը չի մոռացւում։

Բեր. Լոնա։

Օր. Հես. Երբ Յովհաննէսը ինձ գործի իսկական դրութեան հետ ծանօթացրեց, և ճշմարտութիւնը խոստովանեց,

այն ժամանակ ես երդուեցի, որ իմ երիտասարդութեան հերոսը պէտք է ամենքի առաջ ազատ և ճշմարիտ լինի։

Բեր. Բայց ես իբրև մի ողորմելի մարդ դրան արժանի չէի։

Օր. Հես. Այո, եթէ մենք կանայքս միշտ արժանաւորներին ի նկատի ունենայինք, Ռիչարդ... (Աուլէրը Օլգիի հետ միասին պարտիզից ներս է մտնում)։

Բեր. (դէպի նրան գնալով) Օլգի։

Օլգի. Հայրիկ, ես քեզ խոստանում եմ, որ երբէք...

Բեր. Չփախչի...

Օլգի. Այո, հայրիկ, ես խոստանում եմ։

Բեր։ Իսկ ես խոստանում եմ, որ քեզ ոչ մի ժամանակ առիթ էլ չեմ տալ, որ դու այդպիսի քայլ անես։ Այժմուանից սկսած դու պէտք է մեծանաս ոչ իբրև իմ կեանքի նպատակի ժառանգը, այլ իբրև մի մարդ, որը ինքն է կեանքի նպատակը փնտռում։

Օլգի. Ուրեմն ես էլ կաշխատեմ այնպէս մարդ դառնալ, որպիսին ես սիրով կը ցանկանայի։

Բեր. Այո, դու այդ կարող ես անել։

Օլգի. Շնորհակալ եմ քեզանից, հայրիկ, այն ժամանակ ուրեմն ես չեմ ուզում հասարակութեան նեցուկ դառնալ։

Բեր. Այդպէս, ինչու։

Օլգի. Իմ կարծիքով այդ բաւական տխուր և ձանձրալի կը լինէր։

Բեր. Օլգի. դու պէտք է աշխատես կանոնաւոր մարդ դառնալ, իսկ մնացածը, այդ էլ Աստուած կըկարգադրի. իսկ դուք, Աուլէր...

Աուլ. Ես արդէն գիտեմ, պարոն քաղաքապետ, կարծեմ ես հրաժարեցրուած եմ, այնպէս չէ՞։

Բեր. Ո՛չ, մենք միասին կը լինինք, Աուլէր, ներեցէք ինձ...

Աուլ. Ի՞նչպէս... Բայց չէ՞ որ շոգենաւը այսօր երեկոյեան ծովը չ՚մտաւ։

Բեր. Առաւօտեան էլ չ՚պէտք է մտնի։ Ես շոգենաւի նո-

րոգութեան համար շատ քիչ ժամանակ նշանակեցի։ Պէտք է այդ նաւը հիմնաւորապէս նորոգել և քննել։

Աուլ. Թողէք այդպէս լինի, պարոն քաղաքապետ, և մինչև անգամ կարող եմ նոր մեքենաների միջոցով շոգենաւը քննել։

Բեր. Շատ լաւ, Աուլէր։ Բայց կրկին խնդրում եմ նաւի նորոգութիւնը հիմնաւոր կերպով կատարել, որովհետև այդպիսի նորոգութիւնը սովորաբար երկար ժամանակ է պահանջում։ Դէհ, բարի գիշեր, Աուլէր։

Աուլ. Բարի գիշեր, պարոն քաղաքապետ, շնորհակալ եմ, հազար անգամ շնորհակալ։ (Աջ կողմով դուրս է գնում)։

Օր. Հես. Այժմ բոլորը դուրս գնացին։

Բեր. Մենք միայնակ ենք։ Անունս այլևս հրաւառ տառերով չէ լուսաւորուում։ Լուսամուտների բոլոր ճրագները արդէն հանգցրել են.

Օր. Հես. Կ՚ցանկանայի՞ր դու, որ ճրագները նորից վառէին։

Բեր. Աշխարհիս ոչ մի գնով։ Ի՞նչ էի ես։ Եթէ դուք այդ իմանայիք, այն ժամանակ կըսարսափէիք։ Ինձ այժմ այսպէս է թւում, կարծես թէ թունաւորուեցայ, յետոյ կրկին վիտակցութիւն և հանգստութիւն եմ ձեռք բերել։ Բայց ես զգում եմ... զգում եմ որ նորից կարող եմ երիտասարդ դառնալ և առաջանալ։ Օ՜հ, եկէք, եկէք ինձ մօտ և միացէք։ Մօտեցի՛ր, Բետտի՛, դու էլ, որդիս, Օլգիս, դու նոյնպէս Մարթա, կարծես թէ այսքան տարիների ընթացքում քեզ բոլորովին չեմ նկատել։

Օր. Հես. Այո, ես հաւատում եմ, դու նրան չես նայել։ Ձեր հասարակութիւնը կանանց առհասարակ չէ նկատում,

Բեր. Շատ ճշմարիտ է, և հենց դրա համար էլ, Լոնա, դու իմ և Բետտիյի մօտ պէտք է միշտ մնաս։

Օր. Հես. Ճշմարիտ է, և ինչպէս կարող եմ ձեզ նման նոր կեանք սկսող երիտասարդ մարդկանց թողնել և հեռանալ։ Մի՞թէ ես ձեզ համար իբրև մի հոգացող մայր չեմ եղել։

Ես և դու, Մարթա, հին մօրաքոյրեր ենք։ Ինչու՞ ես այդպէս նայում։

Օր. Բեր. Ինչպէս երկինքը պարզվում է։ Ծովը փառաւոր կերպով լուսաւորուեց։ «Արմաւենի»ն շատ բախտաւոր է։

Օր. Հես. Այո, շատ ճշմարիտ է։

Բեր. Իսկ մենք... մենք պէտք է պատրաստուենք երերկարատև և լուրջ աշխատաւոր կեանքի համար։ Թող սկսուի այդ կեանքը, իսկ դուք ճշմարիտ և հաւատարիմ կանայք. միացեք հաստատ ինձ հետ։ Միայն այսօր ես համոզուեցի, որ կանայք հասարակութեան նեցուկներ են։

Օր. Հես. Բայց ոչ, մի թոյլ իմաստութիւն, այդ ուղիղ չէ, Ռիչարդ։ (Ձեռքը նրա ուսի վրայ է դնում)։ Ո՛չ, ո՛չ.... Ազատութիւն և ճշմարտութիւն—ահա հասարակութեան իսկական նեցուկները։

ՎԱՐԱԳՈՅՐ.

ՀՍՍՀ-Արա.ՍՍՀ
Ա. ԱՄ. A. Մեհրաբյան
Մեհրաբյան

Հ. ՍՈՍԱԲԵԼԵԱՆԻ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐՔԵՐԸ

1. Անդերսընի Հէքիաթները, պատկերազարդ, գինն է 50 կ.
2. Արբեցողութեան դէմ . . . . 15 կ.
3. Ճապոնիա—քարտէսով. . . . . 25 կ.
4. Հանրագիտական բառարան (մամուլի տակ)
5. Հայկական Տպագրութիւն . . . 1 ր. 20 կ.
6. Անգլիայի հասար. և քաղաքական կեանքը 15 կ.
7. Դէպի Արարատ . . . . . 40 կ.
8. Հասարակութեան նեցուկները, դրամա 4 գործ. Հ. Իբսէնի . . . . . 50 կ.

ԳԻՆՆ Է 50 Կ.

Դիմել—Գրավաճառներին կամ հրատարակչին («Մշակի» խմբագրութիւն)

10n2

<< Ազգային գրադարան
NL0171324

18